ԸՆՏԻՐ

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

---

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑ



# Ս. ԳՐԻԳՈՐԻ
Նարեկացւոյ
# Ողբերգութիւն



Ի ՎԵՆԵՏԻԿ
1851

A
1191

# ԳՐԻԳՈՐԻ
## ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ
### ՎԱՆԱԿԱՆԻ
# ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ

ՌՅ

A / 1191

…ՆՆԵՐԻ
…ԳՐԱԴԱՐԱՆ

## ԳՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈԳՆԱԲԱՒԱՆՉ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ
ԱՊԱՌԱԺԱՆԱՑ ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՈՒՑ
ԱՆՁԻՆ ՍՏԳՏԱՆԱՑ
ՃՂՃԱԿԱՆԱՑ ԿԱՆՈՆԱՑ ԿԵՆԱՑ
ԿԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆՑ
ԱՆԵՐԵՒՈՒԹԻՑ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ՄԵՂԱՆԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ
ՑՈՒՑՄՈՒՆՔ ԳԱՂՏՆԵԱՑ
ՏԱՐԱԾՄՈՒՆՔ ԾԱԾԿԵՑԵԼՈՑ
ՑԱՆԳԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԹԱՔՈՒՑԵԼՈՑ
ՍՊԵՂԱՆԻՔ
ՋՕՐԱՒՈՐՔ ՎԻՐԱՑ ԱՆԲԺՇԿԱԿԱՆԱՑ
ԴԵՂՔ
ԱԶԴՈՂԱԿԱՆՔ
ՑԱՒՈՑ ԱՆՏԵՍԱԿԱՆԱՑ
ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ
ԲԱԶՄԱՄԱՍՆԵԱՑ ԵՐԿԱՆՑ ՎՏԱՆԳԻՑ
Ի ԴԻՄԱՑ ԿԱՐԵԱՑ
ԱՄԵՆԻՑ ԲՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԻԹՔ
ԱՐՏԱՍՈՒԱՑ
ՊԱՏՃԱՌՔ ԱՂՕԹԻՑ

Ի ԽՆԴՐՈՅ
ՀԱՅՑՄԱՆՑ ՀԱՐՑ ՄԻԱՆՁԱՆՑ
ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ ԱՄԲՑԵԱԼ.

# ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

# ԳՐԻԳՈՐԻ

## ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

# ԳՐԻԳՈՐԻ

## ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

# ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԲԱՆ Ա.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Ձայն հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայեալ, տեսողդ գաղտնեաց. և մատուցեալ եդեալ ՚ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զպտուղ ըղձից ձենձերոյ տատանեալ մտացս բուրվառաւ կամացս առաքել առ քեզ։ Այլ հոտոտեսցիս հայեսցիս, գթած, քան ՚ի պատարագն բոլո-

բարպատող մատուցեալ ծխոյն բար-
գութեան ։ Ընկալ զանկատարա-
նեայ բանիցս յօդուած քեզ 'ի հա-
ճոյթիւն , և մի 'ի բարկութիւն.
եւցէ 'ի խորոց սրտի զգայութեանց
խորհրդականք, սենեկին՝ վաղվաղակի
ժամանել առ քեզ՝ կամաւորական
նուէր բանական զոհիս , ողջակի-
զեալ գթութեամբ Ձարդոյ՝ որ յետ
է պատարագութիւն ։ Եւ 'ի գնել իմ
ընդ քեզ գառն խառնեալ աղերսիւ,
հզօր , մի խզեր զհամբարձումն ձե-
ռաց ամբարշտեալն Յակոբու , բառ
բաղդեալոյն Եսայեայ, և զանխիբուռու-
թիւն Բարեկենի՝ տարակայն քեզ և-
րևեցի . զոր առակ եւթանանե-
րորդի երկրորդի առաքմանն ազգէ .
այլ իբր զբուրեալ խունկն համբոյա-
կան 'ի խորանին Աբելայ , զոր Դու-
ւխթն կանգնեալ նորոգեաց տապա-
նակին համգստեան 'ի գերութենէն
դարձելոյ , որ 'ի վերանին գիւտ կո-
բուսեալս հոգւոյ առակի , ընդու-
նելի կամաց քոց լիցի ։

Բ. Բայց քանզի ձայնդ ահաւոր
դատաստանիդ հատուցմանն՝ ուժ-

գինս հնչեցեալ 'ի ձայն վեհափառ-
գրութեան, կրկին ինձ երկնէ մար-
տից յարուցմունս, այժմէն գուշա-
կեալ շարժմունս յուզմանց ներհա-
կականաց, որ յիմնումն անձին ցուցա-
նի, խռովութիւնս ամբոխից, հա-
րեալք ընդ միմեանս զէն առ առաւել՝
խորհրդոյն հոյզք, շարեալն ընդ բա-
րիսն, և գերեալ զիս 'ի մահ բան հին
գիտուածոյն՝ որ նախ քան զնորհին
ժամանել առ իս. զոր ընթերցող ա-
ռաքելականացն դասուց Պաւղոսի՝
առօրինակեալ զՄովսէս, զՔրիստո-
սի փրկութիւն յաղթող ցուցանէ։
Վասն զի թէ մեծ է որ ասէ աւանդն, որ-
պէս գիր ասէ, 'ի հոգւոյն անձուկ
աստուածաբանին Յովհաննու և հեղե-
ղատին Կեդրոնի, փոքր հանդիսա-
նացն իրաւանց ժամանդրութեանց,
որ կենցաղականաւս այսր յաւիտենի-
ց հանդերձելոցն ինձ կերպարանեն,
ապա եւ յաւէտ մերձեցաւ 'ի վերայ
իմ աստուածութիւնն Աստուծոյ մար-
մին եղելոյ. մեծապէս գովեալ զնա
առ ինձ հասուց՝ բարձման առաքելոց՝
զանազան մասանց յանդիմանողաց

Յուդայ, կշտամբեալս գեր քան ըզ-
Ծուր, տարամերժեալս քան զԾոյ-
գան, խորթարարեալս քան զԳայի-
լեա, աններելիս քան զանհաւանն
Կափառնաում, պարսաւեցեալս իբր
զՔորազին, բամբասեցեալս ընդ
Բեթսայիդայ, անպարկեշտ ծաղկե-
ցեալ ալխս Եփրեմի, աղու ապաւինս
մէջ յիմարութք՝ այլ ոչ հանդար-
տութեամբ, 'ի կորեանց աւխծուց
անձնական ոձս եղեռնային. կերպս
ձուոյ քարրից լցեալ ժանտու-
թեամբ, պատկերս վերջին հարուա-
ծոցն Երուսաղէմի, ըստ բանին ան-
բունի՝ և անսանողացն ձայնի, տա-
ղտապս մերժեալ՝ հասեալ 'ի կոր-
ծանումն, խորտակեալ գլխոյս վտա-
հարան, և կրկին ծրդեալ չինուածս
խոտուն, թողեալ ժառանգութիւնս
յարմարական, մնացեալ տունս
աստուածակերտ, ըստ բանից նախա-
գրեցելոցն Մովսէսի, Դաւթայ և
Երեմիայ, յարկս բանական՝ անոգս
բարստութեան, հարուածեալ խոր-
տաբերմանն, օրինաց կազդուրեալ-
ածեալ կառման՝ ողորմական հեղու-

թեամբն, անձնական գտեալ յելս հնարից. բակեալ վերաբն ձեռամբ չքնաղին, որպէս ընկեցեալ խրամացի հաստատեալ հրամանաւ հզօրին 'ի տեղի անտառուր, հերքեալ տարագրեալ խառնաղաւ մեծաւ՝ ամենայնիւ առանց խնայելոյ, ծածկեալ գրամա յերկրի չարեօք, բառ աւանդակարոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի ։

Բ. Այլ դու Աստուած, Անձհոգւոյ և ամենայն մարմնոյ՝ բառ դաւանելոյ աստուածաշնորհին, երկայնամիտ և բազմողորմ՝ բառ սըրբոյն Յովհաննու ձայնին, չնորհեա կատարել 'ի քոյդ հանճարի օրհնեալ կամաց՝ զվկրճնաւորեալ մասնան մաղթանաց այսր ողբերգութեան ։ Եւ ընդ բաղդ ակրմանել բանիս 'ի նախընթաց չու աստիճանաց օթեւանաց պատարաստութեան, 'ի կատարածն ժամանելոյ հաւաքման հընձոցն, զարձայց ընկղկեցեալ ըրութեամբ բառութեան՝ պայծառն երանութեան որոյքն բարութեան ։ Մի տայց և ինձ արդանդ սրտի անօրդի՝

իբր խորայելի, և առնես աչաց ցամա-
քեալս՝ ով ամենագութ: Նոր բա-
նականն մաղթողիս՝ հզօր և ողորմած,
նախ քան երկնի, և երկնին երկրի, և
նոա ցորենոյ և գինւոյ, և ձիթոյ, և
նոքա խորայելի: Եւ երկնաւորացն
ազգիս որ առ քեզ՝ հոգևոյս ազգե-
ցէ, քան թէ մարմնոյ ապականա-
ցուաց: Դու ստեղծիչ՝ և ես կաւ,
բաց ապականութեանս 'ի մուտս մաղ-
թանաց այսր հեծութեան՝ կամս
քաղցրութեան՝ զօրանալ առաջն.
զի մի 'ի բանալ վերնայինն երկնի՝ ան-
ձնակր գտեալ կրթութեան վայել-
մանն լուսոյ, իբր զնիւթ մամոյ ապա-
ռեցայց ջնջեալ 'ի միջոյ: Որդի զեկե-
ղոյս, բաց մաղթանաց գոչման առա-
ջին, և ոչժ թակուցելոյս, և կեանք
մաշելոյս՝ մատոյց խղճիւ, այլ ոչ առ-
ժանմանք կրից՝ աշխատութեանք
զգեղ խնդրելոյ, առ զառանց մաղ-
թանացս, և տուր զողորմութիւն քո
շնորհացդ. ընկալ զփարս 'ի տկա-
րես, և շնորհեա զնեծդ առ 'ի հզօ-
րեդ. զորացս զբանս գղջման, առա-
քեալ 'ի մեզ հոգի 'ի բարձանց՝ առ-

տուածաշունչ պատգամօքն 'ի սմա
եգեղեցւոյ: Պարգևեաց բարերար' զա_
ռակն Եսայեայ. լուսաւորեալ առ
ճշմարտութիւնն , մատուցանելով
մահու արժանոյ' ընդ աղձնոյ գոյի
անարգս ձայնի' զանկի քո շնորհի,
ընդ անզարդութեան երկաթոյս ակ_
նութեան գունոյս' ազինձ ապանելի,
ցոյցք առաքինութեան, հրաշէկ կե_
րանանու. ընդ էր կարծրացուցանեա
զախրս եղկելոյս' չերկնչել 'ի քէն,
անձնառ և ահաւոր: Մի եղեց անպտ_
տուղ 'ի փողը վաստակոյս' իբր սպա_
ջան սերմանող անբերրի երկրի: Մի
լիցի ինձ երկնել և ոչ ծնանել, ողբալ
և ոչ արտասուել, խորհել և ոչ հա_
ռաչել, ամպել և ոչ անձրևել, ընթա_
նալ և ոչ հասանել, ինձ ձայնել և
քեզ ոչ լսել. պաղատել և անտես_
նալ. կողկողել և ոչ ողորմիլ, աղա_
չել և ոչ ինչ օգտել, գոչել և ոչ ձեն_
ձերել. զքեզ անտանել և զատարկ
երանել: Նոր ինձ նախ քան զկոր_
ծալս խմ առ քեզ' միայնոյ հոգւոյ. մի
զանմնայր անտեքանոյն առաջի' ընդ
թուով աւուրց մեղաց կեցելոյս չա_

բարգործիս ինձ հատուցանել: Կեցո զիս զԹած, լուր ինձ ողորմած, մարդասիրեա ներող, խնայեա երկայնամիտ, պաշտպանեա ապաւէն, բարերարեա հզօր, ազատեա ամենակալ, կենագործեա նորոգող, վերականգնեա աջաւոր, լուսաւորեա երկնային, բժշկեա հնարաւոր, քաւեա անքննին, պարգեւատրեա առատ, շնորհազարդեա անախանձ, հաշտեա անոխակիր, ընկալ անոխակալ, որբեա 'ի պարտուց օրհնեալ: Եթէ յառեցից զաչս իմ, նայեցեալ 'ի հայեցուածս երկուց վանանցից յաւուր Թշուառութեան, զգոյգ անալից փրկութիւն՝ յոյս և խնամակալ. եթէ նկատեալ գիտեցից 'ի վեր յամենագրաւ ուղին առակալի, հրեշտակ քո խաղաղութեն քաղցրութեամբ ինձ պատահեսցէ: Ցոյց ինձ անէր 'ի յելիցն աւուր շնչոյս արձակման՝ մարրութեան ոգի լուսով ամբարձեալ 'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգևուք սիրոյ քոյ եկեալ հասեալ: ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կցորդ ժառանգեցուսցես, զան-

անհնարին բարի՝ չարիս ՚ի յուսահա_
տութեանն աւուր շնորհեսցես ։
Քաւ լիցի քեզ, բարերարեալ, որ
փրկութիւնդ ես ամենայնի, եթէ
ապաստանելոյ քո ողորմի՝ դադան
գծնդակ ասացես ուղեկից, մերք մե_
ռելոյս անմահ կեանք, կործանե_
լոյս պատուեալք՝ փրկութիւն ։

Գ. Արդեւք մտաւորին զբարերա_
րեալդ՝ անհնարութիւն անտանելեցես
զթշուառելդ՝ խնամոց. այպանեսցես
զմարդասիրելդ՝ անփոփոխ. Նշան_
ջեսցես զկենդանարարելդ՝ անվախ_
ճան. թողուցուս զողորմութիւնդ՝
երջանիկ պատուղ. աղաւաղեսցես
զառատութեանդ բարեշնորհ ծա_
ղիկդ. անպատուեսցես զնիւթ պան_
ծանոց քումդ Ճոխութեան. յեղա_
նակեսցես զփառս հերոյ քումդ
բարձրութեան. ոչ պահեսցես ըզ_
վայելչական զարդ պայծառութեան
քումդ պսակի ։ Եթէ ողորմածացն
է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ
ողորմութիւն լցեալ փափկութեամբ,
ոչ զբոլորին պարգեւեսցես փրկու_
թիւն. ոչ մատուցանիցես զերդ մի_

A / 1191
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

րացս, ո՛չ ապերախտս խոցուածոյս, ո՛չ զարմանն ակարութեանս. ո՛չ ծագեալս լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօրութենէդ՝ կենաց պարգեւ աւելեաց, որ միայնդ ունիս փառս ինքնութեամբ իսկութեամբ և յարակայ միանձնաւորութեամբ, վկայեալ 'ի բնաւից, օրհնեալ և փառաւորեալ յերկս յաւիտեանս, և անդրքան զպայման սահմանի խմանալեացն յաւիտենից, ամէն:

## ԲԱՆ Գ.

Վերստին յաւելուած երկին հեծութեան Նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Տէ՛ր խնամոց առիթ պարգևաց, ինքնարարն բարի, ամենից ախորժ հաւասարապէս, միայն արարիչ րղ-բնաւս յոչէից, փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու; առակալի, հզօր, առատիկ, անսահմանելի, անմեր-

ձենալի, անըմբռնելի, անիմանալի, անձառելի, անտեսանելի, անզննելի, անշօշափելի, անորոնելի, անսկիզբն, անժամանակ, անշամանդաղ գիտութիւն, աներկեան անստութիւն, Ճշմարիտ էականութիւն, բարձր և խոնարհ, օրհնաբանեալ գոյութիւն, անստուեր ծագումն, ամենափայլ Ճառագայթ, խոստովանեալ լոյս, անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ, անյեղլի կնիք, անսահմանելի անոխ, վկայեալ անուն, Ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան, հաստիչ հոգւոյ հաց, տուող մխթութեանց սէր, աներկբայ խոստումն, ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ, օթոց բաղձալի, զարդ փառաց, ձեռընկալու մեծ, ապաւէն զօրեալ, աննուաղելի շնորհ, անպակասելի գանձ, անապական անձրև, արփիայնցուղ ցօղ, ամենատեղաց դեղ, ձրի բժշկութիւն, կենսաձիր առողջութիւն, վեհագոյն խրախոյս, անպատիր կոչումն, համօրէն աւետիս, արքայամեծար թա-

գաւառ, ազգաստանէր պաշտպան, մշտահարուստ տուիչ, անխափան գթեկցութեան, աննահանջելի հրաման, անհամեմատ յոյս, երկար տեւո-ղութիւն, անզղջական տուր, ամե-նաբաշխ աջ, արդարակշիռ ձեռն, անաչառատես ակն, մխիթարու-թեան ձայն, սփոփանաց լուր, բեր-կրութեան բերումն, անուն կեն-դանի, նախախնամող մասն, ան-գայթագղելի ելք, անխարդախ ըն-թացք, կենդանարար կամք, աննեն-գելի խորան, աննախանձ պատուի, լայնական հնարք, անձկական պայ-ման, անդառնալի հետք, աներեւոյթ շաւիղ, անչափագիր պատակեր, որ-քանութիւն անսահման, աննմա-նական ափոյ, անզուգական գութ, ողորմութիւն բազմադեղ, խնամ-հութն առնելի, համբոյր փրկական։ Նա եւ քան զայս ազդմունք վայել-չականք՝ աստուածութեան նուի-րելիք. ողորմեալ, գթեալ, բարե-րանեալ, քաղցրեալ, աւետարա-նեալ, հաշտեալ, հնչեցեալ, պատ-մեալ, անխառնելի կամօք աղաչեալ,

և որ ինչ առ մեզ բերին առ 'ի քէն համանգամ քաղցրութեան, զոր համ- գերձելոցն ձևաւորութեանն կեր- պաւորութիւնք. որով զուարթ ցու- ցանիս 'ի փրկութիւն իմ, երանու- թիւն, իբր 'ի պարարտութենէ ի- միքէ անոյշ անձնանց լցեալ. զի ոչ իմիք ինչ անտախտապատուասա փառաւորիս երգով, այլ զի պատճառ իմն առցես զփոքրս ագէրս՝ մեծիդ փրկանաց։

Բ. Նուագեցաւ ամենայն հասակ անկեցեալ յերկիրն աղաղականաց՝ այս պատուէր նկարագրական նո- րոգ մատենի ողբոց նուագի, որ զա- մենեցունց ունի զկերպ պատահմանց նշանակեալ յիւրում պատկերի. իբր կցորդ մեծ գիտականական կարևոր հա- մայնից, առ բոլոր գումարս բազ- մահոյով անխեղերականայարգարանէից, առ ծածկի ժամն ժամանակաց, և առ երկրորդ կոչեցեալ չափու արրուն, առ որ 'ի կատարած աւուրն կա- լեալ՝ սակաւաձևոն ծերութեանն, առ պատառուսա և արգասս, առ ինքնարգոյ բարեհրաշեան և սփռեալ

անձնադատ դաւալն , առ բարին և եղեռնագործս , առ նկունս և առ արիս , առ արբուկս և ներքոյանկեալս , առ ներդուհս և գերաշխարհիկս , միջակայնոց և պայազատաց , չինականաց և առհամկանաց , արուաց և իգաց , հրամայողաց և հնազանդելոց , գերելոց և նուաստից , վեհից և փոքունց , պատուականաց և ռամկաց , ձիավարժից և ասուկականաց , քաղաքականաց և գեղջկաց , արքայից դոռոզութեանց 'ի սանձս աշխարհին ըմբռնեցելոց , միայնացելոց՝ վերնականացն խոտակեաց . մաքրականաց ախրանուէր զգաստութեանց , քահանայական երջանկակրօն ընտրութեանց , այցելութեանց բարեզգեստից դիտողութեանց , աթոռակալութեանց նախագահից որբանուէր անտողութեանց . որոց ոմանց աղերս աղաչանաց , և ոմանց խրատ բարեաց առ դէմս աղօթից այսու մատենիւ մատակարարեցի , ձեռնարկեալ հոգւոյդ զօրութեամբ՝ կարգել ինձ մաղթանս բազմադիմիս , և ամենեցուն ազգին խնդրուածս՝

գթութեան մեծիդ յանդիմանն լի-
նել առաջի հանապազ:

Դ. Եւ արտասուս զայն ընթերցա-
գոյն 'ի սիրտ յատակս' բժշկու-
թիւն հոգւոյ և մաքրութիւն յան-
ցանաց, թողութիւն պարտուց և
արձակուրդ մեղաց կապանաց: Ե-
ղիցի բղխումն արտասուաց առաջի
վարժելոցն, և պարգևեալ տացի 'ի
ձեռն սրբին աղաչաւ ըղձից: Շնոր-
հեսցի տէր և ինձ ընդ նոսին առ 'ի
քէն զղջումն կամաց, և նոցա խմոր
ձայնիւ շունչս բարեհամբոյրս. նուէ-
րեսցի վասն իմ այսու մատենիւ պա-
ղատանք նոցին, և բանիւս այսու
հեծութիւնք նոցին ընդ իմ խնկեա-
ցին: Ընդ համբոյր ճաշակման այսր
ողբերգութեան, շնորհ լուսոյ քոյ
մանեալ բնակեսցէ: Եթէ եղեն ինձ
բարեպարիշտք ընծայիլ առաջի, ըն-
կալ կենդանեացն վասն քո, գթած,
և զիս ընդ նոսին. եթէ առնուս ինչ
որբանուէրս կաթուածոյ աչաց առ-
միսքն բերիցի, եղիցի 'ի քէն խնամա-
կալ՝ և յիս անձրևեալ. եթէ գրեսցի
և 'ի փրկութիւն կարդեսցի հաղոր-

գեղոյն յայս կիրս կենաց, արասցես կամաւ քո որջնեալ՝ և ինձ համարեալ։ Եթէ հեծութիւնս աստուածահաճոյս ՚ի ձեռն այսր բանի ՚ի դապանեաց ուրուք յառաջ եկեսցէ, սգանեցայց քեզ բարձրեալ՝ և ես ընդ նմին. եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդերձեալ առ քեզ համբարձցի, հասցէ միասցի ընդ խնկս ձայնի և աղաչօղացն աղերս յառաջ մատուցեալ։ Եթէ պաղատանս բաղմացի միս ընդ խնկս երկնեսցի, ելցի և ինձ քեզ և փառն ասրին կրկին նուիրեալ. եթէ յարդեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ ՚ի հաճութիւն. նախայլոյն ընդ իս քեզ ընծայեսցի. Եթէ ՚ի տխրանաց ինչ ձանձրութենէ որ նուաղեսցի, կանգնեսցի վերստին հաստատութեան այս հառաչանաց՝ ՚ի քեզ յուսացեալ. եթէ համբարտան վստահութեան մեղք յառակի, ասու արձանք պատկանեցելոցս աջով քո պաշտպանն՝ դարձեալ կառուսցի։ Եթէ յուսայն ձգարան ասերըն յանցանաց հասանեալ կարեսցի կցեսցի դարձեալ միւս անդամ կամօք

ամենակալին բարւոք պատուա-
սեալ. եթէ վասնզի մաչու անձնա-
կան ցաւոյ զոք պաշարեսցէ, գտցէ
փրկութիւն առժամ առ 'ի յոյս կենաց՝
յաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ
տագնապաւ որ տարակուսի 'ի սիրտ
խոցիցի, քաղցրութեամբ քո՝ առժամ
ապրեալ ողջասցի: Եթէ անքաւելի
կորստեամբ պարտեաց՝ յանդուգնս
որ խորոց իցէ ընկլուզեալ, եկեսցէ
'ի լոյս կարթիւ այս հնարից՝ քո
պատսպարեալ. եթէ թմբրութեամբ
խաւարից խաւարին գործոց իցէ որ
մնացեալ, զօրասցի անդրէն վասն
քո՝ միայն ասպարէն 'ի քեզ ապա-
ստան եղեալ: Եթէ պաշտպանեալն
վստահութեան զանձն ուրուք լքցէ,
ընկալցի այսու միջնորդիւ ձեռն քո
զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստա-
տութեան. եթէ ամայի 'ի զգու-
շութենէ պահողայն որ գեգերեսցի,
պատանեսցէ ամլիմբ առ 'ի նոյն դարձ
նորոգողին: Եթէ սարսուռ գի-
ւայլին ջերմանն՝ գողութեամբ ինչ զոք
խռովեսցէ, սթափեսցի 'ի սոյն յայս
նշան խաստովանեալ և երկրպագեալ

խաչիդ խորհրդոյ. եթէ անօրէնութեան մերոց խորտակիչ հողմոյ յանկարծ բախեսցէ զհաստատուն մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրայինս ծնունս, հանդարտեսցի անդրէն զեկաւ այս թեւոց ՚ի քեզ պատսպանեալ:

Դ. Նա՛ արտասուս լինել զեղ կենաց առ հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց քոց ստեղծուածոց՝ զայս կարգեալ սահման ողորմ մասանցն ապաշխարելոց յանուն քո՝ բարձրեալ: Զակնկալս իմ դու կատարեա. և զեղի հոգի քո խառնեալ ՚ի սաջանս զօրութեան մեծիդ միայի ՚ի քո իմ շնորհեալ ստեղծարանութիւնս, զի դու ես զօրութիւն վճատեալ որոց, և ընդունիս փառս յաւիտենս. ամէն:

# ԲԱՆ Գ.

Վերաբերի յաւելուած իւրին հեծութեան
նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց
բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Ես զանգի անկիզին կալայ խօսել ընդ քեզ՝ որ 'ի ձեռին ունիս զչուրս կենդանութեան հոգւոյս բազմամեղի, յետոյ ի տարակուս դադարեալ տագնապաւ մեծաւ յաւէտ երկնչիմ. վասն զի աշխարհ և անտանելի և 'ի սահմանէ բանի փախչելի յիշատակ անձնադրելի անդառնալ քս ատեանի՝ 'ի կշռադրութիւն իմ որպէստուորի՝ արարիչ երկնի և երկրի։ Նա զի և չէք խեղ բժշկութիւն բաղմամենից սաստկութեան վիրաց անողջանալի, խայթմանց խոցուծոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որոցին զանձն իմ 'ի կորուստ։ Մանաւանդ զի ոչ գոյ պատասխանի, բառ տառերին, յաւուր պատե-

բազմի, և ոչ բանիւ խրատանալի, և ոչ վերարկուաւ պատսպարելի, և ոչ գինեաւք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք մատչելի, և ոչ կերպարանօք երբեք խաբելի. ոչ յօդուածովք բանից առնլի, ոչ արագմամբ ոտից փախչելի, ոչ թիկանց դարձուցանելի, ոչ գինւոյ ընդ երկիր մածուցանելի, ոչ ընթանով ընդ հող հասանելի, ոչ 'ի խորս երկրի դողելի: Քանզի մերկ են քեզ ծածկեալքն, և հրապարակեալ են աներևոյթքն. արդարութն իմ՝ նուաղեալ և 'ի սպառ ոչնչացեալ, մեղանքն յայտնեցեալ և յաւէտ առաւելեալ. չարիքն իմ՝ մնացական, և ես կորստական. խրատանցն կշիռ պակասեալ և անխրատութիւն խակոյն զօրացեալ. բարեացն բերք հալեալ, և սխալմանցն քըն արձանացեալ. աւանդքն կորուսեալ և դատակնիքն այժմ մէն գտեալ. մահուն մուրհակ գծեալ և առետեացն կնիք եդեալ: Բարեբարն ախտեցեալ, և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց գունդն թախծեալ, և սատանայ խնծղիւք պա-

բեալ. վերջնական զօրքն ողբացեալ, և առաքինիքն բերկրեցեալ. ստա_ նողին մթերք լցեալ, և պաշտօնին գանձն կապտեալ. սուրին կողմն կանգնեալ, և ստացողին պարգև մնացեալ. հատուողին ձիր մոռա_ ցեալ, և կորուսին հաղբըն պաշտեալ. երախայք փրկչին հեծեծեալ, և բե_ լիար զուարթացեալ. կենացն ապ_ րիչ փակեալ, և դառողին ժանդ_ ժանգիս ժամանեալ:

Բ. Եւ արդ ոչ այսպէն ըղձալի էր, ըստ դրոյն կանխութեան նա_ խաձայնելոյ, ոչ առեղծանիլն երկնք յորդանցի և ոչ նկարիլն 'ի յորդ_ վայնի, ոչ 'ի ծնունդ յառաջադայիլ և ոչ 'ի լոյս կենաց հասանիլ, ոչ 'ի թիւս մարդկան գրիլ և ոչ 'ի հասակ ամեմին ամբառնալ, ոչ 'ի պատկեր գեղոյ զարդարիլ և ոչ բանիւ հան_ գերձաւորիլ, քան ընդ այսպիսեաց սատակագունից և սարսափելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ վիմաց կարծրութիւն բերէ, թող թէ մար_ մնոց լուծականութիւն:

Գ. Եւ արդ առոր բարեգութ' ա_

զաչեմ զքեզ, տուր ինձ ողորմու-
թիւն, որ զայսոսիկ զու ինքնին քե-
զէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր
ասելով, թէ տուք զայդ նուէր յա-
նուն փրկութեան ձերոյ Աստուծոյ,
և տուրք եղերուք. զի զողորմութիւն
կամիմ, և ոչ զպատարագ: Ահա
բարձրացիր վերանին ինկեալ այսր
յիշատակաւս, որ ունիս զամենայն,
և 'ի քէն է ամենայն, և քեզ փառք
յամենեցունց. ամէն:

## ԲԱՆ Ե.

Վերջոյին յաւելուած կրկին հեծեծանաց
նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց
բանի.
Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Եւ արդ ես երկրածինս մարդ՝
կենցաղականաւս անկայուն գոյիւ
զբաղեալ, և յիմարութեամբ սպա-
ռողականաւ գինեաւս յիմարեալ,
որ ամենայնիւ ամեմ, և ոչ միով ինչ
Ճշմարտեմ. Բանիւք որոմք զինոց մե-

բազդրեցելովք Նշանակօք պարառ-
ցելովք յանդգնեցայց լինել յան-
դիման քում դատաստանիդ, ով Ի-
րաւարար աչաւոր, անձառ, ան-
պատում, Հզօր Աստուած բոլորից։
Քանզի գամեալ աստանին 'ի այն
զապերախտութիւն մեղուցեալ ան-
ձինս առ քումդ երախտիս, ցուցից
զերանաւնս քո մեզ զօրացեալ և զան-
խրաւութիւնս իմ յաւէտ պարտա-
ւորեալ։ Որ արարեր զիս 'ի քո պատ-
կեր պանծալի՝ 'ի ձեռն մեծին տը-
պաւորութեան, զանազան օժանդա-
կելով։

Բ. Զարդարեցեր բանիւ, փայլե-
ցուցեր փչմամբ, մտօք ճոխացուցեր,
իմաստիւք առձեցուցեր, հանճարով
հաստատեցեր, 'ի չնչականացն որո-
չեցեր, հոգւով իմանալեաւ խառ-
նեցեր, իշխանականին գոյիւ արձ-
նեցեր, ծնար հայրաբար, սնուցեր
դայեկաբար, տածեր առաջադաբեա,
անկեցեր զամփոփշամ 'ի քումդ գա-
թի, Ջրովն կենաց առոգեցեր, առա-
զանինցաղով մաքրեցեր, կենացն փառ-
կաւ արմատացուցեր, հագիւդ եր-

կենայնով ջամբեցէք , աստուածային
արքայակից արարուցէք , անհասին և
անհասանելեացն ընտանեցուցէք ,
զաչս երկրեղէն ՚ի քեզ համբարձա-
նեցէք , լուսովդ փառաց վերածա-
նեցէք , պչօղանիւթ մտաւոր ան-
մարմնոյ ձեռնաց ՚ի քեզ մատուցէք ,
զմեղկիս անդարձ մահացուս՝ խոր զեղ-
ջեալ լուսոյ յարգեցէք , զհայր քո
հզօր աշխարհայինեալ մարդկային-
պէս և անապականն խոյս անձին կըն-
քեցէք։ Ով կեդէր զօրեղանն լեալ
նմանութեանն՝ ՚ի ժառանգականդն
կարգաւ գրեց , ոչ կշռամբեցէք ըզ
յանգգնեալս ՚ի քո կցորդութիւն ,
ոչ առաւելացուցէք զանօրէն աչաց
՚ի յումպ անհնարինութիւն , ոչ ար-
գելանու կապանաց ընդ մահապար-
տայն առարկելեցէք , ոչ խորտակե-
ցէք զզօրաւոր բազկին՝ որ անձնագ-
բաւտեն առ քեզ համբառնայր , ոչ
մնեղեցէք զատս խնդրոց մատանցն ՚ի
չքնաղիչէն զբանից կենաց , ոչ պատե-
ցին զինն մատանցն ՚ի ձեռեկն ըզ
քեզ՝ աշխարհ , ոչ փշրեցէք զպարս
առաւելոցս յեղանակեալն զքեզ՝ ան-

առհամմնելի, ոչ գնացեր բարեկա-
մութեանն խաղաղութեան՝ խաղաղութեանն ընդ
քեզ հետևոցս. խոյս ընդ վերևելոյ
ամենն խորհելի, ոչ խաղաղասէ-
ցեր 'ի համաձայնութիւնս զանազանութեա
քումդ պաշտպանութեան, ոչ 'ի գր-
ծուծ համբերմին անուխ զանազա-
նեալս յանգիմանեցեր, ոչ կարգա-
նօք ձեռ այս և ամբիւս յարատևին
խառնարն համաձեցեր։

Գ. Զայս անձնայն մասունս բա-
րեացն զնեղելոց երկայնմտութիւն
ընկալեալ 'ի քեն՝ բարեբար. որհնեալ
և յանձնային մէջ երկայնամտիս,
փոխադրեցի քմտաակարս պարգևաց՝
անթիւս և բազմաբիմակ անօրէնու-
թիւնս, մարմնականաց և անձնա-
կանաց՝ անձնականին բազմածուփ խոր-
հրդոց յուզմանց երկրպագու-
թեանց։ Զայսպիսի քեզ. Աստուած
իմ և տէր, ընդ այսպանեաց բարեաց
փոխարկերեցի. զայս քեզ ինձէն հա-
տուցի չարիս, բաս մախանեան յան-
գիմանութեան առաւել. մնալեալ
ցմանաստութիւն և ահրոզս յանդու-
թեան։ Զայսց բարեաց երախտեաց

կամաւ՝ ընդունայնութեան գնացիք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորութիւն շնորհաց անձառից 'ի բարձրելոյդ խնամոց բարգեցեալ՝ մերկացան խելագարութեան ցնդեցի։ Նա թէպէտ բազում անգամ ծանուցար կարկառմամբ ձեռին քո այցելութեան ձգել զիս առ քեզ. ոչ հաւանեցայ ըստ մարգարէին որ զԻսրայէլէ ամբաստանութեան. և թէպէտ խոստացայ դառնացուցեալ քեզ հաճոյանալ, և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտիւ փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդադրին յոձն առաջին մասնեայ, փշոյն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս յորմամբն արգիլանարութեան։ Նա ի եղանեն տառածք տատառածաբեալ սուրբ մարգարէիցն. քանզի մնացեր յինէն խաղաղոյ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի. գարշոյ յանախորժ դառնութիւն պտղոյ՝ այգիս սաբացեալ. բուռն հարի զանհատանահօգմոյ, որով քո մեջս տատանեալ այսր անդր տարաբերիմ. ըստ ձայնի երա-

նեղոյն Յորայ ընդ ճանապարհ խնն անդադար գնացի․ 'ի վերայ աւազոյ շինուածս յիմարութեան կառուցի։ Լայնատարր հետովք խոտորեցայ կենացն անձկալեաց հասանել, փակեցի ինձէն զելիցն ուղղորդութեան․ բացի կամաւ զկորստեան խորխորատն ։ Խցի զպատուհան լսելեաց իմոց առ բանից կենաց ընդունելութեան․ կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած առ 'ի զկենացն դէպ նկատել ։ Ոչ ընդունեցայ 'ի թմբրութեանց լքմանէ մնալս 'ի պատրաստ փողոյդ ահաւորութեան․ ոչ զգաստացայ 'ի բողոք գուժի հրաւիրակական աւուրն ընտրութեան․ ոչ երբեք զարթեայ 'ի նիրհմանէ քնոյն մահացուի, որ 'ի կորուստն կարապետէ ։ Ոչ ետու հանգիստ քոյ հոգւոյդ 'ի մարմնեղէն տաղաւարի․ ոչ ընդ բնութիւն շնչոյս խառնեցի ըղձանն շնորհաց քումդ պարգեւի․ իմոյս ձեռաց կոչեցի կորուստ, ըստ առակողին, զհացիս կենդանին մահացուցանել ։

Դ․ Նա զինչ է ինձ ապականս և նուա-

զագոյնս յօդել առաձմանս կսկծելիս չարափարելքականս, մինչ անցեալ է ըստ քանակութիւն և վփոխեալ ըստ բժշկութիւն։ Արդ. քո է ընձեռել կեանս հոգւով մեռելոյս, և անախակալութեամբ մնալել առ այցելութիւն գատապարտեալս որդին Աստուծոյ կենդանւոյ. քեզ փառք յաւիտեանսն. ամէն։

## ԲԱՆ Զ.

Վերստին յաւելուած երկրորդ հեծութեան ներքին հառաչանաց — նոյն աչերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ԵՒ արդ զինչ բարւոք գոյ առ այս, կամ ո՞ր օգտութիւն առ այն առաջման ընթացից ձայնիս հեծութեան՝ լսանել, և ոչ զամփոփեալ չարաւ մահացու վիրիս՝ խորանաբանիս արտաքս հերքել, և կամ ըզծանրութիւն սրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան խնթոյս, իբր ատար-

կացուցանողական հնարաւորու-թեամբ, մատնամատուխ զգուանօք փըր-կել:

Բ. Եւ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս ընդ սորցին գասս, որոց լի էն բերանք նոցա ծա-ղու, և շրթունք խրախանց ցնծու-թեամբ, ըստ առակողին և սաղմո-սողին, 'ի կարգն երկրորդ գիծեցից՝ զնմանիան իմ յիշատակել համայն աստանօր. Թէպէտ առ խոնամ թե-րութեան բարուց անբարեաց՝ և նո-քա յաղթականք իցեն, իբր առա-ջուեայն քան զանապաշխարն: Տօ-նելի եղև Մանասէ առ խնոյ պար-տուցս աւաւելութիւն. պատուէ-ցաւ և փարխեցին առ գծնէխս ամ-բարշտութիւն. զօրեցաւ անառակ որդին առ անդարձիս ոխապան-ցութիւն. յիշատակեցաւ կեղծաւո-րութիւն որդւոյն Աժանեայ առ անշնորհութիւն աղախնաորիս. օրհնաբանեալ եղև աւազակն, որ զաստախույն է անհնարինից. պա-տուեցաւ և կինն պոռնիկ՝ ակզբնա-մայրն աղաչաւորաց: Ո՜չ պակաս

քան զփարաւոն զաւեղծուած սըր-
ախս իմ խառայուցի․ ըստ օրինակի
խառնակութեան մըրկաց ծովու ծփե-
ցայ․ ոչ այնքան սասանեցի և պատ-
կառեցի 'ի սաստկութենէ քամւոյ
հրամանի, որքան ալիք ծովուն յե-
զերացն։ Ընդ թիւս չափուց կշռու-
թեան առ խմս գործոյ՝ և աւազոյն
կոյտ սահմանեցան․ պակասեաց ան-
բաւիցն չիղջք առ համբարս իմոյս
անօրէնութեանց։

Դ․ Զի թէպէտ և յոյժ բազում
են մանուածքն 'ի յախուռնս ջրոյն հա-
մահաւաքեալք, այլ ուրոյնք և ա-
ռանձնականք 'ի ծննդոց աճելու-
թենէ․ իսկ մեղանք իմոյս յանցա-
նաց՝ անթիւք, զորս անհնար է առ-
նուլ 'ի միտ։ Ոմն և ծնունդք իւր,
ոմն և շառաւիղք իւր, ոմն և բոյնք
իւր, ոմն և արկածք իւր, ոմն և
փուշք իւր, ոմն և արմատք իւր, ոմն
և հաստուածք իւր, ոմն և պտուղք
իւր, ոմն և նշխարք իւր, ոմն և ձիւղք
իւր, ոմն և ոստք իւր, ոմն և արմկունք
իւր, ոմն և ձիրանք իւր, ոմն և մա-
տունք իւր, ոմն և խլրտմունք իւր։

ունի և զօրութիւնք իւր, ունի և ազգ-
մունք իւր, ունի և նշմարանք իւր, ունի
և ախտք իւր, ունի և իմացուածք իւր,
ունի և առաւելք իւր, ունի և մեծու-
թիւնք իւր, ունի և յարձակմունք
իւր, ունի և հնարք իւր, ունի և պա-
տիրք իւր, ունի և գիտմունք իւր, ունի
և գինեցմունք իւր, ունի և չափք իւր,
ունի և խորք իւր, ունի և գարշութիւնք
իւր, ունի և կայծակունք իւր, ունի
և կերք իւր, ունի և մթերք իւր, ունի
և գանձք իւր, ունի և ցնցուղք իւր,
ունի և ադրերք իւր, ունի և գիւղք
իւր, ունի և շանթք իւր, ունի և հր-
դեհմունք իւր, ունի և պատկառանք
իւր, ունի և վէհք իւր, ունի և ան-
դունդք իւր, ունի և բորբոքմունք
իւր, ունի և աղջութիւնք իւր, ունի
և ամպրոպք իւր, ունի և կայլակք
իւր, ունի և հոսմունք իւր, ունի և
հեղեղք իւր, ունի և սառնամանիք
իւր, ունի և դրունք իւր, ունի և շա-
ւիղք իւր: Հնոցն և տապ իւր, հրատն
և գոլորշիք իւր, հալոցն ձուլոյն
և ձենձերմունք իւր, օշինդրն և դառ-
նութիւն իւր, կործանիչն և հնա-

զանգեալք իւր, բանաւորն և յեղա-
զակք իւր , գառողն և ապառաղէնք
իւր, առապաւկապեան և գումարտակք
իւր , գաղանն և կորիւնք իւր , խա-
ծանողն և ծակոտուածք իւր, ապա-
կանագործն և նմանիք իւր :

Դ. Արդ այսպիսի ալեայք են գլխա-
ւորութեանց ապականողաց ուղղոյ
համայնից , գաւեալք ընդ ինքեանց
նուաճութիւնք մասանց՝ իւրաքան-
չիւր որ 'ի սոցանէ բիւրք բիւրուց և
հազարք հազարաց. իսկ զհամայնից-
թիւնս միայն գրել խնամոյ, որ զա
'ի մէնջ չէութիւնն գրեալ՝ իբր զէու-
թիւն գործոյ անօսանէ : Եւ արդ
եթէ ոք զանձն ոչ խարեսցէ , և առ
երկաս ոչ կերպարանեսցի, և կեղ-
ծաւորութիւր ոչ անհաւատեսցէ , և
մարդ զինքն ծանիցէ, և հաստարակաց
բնութեանն վարեսցի, և երկրածին
զանձն դիտեսցէ, և 'ի չափու իւրում
կանոնին կացցէ , խնայեսցի ծանիցէ
զնախանձութիւն մասունս արկածիցդ մե-
րապրեալոյ , թէ ոչ ընդունայն ինչ
գրեսցի և կամպղնուս խակութիւն առա-
մանեցի , որ 'ի մերս բնութեան

պատուակի ազգի ազգի վերիպականութիւն . այլ 'ի բնութեն արգասեաց չարեաց չափ մի երեւեցուցի , զի նոքօք և զայլսն իմաստասիրեսջիք, թէպէտ և ոչ բովանդակապէս :

## ԲԱՆ Է.

Վերջին յաւելուած կրկին հեթանոսութեան նորին հակառակ առ նոյն ազգիս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա. Եթէ զի մի զգիրկութեանն վստահութիւն 'ի սպառ կորուսցից, և ապազէն եղեալ մատնեցայց այսպանեաց անհերթութեանց ընդդիմամարտից , որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանի թըշնամիք իմբնածին բուռեալք զոր վերագրեալք սահմանեցին՝ զորքանութիւն պատկերին ձեռյ եղեալ աշխարհուս , ցուցից առ ամին բարգմարույլ բանութեան մարդկայդ՝ զորեղ ախոյեանս տատասածականս՝ ամենայաղթողս և անպարտելիս , թէ և

կանգնեցին կիրս և գժտութեան պտուղս ծառոց անհաճոյելեաց, և անկոխ Ճանապարհաց երկիր և սաժանմունք ։ Քանզի զայն ամենայն գունդս չարութեան բանսարկուին զօրաց՝ առեալ մի արտաքս կաթուծոց աչաց, իբր զՃճիս զեռունդրաց մտանէին խոխոյթից երկրի ակախաղամանց՝ անկեալ ՚ի վերայ ծորուն ձիթոյ կամ գոյգն գեղ ինչ առաւել. չակամն, յամօրեցուցանէ. և գոյն մի հառաչումն որոյ հեծութեան ելեալ ՚ի յոգւոյ, իբր շնչունն հարուայլին ջերմութեան խառնեալ յարեւ, զառանձնանեաց առաւելթիւն հայէ. քանզի բառ միումն նմանութեան հեշտածինք են, և ըստ միումում գիմագրութեան զիրամեալք ։

Բ. Այլ և ոչ երբէք կարեցից զառել զգաստապատկերին՝ բանից կըռկըծմանց, պարունակ զպարտաւորեալ իբր զինաստակուր անփոփոխանաւոր անհանգչելի. վասն զի զանձնս առակեալ ՚ի յիմոց ներգոյն, ամանց զօրութիւն առմ կենդանանալ առ

հոգւոյս կորուստ։ Տանջիս դառնու_
թեան, որ զզարշութիւն անտանելի
վարուց ծաղկեցի. բարութեանս ա_
պականարարք և մահհոգկուցեան, որ
զկորստեան զինին երկնեցի. Քանա_
նու զաւակս՝ և ոչ Յուդայի, ըստ
ասից մեծին Դանիէլի. որդիս գե_
հենին, ոչ արքայութեան. ժա_
ռանգս գժոխոց, և ոչ փառացն փա_
փկելեաց. նիւթ տանջանացն, և
ոչ հանգստեան։ Աղերսիս առ ե_
րախտաւորդ, ապաշխարհս առ բազ_
մապարգևդ, մէջ մեղուցելոյս առ
երկայնամտողդ. գառնացուցիչս քաղ_
ցրութեան բարերարիդ. ծառայս
չար և վատ, ըստ անէրութեան յանդգ_
նութեանն, խմասունս զչարիս
գործել ըստ Նոյեան նախատաու_
թեանն, ժիրս առ ժանդագործու_
թեան զաղթութեան. վայլթս առ
՚ի բարկացուցանել զտէրն, մշտա_
շարժս առ գիւտս սատանայականս,
հնարապարգեան մեղաց առաջնոյն,
թոյլս առ բարեացն թախիս, ծոյլս
առ երանութիւնն ընթացութեան.
դանդաղս առ փախչելն խոստացե_

լոյն, անարիս առ կարիս պիտանեացն և օգտակարացն, պաշտօնեայս տիրագրուժ երախտամոռացյ ։

Գ. Վայ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բարկացուցի. վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութեն ձիր մոռացայ. վայ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց որ ոչ գոյ հատուցանել. վայ բնանակիս ծանրութեան մեղաց գժնեից, որ չունիմ դառնալ առ հանգըստարանն. վայ մատակարիս անբունեան պարտուցն, որ չիք հնար յանգիման լինել հզօրին. վայ եղեգնախուխս կիզանողականս նիւթոյ, որ առչորեկեց եմ 'ի գեհեննին. վայ ինձ առ այս յիշատակ, զի նեաք բարկութեանն Աստուծոյ այրեցելովք են գործեալ. վայ յիմարութեանս, որ ոչ մտածեցի զծածկեցելոցն յայտնութեան հանդէս. վայ ամբարշտիս, զի միշտ անդադար տառապս չարեաց կկեցի. վայ զմարմինս պարարողի կերակուր որդանցն անմահից. կատաղացն թշնամւորաց զինուոր համբերեցից. վայ ինձ առ արբուցն մահուն

բաժակի․ որպէս զյաւիտենականն ամենեցունց․ վայ ինձ առ. եւս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս, երբ դատաւորին ճշմարտի յանդիմանեցայց․ վայ ինձ առ. նուաստութիւն խօսիցն լռութեանց, զի անարժանարժէլի է աղօտանալն․ վայ ինձ առ. ձեռնադրութեան ահին պակուցման, յորժամ առաքեալին մեռանի փակեսցի․ վայ ինձ առ. ձայնին ահաւորութեան զարհուրեցուցչաց եւ սարսափելեաց բանից՝ երկնաւոր թագաւորին վճռատիչելոյն, թէ ոչ գիտեմ զքեզ:

## ԲԱՆ Ը.

Վերստին յաւելուած նորին հեծութեան նորին հանդէպ առ նոյն ողբոց մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Եւ արդ զինչ գործեսցես անձն իմ կորուսեալ, կամ ուր թաքիցես, կամ զիարդ ապրեսցիս, կամ որպէս ելցես ի մեղաց բանդէ: Քանզի բա-

զուամէն պարարտիցդ և անթիւ հատուց_
մունքն, սատափէ կշտամբանքն և ան_
փոփոխուն նախատինքն. անողորմ են
հրեշտակքն և անկաշառ դատաւորն,
հզօր ատեանն և անաչառ բեմն,
քամենելի սպառնալիքն և անողորմ
հատուցմունքն, ահարկու հրամանն
և մերկապարանոց յանդիմանու_
թիւնքն, հրեղէն են գետքն և ան_
անցանելի են վտակքն, թանձրա_
մած խաւարն և արտաքոյ այգե_
լութեան մտաւախութիւն, ապաշխա_
րութեան է դուռն և մշտնջենաւոր
է տագնապն, ամենագրաւ տարտա_
րոսն և անդերծ տառապանքն: Եւ
արդ արդարև քեզ են գանձեալ
դառնիքս այսպիսի դժնդակք և տար_
ժանելի օթեանք անմխիթարելեաց
պատուհասից, ով անարժան անձն
իմ մեղաւոր, չարագործ, պոռնիկ,
բազմամբիծ և անհամն անդաստանի
ընութիւն անմաքրութեան: Ահա զար_
գիւնս գործոց ձեռաց քոց ժառան_
գեցեր՝ թիւրեալ ՚ի յուղղու_
թեանց և զառածեալ ՚ի մաքրու_
թեանց, տարապարեալ յարդարու_

թեանց և 'ի կարգաց պարկեշտու-
թեանց, ունայնք 'ի լիութեանց հո-
գեպարգև հարստութեանց, նա-
խանձարկու բարերարին և ամենա-
կալ թագաւորին:

Ը. Եւ քանզի կառուցեր քեզ ա-
նել արգելան և անփախչելի որս-
գայթ, խոստովանեալ քեզէն զան-
բժշկականդ քո վէր և զանողորմա-
կէղդ հարուած, վկայելով զանձինդ
զպարտականդ մահու զանբուժելի
բեկութիւն, ով չարդ 'ի բարեաց,
ով դառնութիւնդ 'ի քաղցրու-
թեանց, ով խաւարդ 'ի լուսաւոր-
մից, ով կապանեալդ 'ի պճնելոց, ով
գարշելեացդ 'ի գովելոց, ով անբա-
րիշադ 'ի բարեպաշտից, ով չնչա-
կանդ 'ի բանականաց, ով անմիտդ 'ի
մտաւորաց, ով անհանճարդ յիմաստ-
նոց, ով անմաքուրդ յընտրելոց, ով
մահացուդ 'ի կենդանեաց, ով խո-
հերականդ 'ի սրբոց, ով ողբչեւդ
'ի պարկեշտից, ով կեղծաւորդ յար-
դարոց, ով անպիտանդ 'ի պիտա-
նեաց, ով անարգդ 'ի փառաւորաց,
ով նուաղդ յառաւելութեանց, ով

գերիդ 'ի գերագունից, ով նուաստագոյնդ 'ի վեհից, ով աղքատդ յընչեղաց, ով անարժանդ 'ի փըրկութեանց, ով անանկդ 'ի բարձրութեանց և 'ի հոգևոր հարստութեանց, և հաստատեալդ յորհնելոյ:

## ԲԱՆ Թ.

Վերադիրն յաւելուած կրկին հեծութեան Նորին հոլովք առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Եւ արդ զի ոչ արժանաւորքս քեզ բանաստան շնորհագրեցից 'ի կատակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան, ով անձն իմ թշուառամենապատուհաս և առ պատասխանիս բանից անպատրաստ, անողորմ Աստուծոյ և արդարոյ մանանկացութեան: Զի եթէ զի՞նչ մի ծովուց 'ի յորանկութիւն գեղոյ յեղեղեցից, և զգաշտս տարալայնութեան բազմօք առհա-

նեալ՝ 'ի տարածումն լայնութեան քարանցն չափեցից, և զպարսպս յորոնց անտառաշամբից եղեգանց 'ի հաստատածս գոյութեան գրչաց կազմեցից, և ոչ զթիւ մի 'ի բարգելոյն անօրէնութեանց զորեցից ընդգրով սահմանի գրաւել: Նա՝ զի եթէ զմայլս և իբրանմանս 'ի մի լուծ կշռոյ զոդեցից, և կամ զնեառն արտաաեան 'ի կէս ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ կացուցից. ոչ հաւատարէ այնր հարթութեան համաղուգակցել:

Բ. Նուաս ամբարձողէ՝ տուաբանեղն՝ անբնալից՝ ունայն 'ի պտղողոց, նմանակից յաւէտ հարաղատ այնր թզենւոյ՝ զոր անէծն գօսացոյց. քանզի ապաքարթք վարուց, այս է արտաքին գծմք բարեշուք կերպից իբր պսակաւ խիթք պաճուճեալ, բացականացն գոս բաղձալի, իսկ եթէ մերձեցցի անկողն խուզել զխնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց և գարշելի 'ի գեղեցկութեանց, ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց։ Զի եթէ ապաժաման

յանգգոյշ ժամուն հերապանծ տանէկ պատգամաւորոյս անկենդան, որ գոյգն պատկերն է անպատրաստից, եկն ընդ անխծիւք և կամ երկիւր ուռոգեալ ցօղով, և ոչ բարեմասնական զուանգս արգասեաց երկրագործութեան տածողացն մատուցանել՝ լքեալ մասանի, խնկ գու ով անձն իմ եղկելի, առհման բանաւոր և տանէկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու խբամ պաղատանօր, երբ ոչ զնոյն կրկեցես պատիժ նախնեաւ առակիդ: Վասն զի զհամայնն ընկալեալ 'ի քեզ անպարխտ յառաւելութեանց, բակրզինաւորեալ 'ի մարդն առաջին և մինչև 'ի սպառուածն ծննդոց նորին, զերբա գործոց նանրութեանց և բզգիւսս նորոգս՝ առեկլա և անախտժեկլա հասատողին զքեզ Աստուծոյ:

Դ. Եւ վասն զի եղի զքեզ նպատակ հանդէպ երևաց աւատութեան մըտացս՝ անձն իմ անպխտան, վիմօք ձըգելոց արձանաց բանից, երբ զանընդել գաղափն վայրենի՝ անդորրմարուր զքեզ քարկոծել: Որ թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, առ-

կայն յաստուածն պատասխանատուող
իբր ընդ ոսոխի ումեմն ընդ անձին
յօժարամիտ կամօք ոգորիմ, քան ի-
մաստութեան բանի. և զլոյսս մտաց
խորհրդոյս գաղտնեաց իբր զջլա-
ւորեալ յանդգնութեան չարու-
թեան գործոց խոստովանեալ, քեզ
տարածեցից՝ Աստուած իմ և տէր։
Զի որով չափով չափեցից զանձինս
տուգամանք. 'ի քոյդ աննուաղ գթու-
թեանց այսրէն չափեցայց՝ ընկա-
լեալ զշնորհս յաճախագոյնս ընդ
մեծագունիցս պարտեաց։ Իւ որքան
մեղաց հարուածք անբժշկականք և
անհնարաւորք ծարակեացին, այնքա-
նեաց չափովք կրկին առ. ամեն և ի-
մաստք արուեստից բարձրեալ բժշ-
կից բարեհաճ չակեալ լուսաւորեա-
ցին. և 'ի պարտուցն ատաւելու-
թիւն, նոյնքան փոխատուիդ առա-
տարութիւն բարեբանեալ միշտ
պատկեայի, քան խնկաւորդ քումա-
ռակի։ Զի քո է փրկութիւն, և 'ի
քէն է քաւութիւն, և աջով քո նո-
րոգութիւն, և մատամբ քո զօրեղու-
թիւն, և 'ի հրամանաց քոց արդարու-

թիւն, և յաղորմութեանց քոց ազատութիւն, և յերկնայց քոց լուսաւորութիւն, և 'ի գիտաց քոց զուարճութիւն, և հոգւոյդ քո բարութիւն, և ամենայն խաղաղ քոյ ախորժութիւն, և ցօղոյ շնորհի քոյ զուարթութիւն. և դու տաս մխիթարութիւն, և մտաւորութեանս զգաստութիւն, և բանաւոր զխաւար վհատից, և զհեծութիւն ազգաց 'ի ծայր փոխես Նուբեր վայել է որհնութիւն գովութեամբ համբերելով յերկինս և յազգս հարցն և 'ի ծնունդս նորա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

## ԲԱՆ Ժ.

Վերստին յաւելուած երկրի հեծեծանեան նորին հայրոյդ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի Խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Էր արդ քանզի միայնեա մտանել կորաւեան և զզուման ամփոփա-

պէս և մեղանչելն մոլեգնաբար. զի թէ և ստորայեղ իմն են 'ի միմեանց այլայլութիւնք նմանութեանցն, սակայն զկերպարանս երկրպագնչութ_ ցըն առ միմեանս եղեալ, զի և ըղնոյն վճռատութեան ծնունդս արտադրեն: Զի մինն զհզօրին ձեռն իւր ամփոփիկար թերահաւատէ, իսկ միւսն ըստ նմանութեան քառասնեաց պաշտօներգնաց յանդգնայս եղեալ, զյուսոյն առասան խզէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ, իսկ երկրորդումն՝ ըստ նմանութեան լափլիզող գժոխորովայն գաղանին՝ իւր կերակրով արեամբ պարարի:

Բ. Եւ արդ իւր զգանելով բազմահարուածեան հեծանեաւ և յափն մահու ժամանեալ, դոյզն ինչ դարձումն շնչոյ ընկալեալ և յոգի կենդանի եկեալ կազդուրեցայց, պատասխարեցայց, կանգնեցայց, յարեայց յանկենդանականս կորուսանէ, ամանդակեալ Քրիստոսի ձեռամբն՝ որ զթածըն է յամենայնի. 'ի բարերար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան և բժըշ_

կութեան պտուղ ընծեռեալ ինձ մե-
ղուցելոյս, ախտացելոյս և մաշացե-
լոյս ։ Եւ սկզբնաւոր ողբերգու-
թեան այսր աղերսանաց՝ զհաւա-
տոյն շինուած կառուցից . քանզի և
ամէն 'ի նախնեացն ազգխմբէ զինեալ,
փոխեցաւ խակոյն յանմահականն մի-
ձակ վերին . զապաշխարութեանն
դեղ ընկալեալ, ապաշաւանաց թա-
չակաւն զգրաւականն անեղծու-
թեան առաւելն ժառանգեաց, 'ի վեր
քան զորոց առաքեալ ընդ նմին ցա-
ցանէ, որք զհանդէսն մրցանակին
յերկրի կատարեալ, պատգամայինն և
երկնաւորացն յուսոյ հաւատացին,
և անանկանցն ձոխութեանն փարթա-
մացան ։ Իսկ զերախոյս տէրունի
պաշտելի բանին յիշեալ առ սմին, զի
ամենայն ինչ հնարաւոր է այժմ որ
հաւատայն, է զի և զսոսին ընդարակա-
նացն բարերարութեան Աստուծոյ
հաճելեացն զննեալ տառանոր, զայս
պատակեր բանի ընկալեալ նախնի գա-
հերէց առ 'ի սրբութեանցն մատու-
ավքինի հանդերձել . առանց որոյ և
ոչ անէրն փառաց զերուան առ մեզ

հրաշագործեաց զօրութիւնս, եթէ ոչ նախ ընծայից խնդրեաց բարերարութեանն իւրոյ զհաւատան մեր. ուսոփ և կեանս ընծեռեալ զօրէ ինքն_ իշխան բաւականութեանն արըն_ թեր զօրով Աստուծոյ. քանզի հաւատք քո կեցուցին զքեզ, որ հնարանեաւն Աստուծոյ բերան վկայեաց։ Քանզի արդարև սէրն անն անմութիւն և կատարեալ խոնարհութիւն և առ Աստուած ընտանութիւն և բարձրելոյն ծանօթութիւն՝ հաւատոց մասն՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ յարաձգեալ միայ անկթար և անփակելի, պատուականց զօրով սիրոյ և յուսոյ։ Զի եթէ փոքու սերմանի գոյի հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք զլերանց մեծութիւն փոխէ զօրեղագոյնս 'ի սիրոյ ծովու, ապա յիրաւի ընկալաք զայն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտման առ Աստուած, որ զապանիան և զծածկեալն առանց երկբայութեան 'ի հոգւոյն այս ասանէ, Երրորդութեանն փառաւորելի անուանն պատուեալս հաւատք՝ ընդ

սիրոյն գտանել և յուսոյ. Զի թէ և զերծին հաստատածս աստուածասիրութեանս ՚ի մի և ՚ի նոյն խորհուրդ գետեղցեն, յուշէս մեծագին նոցա ՚ի յԱստուած. քանզի թէ հաստատ ՚ի նա, և սիրեն. որով և յուսան անեղեւութից պարգևաց նորին. Նմա փառք յաւիտեանս. ամէն.

## ԲԱՆ Ժ.Ա.

Վերջին յաւելուած կրկին հեթանոսութեան նորին հանդէպ առ նոյն աղերս ճշգրտանց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ.

Ա. Եւ արդ եւ յետինս գտանազոյ՝ ամենայն ՚ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս ՚ի սկզբնաւորն խոնարհութեան ՚ի ձեռն ձեռին տասազին խնձ, յանէից յառաջ հաստատեալ Յիսուսի Քրիստոսի ամենեւ զոր կամի. Քանզի հաստատեցի, վասն որոյ և խոնարհեալ խոստովանեալ Պաւղոսի, ա-

ռեալ 'ի Դաւթայ, թէ և այդ կեն-
դանի մարթանք 'նոցա այլ իմն արա-
ցէ · որպէս հաւատովք ճանաչել-
գետ, և զգուշութիւն յարութեանն նո-
րա, բառ առաքելոյ, և զհանդարդու-
թիւն չարչարանացն նորա, և որ զկնի
բերբին առաքեալք · Այսպէս է ամէն և
յայժմ նմանապէս՝ հաւատալն խոկա-
պէս և 'ի նորագս այս փոխադրու-
թիւն, որ 'ի մեղացն 'ի բարութիւն,
և 'ի չարագործութենէ յարդարու-
թիւն, և յանհնազանդութենէ 'ի սրբու-
թիւն, և յանդրաւէլեայս պարտեաց
մահու յանցանաց՝ յանդատապարտ
երանութիւն, և 'ի ծառայական կա-
պանաց յերկնաւորն ազատութիւն։
Քանզի զինչ ոչ այլևս չկնայ-
քան զբան՝ և 'ի միութենէ երկնա-
նութեան խաւարի զանեալ՝ և Աստու-
ծոյ ամանդակեալ և ալնեալ սիրո
մեգուսոյի, որ ընդ մարմնացեալ ծի-
ծաղկին՝ առ նմին հեծէ հայեալս։
Որ թէ պէտս և յանկարծմանէ բար-
ձրութե պերճութեանցն կայից՝ առա-
քաւուցեալ ծանրութեանն յանդգնէ-
գայն վեհին խորխորատ գրոյն կոր-

ծանման, նորայիւտ միգօքն անջրե-
լեաց. ունի և նշխար նշուլից՝ փըր-
կութեան կենաց հայաւոր. իբր կոյ-
ծանքն լուսոյ պաշտեցեալ 'ի միտս և
յոգի, որպէս գծուքն նշմանաւոր և
զարմանաւոր թանձրամած՝ հրաշիւք
մակարդեալ վեհին հրամանի 'ի յա-
տակս ներքինս ներքնեալ ջրհորոյն։
Ուստի և մեղուցելոյն 'ի սպառ թափե-
ծելոյ, և ակնկալութիւն բարւոյն
բարձելոյ, և համարձակութիւն շնոր-
հին լքելոյ. յուսալ վերստին ան-
դրէն միւս անգամ նոխատարակեցին
փոխադարձութեանց դարձեալ հա-
սանել. քանզի և յաստուածուստ ան-
դուստ հանդերձի և այս՝ ներգոր-
ծիլ առ այսու. վասն զի առ զառագին
զգուշութիւն ամենահնար առևտուրա-
նէ։ Յոր խունկ համբոյթեան մեծա-
պէս հատանի Աստուած, քան յամե-
նայն բարբառ անուշից, և քան 'ի
խառնեալն երբեմն աղաչմանց 'ի
սպաս խորանին, որ է կերպարան
անձանց խնկարկեաց զիջեալ ընկա-
թեանց՝ առ 'ի միութիւն նոյն նմա-
նութեան։ Ըստ որում հարցեալ

փրկչին ամենից ցանկանա ախտացեալս ահաւասիկ ․ հաւատայք ասելով տա այդ թէ կարող եմ առնել ձեզ զայդ, ոչ պարգեւաց աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոցն զբաւ ընկալեալ. Քանզի զի՞նչ քան զմեաւելութիւն քաւութեան զելոյ առ կենդանութիւն մեզ անդրադարձին , առ որ կանանցն ժամանելոց 'ի յոտս արարչին հաւատոցն հանդերձանօք, անյապաղապար զփառացն Աստուծոյ անսին զհանդէս՝ 'ի յեզերսն կենդանութիւն ։

Բ. Իսկ առաւօտին անկապուտ շնորհին մատուցելոյ զկնի մեղանացն՝ հրաշագործն են վկայք ։ Նախ Անովք, զկնի Աշարին, յետ նոցա Դաւիթ, զարձեալ և Պետրոս ․ ընդ որս և փայլին Եղիազար, որ 'ի մեծէն Աստուծոյ ողորմեալ՝ մեծագործնիցն վկայեցաւ ։ Անեղոք է առ այս և բանն առակի անտառակ որդւոյն. թողում զպարտիցն՝ որ 'ի սեռանէ գովեցաւ, և զմնացատութն՝ որ 'ի բարեգործէն յիշատակեցաւ, և զաւակին երջանիկ՝ որ յարձակումն վեր-

ջին չնչոյն հաւատովք պատկեցաւ, և զոր անդրաւեղին են պարտիք՝ զհաղորդեալքն սպանման մահու արարչին. առ որս և գլխաւորն ընտրելոց Պաւղոս, որ երբեմն նախանձին էր անօրինաց։ Յորոց ոմանք ծանօթութեամբ օրինին գլորեալք անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցութեամբ քան զնախակրօնիցն առաւելութիւն։ Իսկ որ նախ քան զօրինակին առուչութիւն զաւանդն պահեալ հայրենի մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնահօրն զաւանութեան, որ և զնախնոյն պարտիս ինքեան փարկուցեալ, զնորայն իւրովքն առաժեաց կրից տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի, այլ չարչարելեան մարմնով բանականաց բնութեան կենաց կարապետ՝ յաղթող զօրավէս բնութեան մահու փոխեցաւ։ Իսկ ոմանք 'ի բուսոյ ոչհաւ հաստակին չարութեամբն յերկարաձգեալ, 'ի կատարեալ տիս ժամանակին ոչ 'ի բարձրութեանն կայից հոսեցան, քան թէ 'ի տորնականաց թշուառու-

թեանց գժնէից կենացս 'ի կամարին երկնից համբարձան ։ Նա եւ թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն գարշ, որ մինչեւ յաւելեղէն նիւթ յեղանակեալ հողոյս գոյութեան, եւ պատկերին արքունի 'ի պատիւ կերպիս մերոյ նկարեալ արքունականն քանդակուածով, անկորուստ եւ անփոփոխագիր եւ յաղթող գառանձնութեան զմերս ենթագրեալ բնութիւն, այս առաւել յաւալի է այժմ մերկապարանոց լուսաւորութիւն անդող եւ անվերարկու՝ ակրանք Քրիստոսիւ ուխտեալ ։ որով եւ միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն ակրունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութեան եւ կենաց հաստատութեան առ հաշտարարին միջնորդ՝ երկնային անճառ կենդանի եւ մշտնջենաւոր բարեխօս ։ Այսպէս ուրեմն ըստ այսու կանոնի Ճշմարտագունի, եւ անփոխադրելի սահմանի, եւ արարչաւանդ պայմանի, համբուրեմ հաւատացող շրթամբք զպատկեր բանիս, եւ ակն ունիմ փառացն շնորհի ։ քանզի ար-

դարև յարդարացուցանելն զմեզ Աստուծոյ՝ ոչ ըստ զօրէ դատապարտանել, ըստ առաքելական բանին առաջմանն ։

Գ. ԱՀԱ յայս անսասանելայի վստահութիւն ապաստան, կամ կործանելոյ՝ կանգուն, թշուառացելոյ՝ յաղթող, վրիպելոյ՝ ՚ի դարձ կենդանական, ամենաթշուառ չարաչարեալ՝ ՚ի յոյսն, մահու մատնեցելոյ՝ ՚ի կեանսն, ընդ ապականութեանց վտանգելոյ՝ ՚ի ձեռն, գժոխային գործոցն գերելոյ՝ ՚ի լոյսն, աստուածանալ անսասանակենդանացելոյ՝ յերկինս, կրկին դաշնակցելոյ՝ ՚ի վերջոյն փրկութեանն, մեղօք կապեցելոյ՝ ՚ի հանդստեանն խոստումն, անբժշկական վիրօք վարանելոյ՝ ՚ի դեղն անմահացուցիչ, աստուածակելոյ վայրագութեամբ՝ ՚ի սանձն հանդարտութեան, արտաքսելոյ վարատական՝ ՚ի կոչումն, ապաստանեալ գժընդակաց՝ ՚ի հեզութիւն, ընդ գլխիվայր բուստացողի՝ ՚ի ներքումն: Ի Քրիստոսի Յիսուս և ՚ի Հայր նորին հզօր և ահաւոր, յանուն և ՚ի կամս բարերա-

թութեան Հոգւոյն ճշմարտի. որ հնա-
րանեալ խնկութեանն և մի աստուա-
ծութեան՝ զօրութիւն և արքայու-
թիւն, մեծութիւն և փառք յաւի-
տեանս. ամէն ։

## ԲԱՆ ԺԲ.

Վերադիր յաւելուած երկին հեթանոսեան նորին հովուէ առ նոյն ադէրս մաղթանաց բանի.

Ի խորհրդ-արդեց խօսք ընդ Աստուծոյ ։

Ո՛վ էր արդ քանզի յաւէտ յառաջնում զգծմանն յաստատութեանն բանիւ լքայ, և տարակուսանաց հեծանան 'ի մահ ձաղկեցայ, տատանօր 'ի յաւոյն կերպարան փոխեալ՝ յարդարհաւել համարձակեցայց. զներբողութիւն ասոյր կարգաւոն յաղնակնութիւն ինձ մեղաւորիս ։ Որ և անդամին խակ յորդորբանեքն և 'ի գաւանեքն զկենդանարարին բնաւից Աստուած, խնկոյն և

կոչումն ընտանի ձայնի ահաւորու-
թեան անուանն շնորհաձիրն բարերա-
րի մաքրացելոյս է կենդանութիւն,
ըստ մարգարէին նախաձայնութե.
թէ որ կարդայ զանուն տեառն,
նա կեցցէ։ Իսկ ես ոչ միայն կար-
դամ, այլ նախ հաստատեմ մեծու-
թեան նորին. ոչ եթէ վասն պար-
գևաց նորա մատուցեալ յողոք գե-
ղերիմ, այլ իբր զկենդանութիւն իս-
կապէս, և զհնչոյ տուրևառութիւն
հաստատի, առանց որոյ ոչ է շար-
ժողութիւն կամ ընթացութե. զի ոչ
այնքան յաւայն հանդուցիւ, որքան
սիրոյն կապանօք բերրիմ։ Ոչ 'ի տուր-
սըն, այլ 'ի տուողն յուսեալ կարօ-
տիմ. ոչ փառացն են ինձ անձկալի,
այլ փառաւորողին է համբուրելի.
ոչ կենացն փափագանօք, այլ կենա-
րարին յիշատակաւն միշտ ձնձե-
րիմ. ոչ վայելչեցն տարփանօք հե-
ծեմ, այլ հանդերձողին անձկանօք
յերիկամանց սրտի կականիմ. ոչ
զհանգիստն խնդրեմ, այլ զհանգուց-
չին զերես աղաչեմ. ոչ հարսանեա-
նին խնճոյից, այլ փեսային անձ-

կութեամբ մաշիմ։ Ի ձեռն որոյ զօ-
րութեան վստահացեալ ակնկալու-
թեամբ վերադարձեցելոյ յանցանօք
բեռանց՝ աներկմիտ յուսով հաւա-
տամ՝ 'ի կարողին ձեռն ապաստա-
նեալ, ոչ քաւութեան միայն հասա-
նել, այլ զնոյն ինքն տեսանել՝ յո-
ղորմութիւն և 'ի գթութիւն և յեր-
կնիցն ժառանգութիւն, թէպէտ և
յոյժ եմ տարադրելի։

Բ. Եւ արդ բաղձամ պատկառա-
նօք առաջեցելոց գիմաց կորացելալ,
զմինորդ ազգաման կախուցմանց եր-
կակի շրթանցս՝ արժանաւորակ ազխու-
կարկելոց՝ առ անհամարձակ լեզուիս
չարժութիւն, նորոգեցից 'ի յերդ
հառաչման պաղատանաց յեղանա-
կութեանց աղիողորմ հեծեծանաց՝
'ի բարձունս աղաղակելոյ։

ՄԱՂԹԱՆՔ ՁՕՐԱՒՈՐՔ
ԱՐՀԱՒԻՐԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

Գ. Ընկալ քաղցրութեամբ, տէր
Աստուած հզօր, զդառնաշողիս զա-
ղաչանս. մատիր գթութեամբ առ

պատկառելոյ դիմաց. փարատեա ամենապարգեւ, զամօթալից այլ-բութիւնս. բարձ յինէն, ողորմած, զանրներելի ծանրութիւնս. անցքք ալեաւս, հնարաւոր, զմահչակրթութիւնս. աւարեա, մինչ յաղթող, զխարդին համութիւնս. բացադրեա, վերնային, զմշեղոյն մատախաւղ. կնքեա, կեցուցիչ, զկորուչին ընթացմունս. յրուեա, ծածկասեա, զգժրանողին չար զամունս. խորտակեա, անքննին, զմարդոյն զխեցմունս: Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երգ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառատաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ զմուտ աւեմոյ անձնեկիս. կերպացո քո նշանդ 'ի հետս եկից մաղթողիս. ամրացո քո աջովդ զհանգըստեանս խշտիս. մաքրեսցես 'ի հողքէ զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ զապաստանեալս անձն ողւոյս. անխարդախս արասցես զգործոյ հեալ շունչ մարմնոյս. կացուցես շրջապարակ զպարս զօրուդ երկնային. կարգեսցես 'ի դիմի ընդդէմ դիւաց

դասու։ Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյցս նիրհման 'ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ Աստուածածնիդ. և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից անպարհուրելի զեան զմամբ 'ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խոլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անմիջանալի պաշտպանեալ։ Եւ սթափեալ վերստին 'ի ննջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութբ, հոգեւորով զուարթութեամբ 'ի քեզ արձանասցեալ, զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ, ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնաւորամբք խմբից երգակցեալ, յերկինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ԲԱՆ ԺԳ.

Վերափոխին յաւելուած իրիքն հեթանոսնեան նորին հոխողի առ նոյն աղերս ճողովեալ բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ԱՍՏՈՒԱԾ բարերար հզօր ահաւոր, հայրդ բարի ողորմութեանց շնորհի, որոյ անուանդ խնկ մեծիդ գթութիւն եւ գթառատութիւն աւետարանէ, քաղցր դժնէից եւ անգոհացողաց։ Ընդ քեզ եւ Որդւոյդ քո իբրեւ զքեզ, զօրաւոր ձեռն իբրեւ ըզքոյդ, անժամանակ տէրութեամբ ահեղ, ընդ արարչութեանդ քում բարձրացեալ։ Եւ Հոգիդ սուրբ ճըշմարտութեամբ՝ ըղխեալ առ 'ի քէն անսպառութեամբ, կատարեալ խկութիւն գոյի, էութիւն մշանջենաւոր, հաւասար քո ամենայնիւ, փառակից որդւոյ քոյ տէրութեամբ։ Երրեակ անձնաւորութիւն՝ համայն

անձնին, տրոփեալ 'ի գլխոյ՝ ուրոյն զատուցմամբ՝ իսկ միաւորելոյ համագումարութեամբ, նոյնագոյ բնութեամբ անիրապէս, անշփոթ և ան-անջրպետ՝ միով կամօք և կցորդութեամբ. ոչ երկցութիւն ումեմն 'ի յումեմն, և ոչ քթթել մի ական առնուազութիւն միոյն ժամանելոյ, քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ անտառուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութիւն, միով պատկարրատագրութեան անսկզբնադրարատուածարանելոյ: Քանզի արդարև վերաձայնեալս այս խոստովանութիւն երկրպագուարարեանդ զաւանութեան զվէմն հաւատոյ Պետրոս երանելոյ. իսկ զդատապարտելոյս անձն մեղք՝ բարեհրաման քո անհնարկութեամբ, ով խնդրողդ գերելոյս, հրաշանորոդ արդարացուսցէ: Քանզի թէպէտ և քո իցեն պարգևք, և քո ողորմութիւնք, այլ ոչ 'ի պարգևան ես այնքան հաշակեալ, որքան յողորմութեան. զի երկրորդն գծոյդ յաճախէ գիւտս, իսկ առաքինին զձգնաւորացն յայտնէ

զգործս. զի պարգեւք՝ վաստակոցն են փոխատրութիւնք, իսկ ողորմութիւնք՝ մեղուցելոյս բարերարութիւնք։

Բ. Եւ արդ մի զօրասցի մարդկային գործք առաջի քոյոց շնորհաց, Աստուած գթութեանց, թէ և անդր իսկ իցեն քան զօրէնս հասարակաց բնաւորական հրամանաց. այլ յաղթող եղեալ քոյդ երկայնմտութեան, նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրածնաց։ Քանզի և որ մաքրութեամբն պերճանային օրինականացն վստահութիւնք՝ ի լուսաւորել քոյդ արդարութեան գուշակ ներկայիս, ամենանուաղ անձկութեամբ լքեալ հրէութիւնն յեռանեալ, և յաւէտ ընդ տարագրական ողորմելոյն, առաւել նորա գըտան կարօտեալ մարդասիրութեան։ Իւ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ, բարերար, լուր պաղատանաց գոչման հեծութեանս որ կարդամս առ քեզ. ողորմեա, կեցո և մարդասիրեա։ Զի քո է երկայնմտութիւն, քաղցրութիւն, փրկու-

թիւն, քաղաքութիւն և փառք յամե-
նեցունց յաւիտենից ազգաց. ամէն:

## ԲԱՆ ԺԴ.

Վերստին յառաջնումն իրին հետեւութեան նորին հակառակ առ նոյն ազդելոյ ճառագայթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. ՊԱՂԱՏԻՄ առ քեզ լուսոյ ճա-
ռագայթ, որդւոյ երկնաւոր, գո-
վեալ անպատում, որդի անճառ մե-
ծին Աստուծոյ. խոնարհեցո զունկն
քո՝ բարձրեալ բարերարութ, կենաց
ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին
աստանօր ՚ի հաւաստումն նուաղ
ձայնի մկրտաւորելոյս:

Բ. Ոչ ցուցեալ է երբեք, եթէ
աղաչեաց զքեզ ՚ի ձեռն առաքելոցն
որոց խոստովանեալն, քանզի կարկա-
մեալ էր. ոչ ձայն պաղատանաց զինի
արձակելոյ, քանզի անկանիչ էր.
ոչ մատամբքն տառապանելոց զաղէտ

վասնզին յայանեաց տեսողից, քան-
զի խորտակեալ էր. ոչ այս կոյկո-
ղագինս արտասուօք ողբոց բարե-
բարից յանդիմանն կացոյց, քանզի
մխասապարտ էր. ոչ 'ի պատգամ
բանից միջնորդի զօղորմածից կամս
հաճեցոյց, զի անպայելուն էր. ոչ
հայթայթմամբ խորտակեալ մար-
մնոյն արխանեքանդ ներկուածով
ձորձոց գթածից զախրա ձմեռեցոյց.
վասն զի անյոյս էր. նա և ոչ ծըն-
դոմքն հաստատութեամբ իբր գար-
շապարաւ ոտին վարեցաւ, այն զի
անյարիր էր. քանզի կիսամեռն ամել
կենդանութեան' առկաւ ինչ նուաղ է
'ի մեռելութենէ: Մանաւանդ զի 'ի
քրոյոց խրատեալ բանից, և բարե-
բարեալ քոյդ ողորմութեամբ, և
փառօք քու լուսազարդեալ, ոչ միայն
զի ոչ վերջացաւ 'ի հակառակն քո
ընթացից, այլ ատահակեալ ապաստան-
բութեամբ յիւր թշնամեացն թի-
յանելու, ընդ նոսին դաշնաւոր-
ցաւ, միաբանեաց ասելեացն քոց:
Դ. Խակ զու բազմապարգև, բա-
րերար, անոխակալ, ամենակեցոյց:

ոչ միայն զի ոչ պահեսցես զչարադոր-
ծին մեղաց յիշատակ, այլ և ոչ բա-
նիւ յանդիմանեսցես. ոչ տան հարկեր
անկելոյն, այլ կարեկցաբար մատու-
ցեալ զծայրագոյն ցուցեր զխնամս։
Ոչ քահանայապէս ըստ Ահարով-
նեան տկար օրինին՝ զօրաւոր առ մա-
հուն պաշտօն՝ դատապարտիչն անի-
ծիւք և բռնալից քարանցն ձգմամբ
'ի խորտակումն խոցելոյն արագելով
մատնէր. և ոչ որպէս զղեւտականն
կարապետայինն անկատարագործ՝ 'ի
յերկուցն միջի բաժանեալ խորոց,
հնոյն լրումն և նորոյս սկզբին, ու-
նայն 'ի հոգւոյ յապաշխարանին հան-
գիտացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր
զխոցն, զի մի սատակիչն օրինա-
կութեամբ տապարաւն արմատա-
կորոյս՝ զմահուն պաշտօն 'ի քեզ 'նը-
կատեալ, յառաջ քան զփորձ առա-
կայիցն սատակեսցի. այլ հեթանո-
սացն պահպան անուն սարկաւա-
նեայցն, որք 'ի հրէիցն ընկալեալ
զօրէնս ամբողջ պահեցին, զոր նորա
մոռացան, նոցին կցորդեալ մար-
մնոյդ վերարկուաւ միակերպարան

խառնութեամբ, զազատարարն գը-
ծագրեցէք զաւետիս առ ստորաղ-
գիւն. և աստուածաբարդ ներգոր-
ծութեամբ անտարապականաւ ձեռն
կարկառեալ, յարուցէք զմարդն
նախնին մեղուցեալ ՚ի մահ խորովքն
ծննդովք: Զարամեցելոյն սիրտ բեր-
կրեցուցէք, և զվհատեալն հաստա-
տեցէք, և զթշուառացեալն մի ան-
գամ՝ կրկին զուարթացուցէք: Նա-
զանին կենարար ծծմամբն և բաժա-
կաւն լուսոյ լցէք. հայթող երկնա-
նով արարչականդ քոյին մարմնով
նոր յեղանակեցէք: Վերակացու-
թեամբ երջանկացն աղանց ընտրե-
լոց յանձնանձեցէք, գրգեցէք և խը-
նամարկեցէք: Հանդարտութեաց գը-
րաստանած ողութեամբ անդղուե-
լի պահեցէք, մինչև յարկն լուսոյ
ածէք: Ի ձեռն երկաքանչիւրոյ
միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց
տուչութեան կատակաց կենդանա-
կանաց, մարդաախրասէս դարմա-
նաբեցէք: Իւ որպէս երբեմն ընդ
Մովսէսի՝ Թէս աստուածեալ ար-
ծուոյն օրինակաւ ընկալար զնա, և ՚ի

հանգիստն հանդարտութեան եր-
կրին բարութեան առաջնորդեցեր,
և զբանսին կերակուր ջամբել հրա-
մանատրեցեր վարդապետութեանց։

Դ. Եւ որդ որ զբնաւն ծայրա-
գոյնին բարութեան լուսոյ յամե-
նայնի բովանդակապէս հրաշագոր-
ծեցեր, զօգտակին զգանձ քեզ սեպ-
լրումն և Նորայս սկիզբն՝ հեծանոցին ընտրութեամբ հաւէ , ոյեան առա-ջելոյ ընդ Սափիրայի 'ի կենաց գը-րաւէ . զարմանալին քննութեամբ հոգւոյն՝ բուրումն ինձ մահու ընդ կենացն քարող խառնէ ։ Երգ անա-չառք և ինձ կաճառք երջանկացն , և ուժգնութեան հրամանին վերինոյն որի սպառապէնք . ընդ հրեշտակացն և մարգին , ընդ ախեղերաց երկրի և տարերք , ընդ անդդայիցն և չար-ժողովոնք , որովք դառնալ մեջ լինիմ՝ սուժիւք լեկանոյ յարինակ և յիշատակ առակալեացն ապագայից . իբր հոգեոյ փոխթոգկի ալեաց յաւէտ մըրըկեալ կենաց վատահութիւն , մեայ անկայուն 'ի հաստատու-թեանց ։ Զոր եթէ ոչ խնամատու-թեամբ 'ի քննին առեալ խուզեսցէ զուղղակացն բազմատեսիլ զանազա-նութիւն , զմանունս փոքունս ընդ մեծամեծացն դառնալ , որ առանց թուոյ և քանակութեան համարոյ թինդս առեալ անդրա երամոց եռան զեռան սջանան 'ի մարմինս ծովու , վկայեսցէ և հաստատեսցէ Ձեռն-

րեա լինել զառաջնորդս բանաւորու-
թեան ։

Դ․ Այլ դու ինչն օրհնութեանս արժանի թագաւոր բարի երկնաւոր մարդասէր Քրիստոս , Աստուծոյ կենդանւոյ միածին որդի . հզօր բարձեալ անչափին անճառ քաւիչ ահաւոր , տեսեալ 'ի ձեռան ամբոխեալ ալեաց ոգւոյս ծփանաց , արձանացս զծաւալս մոլեգին շարժման արարիս խաղաղութեամբ , ընդունեա 'ի սանձս կարգոյ երկնանոց ըմբռնմանն զգնդեալ մտացս վայրագութիւն ։ Նշխըլ խաղաղութիւն հրամանաւ մեծիդ ամենակարան բերոյս տառամանմն , տառապեալ խափանեա զբաղմանցլինեան անդամս ստրուկանս դադանեաց անմթոյս երկրակենցաղս հինից ։ Գրեացես աղօթս մշտամնայուս զայն նորընծայ սատ . ողորմաղերս թախծագին ձայնի ողբերգաւորութեան այսր մատեանի . հան 'ի խորոց մահուս անդընդոց չքնաղ ապրեցեալ ընդ մարդարեին փրկելոյ . ընկալ զխոստովանութիւն անձնադատ բանիս 'ի հաս

անուշից․ շնորհեա մխիթար դատ-
նութեան վշտաց ամպքին հեծու-
թեան յուսադրեալս։ Եւ քեզ ընդ
Հօր Հոգւոյդ սրբոյ փառք պատիւ
և իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

## ԲԱՆ ՀԲ․

Վերջին յաւելուած երկին հեծութեան
նորին հոգւոյն — նոյն աղերս մաղթանաց
բանի․

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա․ ԱՅԼ առաջ ձեզ ասեմ, ով ե-
կեղեցիք միաբանից և աշակերտու-
թիւնք կրօնաւորաց, որք միաբա-
նականք մատանցք ձեռօք ա-
ռնէկալութիւն յատայն պարգևաց
բաշխեալքն անդրանիկ տեսած զինու-ո-
րեալք, որոց գայս անգամ հանդեր-
ձանոց խորհրդոց բանից ընծայեցա-
ցի․ ընկալարուք գայս աստուածա-
թիւն խառնախառնութեան ՚ի շը-
նոսած փրկութեան հոգւոյ Դաւանե.

բաց առնիլը զմարմնոյս պարտու-
թիւն, յիշելով զմարդարէականն
ընդ առաքելականին առեալ մեզ
'ի խոսա, զի մի պարծեսցի ամենայն
մարմին առաջի Աստուծոյ, և զոչ-
ոք է արդարն և ոչ մի. Զանձրու-
նականն մի մտանմայք, 'ի կատա-
րածն խոկ պատուիրանին դադջեք
զձեզ ծառայս անպիտանս. մի եղի-
ցի լինել ձեզ որպէս խարդողին. զգու-
շացարուք և զլոյն, թէ կերակուրք
նորա ընծայքն։ Պանդի և եւ խոկ, որ
զայս նուաղութիւն մտածութ արա-
զոյ ձեզ ջանիկեցուցի, վկայեալ զան-
ձնէ կամաւորական առատանդք բիւր
բամբասանաց անրժչկական մեղա-
նաց, 'ի սկզբնաշաւղն սկսեալ մին-
չև 'ի սպառումն ծննդոց նորա' կա-
մայականն յանձնառութեանն հաւա-
տեցի եղի զիս ամենայնիւք պարտա-
կան չարեաց.

Բ. Լուսոյ յումեմնէ ոչ պարտա-
ւորէ, և ոչ հանձեցոյ. 'ի յամէլն նո-
րա անդարմանականա առ այն, որոյ
առաջի ոչ է արդարանալ մարմնոյ
երկրածնի, թէ ոչ երբէք ընծայոյ.

ոչ պատժեսցայ և ոչ զաշխարհի-
ինչ համբուրեցի ճաշակս մահու։
Այլ ոչ ընդ հաստ ինչ յանօրէնութե-
նէ․ թողցէ ՚նմա տէր Աստուած
զայսոսիկ․ թէ և ճշմարտիւ իսկ
գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան թէ
գծեաց, ՚ի յաւել զանյարմարան ՚ի
գինաց ժողովրդեանն Իսրայէլ-
բանիւ Զաքարիայ, օրհնեալ տէր,
և մեծացաք․ որ է փարիսեցւոյն
ձայնն կերպարան։ Բայց եւ քանզի
գիտողին Աստուծոյ մատնեալ եմ
դատաստանի, որ զկիրս աներեւու-
թիցն մտաց ՚ի կշիռս եդեալ հա-
մարի դատել զիս նորոք ամենիխա-
հատուցմամբ․ ոչ կերպարանե-
ցայց անառզին, ոչ կեղծաւորեցայց
քննողին, ոչ առեցից զուշ գործե-
ցեալն նկատողին, ոչ խաբէու-
թեամբ ընդ միս ինչ մտից մեծին,
ոչ ՚ի առնել բարուոյ ցոփութեան
զչափս քաղաքէկեցից, ոչ ՚ի պատկեր
ընտանի զանախկարս եւրեքս յարդե-
ցից․ ոչ խնճեշացայց ՚ի զարդ սաո-
րոտի, ոչ պճնեցայց այլով պայ-
ծառութեամբ, ոչ պաճուճանս յար-

մարկեցից ազգեղութեանս գեղոյ ։ Ոչ
որ մեղաւոր իբրև զիս , ոչ որ անօ_
րէն , ոչ որ անիրաւիչ քան զիս , ոչ որ անխ_
րատ , ոչ որ չարագործ , քան զիս , ոչ որ վրի_
պեալ քան զիս , ոչ որ սխալեալ քան զիս , ոչ որ մոլե_
գնեալ , ոչ որ խարդախեալ քան զիս , ոչ որ
շաղախեալ , ոչ որ ամպարշտեցեալ քան զիս , ոչ
որ դատապարտեալ , և միայն եմ և
այլ ոչ որ , և ամենայն և յիս ամե_
նեցուն ։ Ոչ հեթանոսք , զի ոչ գի_
տէին . ոչ հրէայք . քանզի կուրա_
ցան . ոչ ազգերք և խառնիճաղանջք .
քանզի յիմարք էին իմաստից ։ Պետ
վարժից կոչեցայ յանձինս դատա_
խազ . ռաբբի ռաբբի անուանեցայ ,
և զգօտեան առ Աստուած եղծի .
բարի առաջոյ առ եկեղութեան ժա_
ռանգութիւն . առոյր վկայեցայ 'ի
մարդկանէ , որ եմ անմաքուր առա_
ջի Աստուծոյ . արդար դաւանեցայ .
ամենայն իրք անիրաւիչս . հեշտա_
ցայ 'ի գովեստ մարդկան , զի ծածք
եղէց յատենին Քրիստոսի . յաւա_
զանէ կոչեցայ Սրբուն , և ես 'ի
քուն մահու ննջեցի . 'ի փրկու_
թեանն առուր հակող յորջորջեցայ ,

բայց զգաստութեան աչս կափուցի։ Ահա դատաստան, ահա յանդիմանութիւն, ահա նոր կշտամբանք և հին դատապարտութիւն. ահա ամօթ դիմաց և աղտոտ հոգւոյ, ահա խնդրելք փոքունց և կշիռք մեծամեծաց։

Գ. Այլ դու միայն տէր Աստուած մարդասէր, անոխակալ և երկայնամիտ, համարեաց մեղապարտս անձին ընդ վերջին արդարատուութեան աւուրն ահաւորի զայս կսկծեցուցանող ինքնադատապարտական նախատինս։ Մի լուայց 'ի քէն զայսոսիկ, գթած, փոխանակ զի ես ինձէն անձինս գըրեցի։ Այլ բարձցես և վերացուսցես զպարտ արդարատուութեան կանոնս ընդ քեզ կապելոյս աննշանօք հոգւոյս։ Հան զնախատինս պատկառանաց խայտառակութեանս, ծածկեա աջոյդ կարողութեան ըզտգեղ տեսակ մարմնոյս մերկութեան, մասն հանգստեան զթոշեալս ուժգին մեղացս բեռամբք, կարգեա ինձ առհամն հեշտ բարութեան առ ելս կենացդ, պահեա յի-

շատակ ինձ ողորմութիւն և զինի մահու-
կեանք անմահին, օրհնեալ յերկինս
և գովեալ յերկրի, բարեբանեալ
միշտ յամենայնի յաւիտենս յաւի-
տենից. ամէն։

## ԲԱՆ ՀԳ.

Վերջին յառաջասացեալ երկին հետևութեան
նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց
բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ԹԱԳԱՒՈՐ բարձրեալ հզօր
ահաւոր, օրհնեալդ միայն տէր
Յիսուս Քրիստոս, քո է փոխար-
կել յանմահականս կենաց յաւաստա-
տութեան դատապարտիչ անէծս առ
կեցուցանող օրհնութիւնս, զպար-
տաւանս վճռատութեան առ զուար-
թացուցիչ գովութիւն, ընդ ամօ-
թոյն՝ համարձակութիւն, ընդ պատ-
կառանացն՝ պատիւ, ընդ տարա-
գրութեանն՝ յոյս բարութեան, ընդ

բաժանմանն անկեղծութեան միու-
թեան, ընդ առաջնականացն բա-
նից՝ որոշական սահմանս, ընդ մի-
անգամ դատաստանութեանն՝ կըր-
կին ազատութիւն։

Բ. Որոշեմք, ասէր, մանաւանդ մի-
ջնորդութեան յաւուր արձակմանցն.
չոյս կենդանութեան, մինչ աչաց
ողորմագին հայեցուածս 'ի բար-
ձունս կողկողիցի, զխոստովանեան
ուղղոյն զանգերծ ընթացիցն զան-
փոփոխելին ճանապարհ յայս բերե-
լով մտաց առանձինն ամենայնիւ վե-
րանդեալ. և 'ի յերգ բնականութեան
յորդորս նկատեալ յելիցն շաւիղ.
թշուառացեալ կիրառութեամբ,
զինչ ալլոցութեան, առատանմամբ
մտաւոցս, կարեկամ հաւաքմամբ,
նուաղ հեծութեամբ, նորոգական ձայ-
նիւ, յոգի թափծութեան յորդոր-
մանն եայ առաքականաց՝ 'ի խորոցս
անձերլութիւ զգործեցելոցս ողբա-
լով հառաչեմ։ Կարող ես, բարե-
գութ, և անդ հրաժարածել յանէս
զորեգութեամբ ասելով, թէ ով է-
զինջիւր յոգւոյդ խորտակմանէ, և

կամ թողեալ լեզուն քեզ մեղանչէ քո , կամ թէ երեթ 'ի խաղաղութիւն սրբ- բեալ 'ի մեղաց ։ Նա զոր յայնմ ժա- մու ոչ ժամանեցիր պաղատել , այսօր ընկալցիս մարգարէապէս . ով եր- կայնամիտ բարերարդ՝ անճառելե- ցոյց ։ Յորժամ , որ այժմս բանադա- ձայն խորհրդածայն սիգացող բար- ձրապարանոց , անկեալ զնիմ զի ան- կենդան , կարկեալ 'ի խօսից , կաշ- կանդնեալ ձեռօք , լքեալ անդամօք , խափեալ շրթամբք , կասկուցեալ աչօք , տախտակ անշարժութեան , կոճղ կնայ- բեալ , արձան անզգայ , պատկեր անբարբառ , գոյութիւն անշունչ , ողորմելի տեսիլ , աշխարհելի կեր- պարան , ողբալի օրինակ , եղկելի դէմք , արտասուելի նմանութիւն , լռեցեալ լեզու , ցամքեցեալ խոս , թօթափեալ ծաղիկ , ծորեալ դեղ , չքջեալ զամբիւր , գատարկ կոկորդ , խապանեցեալ սիրտ , ապականեալ ար- դարան , աղտաղեալ ազդեցք , թալ- կացեալ մարմին , ժողովեալ ոսկերքն , քակտեալ տաղաւար , կորուսեալ տուն , բաժանեալ յօդք , հատեալ

ծառ. , ողջնելով արժան . թողելով
տուն , շինելով սուր , տապալու-
ցելով բոյս , ստացելով բարեկամ ,
մատուցելով պատճառ , թողելով
գործութիւն , մերժելով ատելի ,
բարձելով խէթ , անարգելով կեանք .
և իւր զանազանումն առ ոմն կախելով .
կարօտելով այլոց մաղթանաց , որք
չհատուցանող թշուառի ձայնիւ նե-
ւագելով աղերս հառաչման , ցաւով
արտասուաց բարեբարիք գթու-
թեան 'ի բարձանս աստուածանեն :
Զառ քեզ դարձն յեզանակեն որ-
դաջանուելով , զոր որչնեմ . զնշան
խաչիդ փրկութեան , զոր երկրպա-
գեմ . զյարութեանն ճշմարտու-
թիւն , որում հաւատամ . զփառացդ
քո յայտնութիւն , զոր փառաւորեմ .
զդատաստանիդ ահաւորութիւն ,
զոր խոստովանիմ . զբանիցդ յանդի-
մանութիւն , յորմէ զարհուրիմ .
զՀոգւոյդ սրբոյ ինձ ողեկցութիւն ,
զոր պաշտեմ . զծնանդ անեան-
գրութիւն , զոր և համբուրեմ . զթա-
գաւորելն ընդ քեզ , այր Յիսուս ,
որում պատարագիմ : Արդ լուր մեր.

ժեչաւ բարձաւ արտաքսեցաւ փախեաւ սրտացաւ անգիտ եւ կցորդութիւն զուգութեան կենդանացուցչի կենդանութեան. եւ յորոց որ 'ի քէն արարչէ՝ մնացական եւ անընդնջական յիշատակարան պահեցաւ ։

Գ. Տես ողորմութեանց 'ի տարակուսանս վտանգելոյս, միայն բարեգութ փառաւորանեալ որդի Աստուծոյ, քաւել բժշկել կենդանացել պաշտպանել նորոգել նկարել կանգնել հաստատել, վերստին բաւեղծագործել յերջանիկն անարատութիւն. քո է կարողութիւն, քո է փրկութիւն, քո ողորմութիւն, չէք քո անկարօտութիւն, այլ ամենեւին զօրութիւն, բարձրութիւն, իշխանութիւն, անվախճան թագաւորութիւն, խոհութիւն, ինքնութիւն, ամենատեղի բացարձակութիւն, բարերարութիւն, լուսաւորութիւն, փառաւորեալ անպարապէս, անսպառական եւ անյաւելուած, ինքնեկեալ խորհրդով անթարգմանելեաւ յերրորդութեանդ սրբոյ, գոհաբանեալ յաւէտ եւ եւս առ. անձն 'ի նոյն

պաշտօն հաւատարութեան միաբա_ նու զուգակցութեան, երէկ և այսօր և յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

## ԲԱՆ ՀԴ.

Վերստին յաւելուած երկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն ողբերգ մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ԱՐԴԱՐ երկնաւոր, տէր բո_ լորեցուն. առ ամենայն բան յամե_ նայնի միշտ երկնայնոյնումն, Աստուծոյ կենդանւոյ անդրանիկ որդի։ Ահա անդ է ողորմելին խնկարկել. յորում հա_ տուր անձնականութեան վաստակոյն. անդ է բարեգործելն, յորում աւե_ տութիւն խնամոցն խոստմանեցուն. յայնժամ ժամու է մարգարէանալն, յո_ րում ակարութեան վասանդ պաշտա_ բեալ ափրեաց ներքոյ և արտաքոյ. անդ անդր է բժշկութեան աստուա_

ծայլին քո ձեռինդ , յորժամ ընդու_
անդամոցն տեղի են կենդանու_
թիւնն · այն վայր է այցելութեան ,
յորում ելք հնարից ոչ գոյ · այն է
քո մեծութիւն , յորժամ զյուսա_
հատութեան մերն ողջացուցանես ·
այն է հարազատ քում ազգակցու_
թեան , եթէ յանակնկալն ժամու_
պատեհատուրեալս փրկութիւն ·
այն է հանդիսարան քում յաղթա_
նակի , եթէ զխափեալսն մուտ կե_
նաց 'ի սպառուածն ճնշոյս բացցես ·
այն են քո շնորհք վայելչականք ,
եթէ զչարեաց խմոյ մնացեալն՝ ըղ_
բարեացդ քո յիշեսցես ։ Յայսմ ես
անտխտակեալ , եթէ ապախտաւորս
ընդ երախտաւորացն խնամարկեա_
ցես · 'ի սոսին ծանեալ գիտացից՝
եթէ նայեցայ 'ի նուէր բանիս
ձեռինն գթութեանցդ , եթէ զառա_
տութիւն չարեացս բարձցես ։

Գ · Յաղագս այսորիկ հիւսին բանք
և եղանակին նուագերգութիւնք ,
յորժամ անկրին բարի՝ չարն ծառայի
զբարեն , գործայն պարգևեալ է · որ
մինչ խրատամք մեռցէ բանիւ , նա

յորդորական ապարանս զնա համ-
դուսցէ. մինչ հրաւիրեալ է 'ի գուբ
տղմոյ, նա 'ի բազմականս անձնա-
պատիկս գահուց դրդեցուցանիցէ.
մինչ բոլորեալ դաշտն գիտասցէ, նա 'ի
բարձրութիւն բերկրութեան հայե-
ցուցանիցէ. մինչ ծայրատութեան
մատանցն ապաւէ, նա մատանի
համարձակութեան մատուցանիցէ.
մինչ հայր հարուածոց գանիցէ, նա
գթոյ գիրկս արկանիցէ. մինչ պա-
տուաստեալ յուսոյ կորանեան, նա
երեւելի աւետաց բաղձից առնիցէ.
մինչ ակն ունի աստուածային մահու,
նա ընդ կենացն եւ փառս ընծայե-
ցուսցէ. մինչ համամանդ գլխոյն նայես-
ցի, նա զնոյն պսակաւ պայծառա-
ցուցանիցէ։ Այս պտուղք որդեգրու-
թեան, գթած, պանծելագործ
քաւմ շատափիղայ. այս արդարոյ
կենաց արարչականք քո հրամանաց.
այս իղձք խորհրդոց խոստովանեալդ
քո անձնչանաց. այս նշմարք լուսոյ
անձնասիրաց ծառայութեանց. այս
ախորժութիւն ճաշակաց բարեբա-
նեալդ քո քաղցրութեան։

Դ. Քո միայնոյ են այսոքիկ, տէր. 'ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին. ուշս զգոյշ յառաջ ադէրս ազա_չեմ, որչնեալ, 'ի քոյոյ այսոի պարգ_ևեալ շնորհէս. բայց, տէր, զգանձս քո բարիս, բաց աղբերանց աստ_կին. Մի խառնեսցես 'ի համբարս բարեացդ քոց 'ի չարեացն իմոց. մի անմարմնեսցես զատեալսն քո՝ որ են սրբութիւնք և ցասմունք, ընդ սիրելիսն քո՝ որ են գթութիւնք և ողորմութիւնք. մի պահեսցես 'ի ստացուածս քո պաշտելիս զան_ախորժելիսն քո՝ որ են մթութիւնք և դառնութիւնք, և զիմ մնաց_եալսն՝ որ են մեղք և թշուառութիւնք: Մի գրեսցես աջովդ օրհնութեան 'ի մատենիդ կենաց զմուրհակ պարտ_ուց իմոց անիծից, այլ զանձն հնարա_ւորն ինձ համարեալ՝ մեծացու_ցես կրկին աստուել զանուն քո տէր 'ի նոսին, ցուցանել զգօյն ինձ գիւ_տին և հեշտակառայութեան: Շատ են իմ պարտաւորքս և անդուլ քան զթիւ, այլ ոչ այնքան հրաշալիք իբրև զքո զողորմութիւնդ. բազում են մեղան_

քըս , այլ յաւէտ են նուաղեալ ա-
ռաջի քոյդ ներողութեան · յանձինս
են չարութիւնքս , այլ յաղթական
են համայնից , հզօր ամենակալ , քոյդ
մարդասիրութիւն · ինձ են անհա-
մար խնայս անձին իմոյ , այլ քեզ
յոյժ դիւրաւեալ են ըստ ամենայնս :
Ոչ են այնքան զօրաւորք առ կեն-
դանութիւն զէնք մեղանաց պատ-
կառեցելոյս պատրաստութեան , որ-
քան յիշատակ մահու կենդանութեան
առ փառաւոր կործանողին բանու-
թեան : Զինչ ազդեցէ փոքր իսա-
ւոր' աւուրք Աստուծոյ , զնոյն
բաւեսցէ գոյն ինչ այժմեանցս' մե-
ծիգ Ծառայութեան , զինչ համ-
բարձցի կշռեալ ընդ խաչի քո երկրի'
խոնարհութիւն հեշտութեան մարմնոյս
ախտարութեան : Զինչ երևեսցի յաւա
ամենակարողիդ քո առատութեան'
կարող մեղանաց ամենայն ախտեցելոցս
ահա կշիռ մի հողոյ գիւրաւիրելի
'ի կործութեանն բախման վանե-
ցեալ · իբր զանգաշնակ անձրևոյ բազ-
մացեալ հասանելի քո կամացդ շրջա-
ցեալ պայծառեալ անդամին : Զինչ

սխալ են քում գրութեանց անե_
ռաՀնարգ կարգութեան ժամանա_
կաց տատանելութիւն առ յանցուա_
ծոց խմոց քաղաքութիւն . ոչ գիթթել_
մի ակամն , ոչ խառն մի անտառութիւն
ծանանցական , ոչ աակառ մի Նայե_
ցուած փոյլական , ոչ կխամանանեայ
յամբութիւն , ոչ փութայեղց ամից
յեղյեզումն , ոչ յեղից բարձրութե
մից կանգնոյ կամթի անկելոյ , ոչ
գիծ մի չափոյ մնայ Հեռանեցելոյ .
ոչ Նչուցից արարդութիւն , ոչ չնչոյ
ասրեառութիւն , ոչինչ յայամ յան_
գոյ և յանդապատական Նմանու_
թենէ անՆՃև սրխնակաց յաւէա ան_
կայից՝ այնքան առժամայնք կամ
Հարկանցիկք . այլքան եղծմունք .
ցնդմունք և Հալմունք մեղայս ստա_
մանեայ պարՀեստի՝ քումդ զրու_
թեան , Աստուած անՆնայնի առէր Յի_
սուս Քրիստոս , Որդի անդրնին կեն_
դանոյդ Աստուծոյ ։ Որ ասա սպար_
գեես սրև քաղցրութեան՝ չարաց
ըսդ բարբիս , և անձրևես երկարան_
չիւրդ անդաչաստակես . կշռես սաՀ_
մանես խրատակք և գլխանդաս կրիցն

հաւատարտար · որոց մեծ է հանգիստն առ ամենակալութիւն պարգևին, փոքր խնդանաւ փորձութեան զանկասութիւն պարտուցն առաւել վճարես · իսկ որ զերկիր ընտրեցին, ներես ողորմութեամբ, տալով և առցա գարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ գործին աղաւես ։ Եւ քեզ փառք ամենազօրիդ առ ամենայն հրաշագործութիւն բարեխնամող երկայնմտութեան, որ հնեալ յաւիտեանս · ամէն ։

## ԲԱՆ ՀԵ.

Դարձեալ առ Նմին կրկնադարձիւ երկրորդութիւն ապաշաւանայն հոգւոյն աղերսելով, յոր ինչ յառաջելոցն սահմանեցաւ աստուածութեան՝ առ ամենայն ուղղափառութեան եկեղեցւոյ դաւանութեան մերձեցեալ նորին աւանդը: Առ առ անշնորհս նորա թէպէտ ցուցանէ երանաւոր կերպարանութեան անձնականն:

Վերստին խօսք ընդ Աստուծոյ:

*Ա. Եւ արդ ընկղմեալ զմայլեալ և 'ի սպառ ծածկեալ 'ի յանձնառութենէ առաւելութեան բարգաւաճանաց յաճախութեան մեծիդ երախտեաց, որ անհնարաւոր լինայն անհնարակելիս յաջմէ և յահեկէ՝ 'ի գիրկս և 'ի թիկանց համբարեալ կան անդրաւութեամբ:*

*Բ. Մատուցանեմ ընծայեմ զարձեալ սաստանօք առանց գովեստի դասանման ծնծղայականի: Զի որ-*

պէս երբեմն հերձուածականին չա-
րափառութեամբ ամենապատիրն
խաբէութեամբ նենգողին կարթիւն
հատուածեալ 'ի բաց հերքեցայ՝ ե-
լեալ 'ի գլխովէն . արդ մխիթարա-
կանաւս այսու ուղիղ անդրձու-
թեամբ 'ի յաւանդ խնկարկես շնորհի
անդրէն միւս անգամ համբարձեալ
ամփեամբ՝ 'ի թռիչս թևոցն լուսոյ
աւհա յերկինս ժամանեցից հեռե-
ւեալ :

Գ . Այլ քանզի յարգանդէն՝ յո-
րում յղացայ հոգևոր երկամբք ծնի-
ցեալ, զմեծ և զերջանիկ գլխոյ անա-
րատ՝ ամենից կուսից խնկուհի՝ ըղ-
ձանծալի մայրն իմ զովելի պարտ
է կանոնաւ սահմանի բանի արձա-
նագրել յայսմ մասունի, զի ծանիցի
ցուցցի և այլոց եւ ապագայից ազ-
գաց պատմեալի որքանութիւն փա-
ռաց խնկելոյն, արժանապէս պաշ-
տամամբ պատուեալ իբր մայրուր մար-
մին, ընդ գլխոյն մարդեղութեան
բանին Աստուծոյ, 'ի յիշատակ Ձա-
ռիս հաւատոյ Ներբողութեանն
դաւանութեան : Եւ արդ 'ի յայս օ-

րինակ հոգենկար պատկերի բանի , որ գեղապանծեա լուսոյ յարմարի . ընկալ զիս , զխժած արջնեալ , քաւեցեալ և սրբեալ 'ի ամէն : Հան ատեա 'ի հոգւոյս զնախատինս մեղացս , անմեղս և անբիծս ընդ հովանեաւ արին բազմեցո , յաւէլ զակաթս 'ի առաՆՆ Դաւթի , և անդուստ փոխեալ 'ի տաՆգ Աստուծոյ , ըստ մարգարէին ձայնի՝ որ 'ի քեզ Յիսուս ակնարկի : Մի տար զմխիթն , և մի անդուստ զելեյն հեռաւորութեան արտացես . մի դժնատեսոյս ջերմութեան ցուրտ համարեսցիս , և մի գժանդրայր ողջունիս անկարգ խոչմարեկանեցիս , մի զպաշտաման սպաշնորհ զրկեսցես , և մի զերկրպագութեան անխորհուրդ լքցես . մի անպատուլ լիցի տեսականութեան պատակերին , և մի անմնչոյլ կերպարանին արանչելութեան , մի անհնար ողջակիզին ապանդ մնասցի , և մի պատարագ ունածի այս Ձանփ՝ արտաքոյ ցրեսցի , մի Ձաշակդ լուսոյ խնձ մահու լիցի , և մի բաժակ քո կողեցդ արեան 'ի դատապարտութեան եղիցի :

Դ. Աղաչեմ զքեզ, տէր Յիսուս մի՛գ յէութենէդ, որով զգիտութիւն Հօր քոյ եւ Հոգւոյդ սրբոյ ճաշակեալ ծանեայց, քանզի 'ի քէն իսկ փառ-գաւորեալ զամենապարգեւ կարգս եկեղեցւոյ, եւ 'ի սմին աղօթանուէր լուսարան կենաց փրկութեան բա-րեաց, տարածեալ զխորս ձեռաց համբարձմանս զայս կնդրուկ բանի ընծայեցից 'ի սմա ախորժից ընտրից երկրպագելեաց. մատուցեալ յանձն ընծայեցուցանեմք այսու բարբա-ռով բարեխորհրդութեան:

Ա— որ 'ի Նիկիայն առաջնորդացն քան, այլ եւ խորհրդաժողովն առաքելա-կան աւանդութեան:

Ե. Փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնութեան երգոց 'ի համատ պաշտամանն բանի զբարե-հրաման պատուական եղելոց զնորոր-գութեան անսկիզբն՝ անհամեմատ բարձրութեամբ անհասական խոր-հրդոց եւ անքննելի խնամոց. անզննելի զգայութեանց եւ անբե-

բեղի եղելոյ, քանակութիւն վեր-նականն երկնի և անսահման ներբ-նոյին խորոց, լռութիւն անպատմանց և նախագրութիւն սկզբանց. մի յե-րեց անշփոթ կերպից, և երբեմ՝ 'ի միոյ անհատուածելի խելութեանց, 'ի վերքան զմտաց անարգելութիւն յարամնակեալ ամենայն ուրեք բովան-դակ։ Անփոփոխ բարի, անսասա-նելի ուղղութիւն, անխառն կեր-պարան սիրոյ, մեծութիւն անչա-փորդ, բարձրութիւն անխոնարհե-լի, անվանելի առաքինութիւն, բարերարութիւն աննուազելի, կամք կայուն, հրաման կենդանի, անկե-արկութիւն փրկչական, երանու-թիւն ճշմարիտ, անկեղծութիւն հաստատուն, խոստումն անստելի, ա-ւանդ արդատաւուր, առոյգ աւե-տիս, վերամբարձութիւն անձեռն-արկելի։

Զ. Մի հայր միայնոյ Որդւոյ՝ միական հոգւովն պատուեալ, ա-մենահզօրուստ բարութեամբ ամե-նեքին ամենայն 'ի չարէ, որհնաձայն գո-հարանութեամբ անքնին ներբողե-գովեալ։

Է. Մին բարձրեալ աշաւոր
անուն՝ համապատասխան կցորդու-
թեանց, անպատումն ազգականու-
թեանց. եռալուսեանն զուգակցու-
թեանց, անյաւէլուածն լրականու-
թեանց, ինքնիշխան կամաւորու-
թեանն պատուաւորեալ առ հայրն
հանգունատիպ՝ գործակցութեանն
հօգւոյն սրբութեան խոնարհեալ
իջեալ 'ի յերկնից, անճառ գոլով
ընտանի փառացն, համեցաւ մտա-
նել յարգանդ մայրենի Աստուա-
ծածին կուսին մաքրութեան. յա-
րուց անձեռյց գրոյն օրհնութեան
'ի լուսատուհման անդաստանին ան-
արատութեան. ընդ անմեկնակաւորն
էութեան համանմանեալ յանմանեբր-
ակեա մեկանութիւն, թափանցա-
կան խառնութեանն յաստուածու-
թեանն ազի բաղկացոյց գգոյութիւն
ընչյս հրաշալէս։ Որով անճառամ-
բակելի երաստանու անձանց կրթու-
թեան զաստուածակութիւնս իմ՝ հան-
դարտեցոյց. և կամաւ ընծայեալ
խաչին՝ անմարմնա ծաղկին պտղոյն
կենաց 'ի ծայրս լրութեան անմա-

հականն անկոյ . 'ի մահ վիրաւորե_
ցաւ՝ աստուածութեանն անընդմի_
ջելի 'ի մերձաւորն մարմնոյ , որով
կենդանացոյց զգործին պարտեաց ,
արարչութեանն խոկութեան 'ի նմին
յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթա_
կան մարմնոյն վշտացեալ : Իջեալ
'ի վայրս խաւարայինս դժոխոց , ե_
հան զկապուսն խորտակեալ 'ի կա_
պանաց օդայինն . և իբր 'ի նիրհման_
նէ քնոյ զարթուցեալ , յինքն նահան_
ջեալ զգիտնացումն մահու , կանգնե_
ցաւ կենդանացաւ աստուածապէս՝
ելեալ 'ի յերկրէ հացն կենաց և հա_
մփան հարկց բանաւորականաց : Հա_
ւատարիմ եղև յաշխարհի , և երևե_
ցեալ նորոգութեամբ ամենեցին ան_
նուաճելի , որպէս էին համայն , և
համբարձաւ բարձանդակ . բազմեցաւ
նստաւ 'ի գերունակն գահոյս նախ_
նականին պարզութեան արարչա_
կան փառաւորութեամբ : Զոր խոս_
տովանիմք Աստուած բարերար և
անէր բոլորից , որ գտանի զամենայն
երկիր արդարընթացութեամբ յաւու_
րըն մեծի . որ ինքն է սկիզբն և ինքն

կատարած, նոյն առաջին և նոյն
առայարոյ, անպակաս բովանդա-
կութեամբ թագաւորեալ 'ի լոյս
անմատոյց:

Ը. Օրհնաբանեմք ընդ Հօր և Որ-
դւոյ և զանբաւանելի բղխումն
նոցին՝ փառակից Հոգւոյն սրբու-
թեան. որ առեալ զբնաւս և կեն-
դանածնէ զամենայն, որ անդադին
խօսի 'ի բնէ համապարփակ մթու-
թեան աշխարհակալն միգի շրջէր
նկարէր և կերպարանէր ամենա-
նակ ջուրքն անդրաւութեան եր-
կրատարածն ծովու՝ 'ի կատարումն
արդեան խորհրդոյս՝ զաւուրբ աստ-
զանն լուսոյ. նախ արար և այժմ
գործէ, գոյացոյց և միշտ կատարէ
արարեալս, պահպանէ, նախախնա-
մութիւնս սրբանալոյ, աղխմունս
աստուածօրէնս, զօրութիւնս զար-
մանաւորս, մարգարէս, առաքեալս,
վարդապետս վարժողս կրթութեան
հանճարոյ: Զարդարարն մատուց-
մամբ արեանն Քրիստոսի յարգա-
րեաց, քաւութիւնս անձանց, ա-
ռաքինութիւնս մարմնոյ, ընդ նմա-

նութեան Քրիստոսի ողորմութբ հրամայեալ ։ Մկրտեալ և գեր ջան զջուր , ինքեան միայն բաւականութեամբ նորոգեալ լուսաւորեալ ․ հանապազ նովին բարեգործութեամբ զօրանայ ։ Վկայեալ միածնին աստուածութեանն ՚ի հօտանէն Յորդանանու , օրինակաւ տեսութեան ամպոյ ցուցաւ ձայնիւ Հօր ՚ի լերինն Թափօրական ։ Ի նոյն տիպ նմանութեան հովանի եղև յակոբեան առաջին ՚ի յելսն Եգիպտոսի ․ յուղեգնացութիւն զօրավարութեանն Մովսէսի՝ հովանով սատակութեան զփարաւոն ընկղմեալ ։ Քահանայս կատարագործէ , իմաստունս կազմէ , Թագաւորս զօրացուցանէ , քաւութիւնս ընձեռէ , կեանս շնորհէ մահացելոց ՚ի նորոգութիւն յարութեանն ։ Նոյն ինքն է օծումն մարգարէացելոյն Աստուծոյ ․ մշտնջենաւոր հաւասարութեամբ ընդ Հօր երկրպագեալ՝ ՚ի պատիւ մեծութեան Որդւոյ , անսահման փառաւորութեամբ օրհնեալ յաւիտեանս ․ ամէն ։

Նախանձու Հռոմ եկեղեցւոյ, ընդդէմ մա-
նիքեցւոցն, որ են պաւլիկեանք։

Թ. Դաւանեալք 'ի հաւատ ուղիղ
և անխոտորնակ անդրդուելութեան համ-
բուրիւ շրթանց ողջունեալ զկատա-
ցեալս խորան յանճաշակական արժա-
նաց՝ աստուածային բնակութեան
եկեղեցւոյս շինուածոյ. որ գերա-
զանց գոտու և երկնի ամենազարդ
բարձրութեամբ, որ 'ի նոյն իսկ յա-
ռաքելականացն դասուց հիմնեցաւ,
յաշակերտաց վերնոյն խնկեցաւ. 'ի
սպասաւորաց բանին պաշտեցաւ։
Սկիզբն առեալ կենացս այս դան-
ձու 'ի վերնայարկն սրահէ, խորհր-
դականացն վայրէ, զոր Հոգին Ա-
ստուծոյ լցոյց, փայլեցուցեալ 'ի նը-
մա զօրութիւն յաւուր մեծի պեն-
տակոստէին. նախ զառուն բարեան-
ոիլ՝ յօրինակ սրբութեան կատար-
ման շնորհի այսր եկեղեցւոյ կան-
խամնծաւոր առաւելութեան, յո-
րում այսպ և 'ի նմին բնակչացն

տուաւ լուսաւորող բարեփառու-
թիւն։ Ուստի արիւն հզօրին Սատա-
ծոյ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ
քան զՀաբելին մաքուր զոհաբերեալ,
մեծաւ բարբառով ձայնի բերկրու-
թեան կենդանութիւն անմահու-
թեան ՚ի մեզ աղաղակով։ Քանզի ոչ
է կար զօրութեան ուրուք ընդ եր-
կնաւ յանդիման արեգական ՚ի սպա-
սաւորութիւն խորհրդոյ այսր աշխա-
ւորութեան ձեռնարկել, եթէ ոչ
ընդ թեւք սորին պահեսցի. նա զի
ոչ երկնիւք բաւականանայ այս նը-
ւէր անէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս
ձեզուն օրհնութեան ծածկոյթ ու-
նիցի. վասն զի մաքու անիծիւք հեր-
քի այլ ըստ արինին, որ արտաքոյ
խորանին այս վկայութեն պատուա-
ծայրին պատարագն մատուցանէ.
մանաւանդ զի պարտաւոր արեան
կոչեսցի, որ ոչ զանձինն արինակ ա-
րիւն յայս նուիրան ընծայեցուսցէ։
Մի ՚ի մեզ լուսացումն ՚ի մաքուն Քրիս-
տոսի, զի մի յանդգնա անարգեալ
աստուածութիւնն՝ ՚ի ծանուցե-
լումն զնախնեաց կրեսցէ. մի ձեռնա-

գրութիւն 'ի պատիւ ածութեանըն-ւոյն, զի մի յամբծութիւնն խարէ-ութիւն խառնեսցի. մի և ընտրենք քան թէ ապաշխարութեանց քա-ւութիւն, զի մի Ճշմարտութիւնն կերպարանօք խորամանկեսցի. մի յընտրութիւնն ազատնի՝ հաւատ, զի մի ապաւանօքն հաստատեամբն զը-րոյցս ինչ սուտ համբաւոյ գրեսցի. մի երկպառակութեանց գայթութեանց մե-րոց իրաւամբք կշտամբութիւն, զի մի՝ կխտամանեայ առ մարդն ինքին և առ արտաքին՝ չարի և կամբարուսց փոխարարութիւնն կարծիցի յանձնանց զօրութիւն արքայական որդեգրու-թեանն, զի ընդելութեամբ երկրայ-նովս առաւելութիւն վերընուին թա-գաւորութեան յայտնապէս Ճշմար-տեսցի. մի յոյս կենդանութեան առ անեղծութիւնն որոց. զի ան-երկեանութիւն խառնակելոյն 'ի միտս ունկնդրացն ծանուցեալ հա-ւատասցի:

Թ. Այս գլխոյ պաշտպան անչիշա-կան եկեղեցի առայ կեանս և մահու-իշխէ, ըստ օրինակի ադամեան պըտ-

զոյն յարմարագէս ճաշակելի․ գե-
րազանց քան զբանականս յանչըն-
չութեանն հրաշագործէ․ մինչ զի
կատարումն ընձեռէ և նորոգ հաս-
տատէ, վերափոխեալ 'ի մեզ ըղ-
կերպարանն փառաց լուսոյ։ Գը-
րեալ են է ասակ մեծութե վեր-
նումն կամարին ակզբնաւոր յառա-
ջակատոյց քան զընակիչս հոգեղի-
նացն 'ի նմա զօրութեանց։ Նոր ինն
ընծայէ թուիչս մարմնոյ ընդ թե-
թևութիւնս հոգւոյ, պատուակա-
նին հարստութեամբ զանարգն յար-
գաւորեալ։ Ոչ ինչանկիր մեզք զաղ-
բանոյ, եթէ ոչ 'ի մարդոյ չարաց
և կամ յանհնաւանից կոխեցի։ Տեղ
ինն է զարմանաւոր յաղթող խմա-
ստից մերս անասութեանց․ անդամն 'ի
բանաւորէն կառուցեալ, նմին օժան-
դակեալ իւր վեհագոյնն յաւէտ
նուաստի։ Մեծ է քան զմարդ, որ-
քան ընտրելոյն Ադամայ ցուցն
յաղթողական, առաւել քան զբա-
նաւոր, որքան զԱստուծոյ զուա-
զանն խորհրդական ծածկեցեալ․
գերազանց քան զմնաւոր, որ-

չափ զՆշխաս և զՆշխեցոս գետա-
հերձ մուշկեան պանծալահրաշ
փայլեալ արուեստիւ։ Օգնութիւն
պարգևէ կրկին անձնականաւ սրբ-
բանեալ ձեռաց մաքրարար, քան
թէ զինուորէս. մարմին նշխա-
րանս քարի և հողոյ, զոյակից հարա-
զատ զգայականաց և սրբոց։ Իբր ըզ-
մէմն անմահ կենդանի 'ի կործանում
է և 'ի կանգնումն. ամփ զգաստաւորն
անձնից հոգւոց հանգիստենց հրա-
շալէս ազգամաց յանէծս և յորհ-
նութիւնս. իբրև աներող անկրկնու-
թեց զամե հրապարակէ և զամե ատ-
ծէ. առ. ինքն կոչէ յանուանէ իբր
զախրող հրամանատար էիցս։ Իբր ըզ-
լեաան յաւիտենական անհարատա-
ծելի է 'ի գիտնամարակից. ըմբռնէ զհա-
գևորս իբր զհնարագրութիւն մեծին
արուեստի. անմեղ և անվրիպու-
թիւնս ըստ Գրիստոսի հետոյն ըն-
թանոյ, բարձր Տիրութեամբ ան-
պատկառարար համարձակապէս զը-
րէն գովելոյ գլուխ ամբոխաց։

ԺԵ. Այնքան մեծ ունիսարութի,
մինչ զի զորս ըստ պատկերի Աստու-

ծոյ եղեն, կանոնաւ խօսել ։ Յետ յոգունց ընդարութեանց փորձից թէ համարձակեսցի մարդ որ սիրելով 'ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղնծի. այլ ընդ անպատրաստութեան թէբութեանց գժուարի. ոչ նզովի, այլ անցի առաջ ոչ գիտողացն զշնորհին զլափ. ոչ լքանի ինքեամբ պարտաւոր խորհին գտանել, այլ 'ի մերոց գործոց խրթնանայ. ոչ թողացուցանէ երկեցս մտաչել յանդանուանութիւն կենդանատուաց. ընդ տիրական անձնա. խորհրդոյն. ոչ կրկին յաւուր զնոյն ցուցանէ, զի մի անընդունակ նուիրանն խոյտասակեսցի։ Վշտակցէ կարեաց զօրավէս իբր անախատակիր ապականութեանց որ 'ի մեզ շարժմանց. աւանց բարրաւոյ տիրակէս հրամանաւ գտանի ։

ԺԲ. Նա զի և ատայան իմն է մաքրական, կրկին երջանկական, 'ի հեղձմանէ կենցաղոյս անեալ պահապան. ոչ բազմաց անդրանիկք գալանաց գատուք և ամբաւ մարդկանց, այլ ընդ երկրայնոյս և զեփիւռն յինքըն հաւաքէ. ոչ յակիս խաւլա-

թեան բերի, այլ 'ի բարձրութիւնն
երկնից համբառնայ։ Իբր զաշակերտ
հրահանգեալ Հոգւոյն Աստուծոյ
փախչի 'ի նենգութենէ. ոչ 'ի բաղք
մահու մարմնոյ հարուածոց, այլ 'ի
կենացն աւետաբերանեալ ածէ. ոչ
'նոյն ձեռն արկեալ գործի, այլ
հաստոցին հրամանաւ չինի. ոչ Մով-
սէս ընդ Բեսելիէլ, այլ միածինն
Աստուծոյ Հոգւովն որով զնա
հանդերձէ. ոչ յարաշարժ հանա-
պազափոխ, այլ մշտակայացս հիմամբ
անսասանելեաւ զնա հաստատէ։
Դարձեալ իբր զառաջնակն անխօս
փայտեղէն մածեալ տախտակօք ա-
ռանց զգայութեան աւաղակա-
նաց մեզ աւանդեալ է. որպէս կեր-
պարան անքանակ կէին յառաջ հե-
տեւեալ 'ի հանդերձեալսն լուսոյն կե-
նաց անկցի պատրաստել։ Ընդ Եզեկիէլի
անուսուսատ տաճարէ, եթէ ոչ խաչա-
պէս յոգի բերիցի. այսպանէ վառ-
նեալ փայփայեալ աստուածայն, եթէ
անմանայինն ըմպելութեամբ եր-
կրաւորապար գեանուկին այլեւս.
իբր զանօթ խնչ ձեռնայննին բար-

ձեռաւ առնիցի։ Ոչ ըմբռնաւ մարմնոյ, այլ բանիւ Հրեշտակաց խօսի. ոչ ան_կան գոյականութիւն, և արարա_ծական ատաւ է նա, ոչ ձայն կերպա_ւորական բարբառոյ, և զգայացմա_գործոցն Յիսուսի Համբերէն ազգաց պատահմամբ Հնչակէ. ոչ խաղալեաց շարժականութիւն, և տառածայ_նով ինն կենդանութեան Հաղա_գաւ ազդէ։ Ոչ ամեկեաց և Ջրաց յօդուած, և երկուք Հաղորդք կան_գնոյ լայնութեամբ՝ իբր զգունդն անՀամար բարձրեալն Աստուծոյ զկենդանական զօրուն զումարտակ Հերկրայական վասն եւ արխսխին. և այժմ ընդ նուսին իբր զանձնա_քաւոր ՚ի սրբութեան զանձնս առաքիւ_մեզանեաց Ջեռեալս Հաստատեալ յինքնէնէ Հեռի, ուղեկցէ աղբեցե_լոյն ՚ի առաժանաւոր այլուապետու_թեանցն։ Նոյն խոկ էութիւնն Աս_տուծոյ մարմին եղեւ՝ անուանք այս վեհի նշանակեցաւ, պատուա_մամբ կոչին զինուս արբուցեալ։ Ոչ արեան երակաց ընթացք. այլ լուսոյ վերնոյն շատաւորք թափան_

ցանց միութեանն զայն կենդանա-
ցուցեալ՝ նորոգ պաշտպանէ. ոչ Ա-
ղամին կամ Զօրաւորին մահկանա-
ցուացս տափկանութիւն, այլ ամենից
ունողին խմաստ զաս գծագրէ. ոչ
անձնաւորական հաստատականաշակ
խաղալառ 'ի Յակոբայ պարարի, այլ
աշատորին արեանն և փառաց մեծին
ծանի։ Ոչ առան երկրայն նիւթոյ՝
քան թէ մարմին երկնայն լուսոյ
Աստուծոյ զարին որդիս կերեալ
ձեռնագրէ. ոչ կենդանագոյս յերկրէ
յղացմանս, այլ արքայութեանն
երկնից ժառանգս կոչէ, զի ծոց
իւր գրգեալան գոգոյն Աբրահամու
ընծայեցուցանէ։ Փեսայ հարսնու-
թեան սորա որդին Աստուծոյ կեն-
դանւոյ, որխորդք խնճոյից՝ հայրա-
պետացն գումարք։ Այն ինքն մա-
ռացումն առնէ սպառել բարձանցն
կռամոլութեան, զի զերկնայնոյն
Աստուծոյ ունի զծանօթութիւն.
աստուածութիւնէ ամենայնիւ զիշն զրա-
շեալոց. զի 'ի համարէն քարինս սորա
Քրիստոս երկրպագի. քանզի ամ
է յայտնապէս ուրուական ըղձիցն

անտառաց, զի 'ի բնաւից մայրից ա-
խարհինանուԹեամբ կենացն փայ-
տի 'ի սմա տէրն նուիրի· խաչատակուԹն
է համայն գիւտապատիւ յաղԹիցն
արձանաց, զի քարն գովեալ կարկե-
հան ակամբք և վիմօք կենդանեաց
այսրէն հաստատի:

ԺԴ. Այս յարկ չքնաղ և սո-
տուածընկալ ապա է միանգամայն
'ի յաւիտենական ծառայուԹենէ, ոչ
օրինակ վերնոյն Սիոնի, քան Թէ ճըշ-
մարտուԹիւն նմին ճանաչի. ոչ կաւ-
պաշտուԹեանն կապս բացին և
կամ ընծայ օրինին ուխտի պարտաւո-
րուԹեան, այլ ազատուԹեան բարերա-
րուԹեանն պարգևարան 'ի մէնջ համ-
բուրի. ոչ սատանի եւրէք յայլ խոն
կերպարան ձեռյ փոխարկեալ, այլ
'ի նոյն չուք փառաց մեծաւէս ընդ-
արձակի. սոյն ինքն և երկին երկնի
յերկրի լուսապայծառ կերպիւ հրա-
ջակի: Որպէս չէ առանց հօրն Բրիս-
տոսի, և ոչ առանց այսր մօր արգան-
դի յոգի կատարիլ: Այնուն չքնի
անդրաւանդակեալին, եԹէ ոչ 'ի սմին
տան տաղաւարեայի. ոչ ունի ուխտի

գլխոյն հանդառեան տէրն բոլորից, եթէ ոչ 'ի յայս կայարան կենաց մնեալ ազանիցի։ Բան 'ի կամաց վերնայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բնակութիւն առաւել պարծի. անբաւութիւն աստուածեան լուսոյն, որպէս զցէմս մարգարէին և զբրինակս սորին ծածկեցին, որպէս փախեան 'ի փառաց երեսաց նորին, և նմանութեան սորուն՝ որ 'ի տաճարին, ոչ հանդարտեցին, 'ի սոն հանդիսի մեծի գալստեան, և 'ի բանականացս զաստուց խնկեալ նուագի. առա օրհնի կրկին բաղձանօք, քան 'ի գրախտն վայելչական։

ԺԴ. Այս մայր հոգևոր երկնաւոր լուսաւոր, քան թէ երկրաւոր չընջաւոր մարմնաւոր, զիս զգուեաց որդի. կաթն առեանց աղբեր արիւնն Քրիստոսի։ Եթէ աստուածածնին իսկ պատկեր զայն որ գրեացէ, ոչ անորինի։ Իբր զնշան խաչին փրկութեան զօրութիւնս զարմանազանս և արտաքսաս բաղձորինակս կատարեալ հրաշագործ է. բեմ աջասորին առենի՝ 'ի սմա հաստատեալ անա-

նի ․ սոսկա խորթարարոյին հեր֊
ձուածոցոց մոլեգնամաղ բերանք
կարկին ։ Ունի և քարինս իւն խմա֊
նալիս և բանաւորականս, որով զգա֊
ցանամիտս անմտաբոյս բացուստ ՚ի
բաց հալածեալ տարագրէ ։ Ընտանի
և աստուածատուս ոմանս եղականս՝ պատ֊
կերս մաքրուրս միոյն Աստուծոյ
Քրիստոսի ։ Ունի և զգիրն իւր ընդ֊
արձեալ՝ ՚ի ամէջի խոստմանն բնակու֊
թեանն մերոյ առաջնոյ․ ձեռամբ իւն
ցուցանէ յայտնապէս զզարտեանն
Աստուծոյ շաւիղ, զխայլականն ա֊
ռակ արբականն ՚ի դէմս բերեալ մեզ
վարդապետէ, զիրկութիւնն ՚ի յե֊
լից անուն ծաղմանն արուեստին
քրիստոնեան երեմանն ՚ի վերջնում
աուրն սրբարածոց երկրի թագաւո֊
նէ ։ Յասա հալածէ, սխառամբեա
բժշկէ, զկեալ բանութեանց զօրէ ։
Արգանդ որովայնի ասրին ասպանն
կենդանարարս ․ ՚ի պարս հարսանեաց
սորա դասք սռաքելոցն ։ Միջանն
ձոխացեալ բարգաւաճեալ երանու֊
թեամբ, մինչ զի նոյն իւրն փրկչին
անուամբ փայլելապէս յորջորջեցաւ․

տիրամօրն լուսոյ կուսամայր 'ի մերձաւորաց միածնին ձայնիւ կնքեցաւ : Նաւելոց մեղաւորաց նաւահանգիստ հանգստութեան, խրախճանութեան վերնոյն գաւառաց , բժշկարան ախտալիցն տարակուսեալ տառապելոց : Երրորդութեանն անպատում 'ի սմա փառաւորի օրհնեալ յաւիտեանս :

ԺԵ . Իսկ եթէ ոք ձեռն չարութեան 'ի վերինն արքայութիւն յանդգնաբար համբառնայցէ , և զխումբ մարմնաւոր և կամ հնարք մարդկային և կամ արուեստ երկրակենցաղ զառահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի , և ոչ պարգև առաւել կենաց և անձկալութիւն աստուածային և հոգւոյն սրբոյ յայտնեալ լուսանորոգ նախագրութիւն, և երախտեաց բարձրելոյն ամենատուր ընծայութիւն, և կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան , և առաքելոց ձեռինն աջոյ բարեհանճար հիմնարկութիւն , և միանգամայն տեղի՝ դուռն երկնից և քաղաք Աստ

կենդանւոյ և մայր կենդանեաց ա-
զատ 'ի պարտեաց և ճշգրիտ անեակ
կերպի երկնային բանականի, խնա-
նային՝ խորհուրդ հոգւոյս, և շքա-
փելին՝ պատկեր մարմնոյս, և սրբու-
թեցն անդ անձնաւոր գերազանցեալ-
նոր սրբութիւն, և քրիստոնեանն
նշանաւ պայծառատպարծ պատկե-
ցեալ. զայնպիսի ոչ խոստովանողսն
մերժէ յերկնից իւրոց Հայրն ամե-
նակալ 'ի ձեռն Բանին իւրոյ էակցի.
բարձեալ 'ի նմանէ և զաւանդ շնորհի
Հոգւոյն փառակցի. փակեսցէ ըղ-
դուռն կենացս այս առագաստի
յանդիմանն նորին։ Իսկ մեք զորս
գրեցաք՝ ամէն և վկայեմք, հաւատա-
ցեալ որում կարգեցաք, յանուն
և 'ի փառս ամենակալ Երրորդու-
թեանն և միում աստուածութեան,
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այն իմ հաւատ յԵրրորդութիւնն, և այս
'ի Մայրն իմ լուսաւորեալ ուղղադ-
աւանութեան։

# ԲԱՆ ՀԶ.

Վերջին յաւելուած երկին հետեւութեան նորին հոգւոյն — նոյն ազդեցս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ԱՍՏՈՒԱԾ ողորմած, բարեգութ, հզօր, ահաւոր, մարդասէր, օրհնեալ, կենդանի, անճառ, որ ոչ եղանիս երբէք ըստ բանի քո իր անձկանարկելի, որ և միայդ ես անհնարաւորութեանց քո է հաստատչանել պատուի բարձրութեան ընդ փչոյ խոստովանութեան, բազկերկնահայից ապաշխարողաց և գոյանանաւ որ կանոնաց կենաց. քանզի բարի առնել ամենեցուն և ազատել ՚ի մեղաց հալածչին, և փրկութիւն հայցել խոցողին, և ապաւինողին ներումն խնդրել՝ ՚ի քէն ընծայեցաւ պատուիրաալս հրաշից. որոյ քաղցրութիւնն անճառ է քան զգինեակ և բարերանեալ կամաց քոց ախորժելիք և գո-

վեալ չըմթանց քոյ ճշմարտելիքդ. հոգի երկնայց և զօրութիւն գեղջոյ մերոյ ամէր Քրիստոս օրհնեալ 'ի բարձունս: Ա. յլ մարդք երկրածինք և անձնավիճակք՝ և բարեմասնայց ձեռաց շարիս գործուցին. իսկ դու լոյս և սուրբ լուսոյ ոչ լսես անէծս, ոչ ախորժես չար, ոչ կամիս կորուստ, ոչ ըղձանաս մահ, ոչ յուզիս 'ի խռովութենէ, ոչ տիրիս 'ի ցասմանէ, ոչ հարկիս 'ի բարկութենէ, ոչ մթանաս 'ի սիրոյ, ոչ այլայլիս 'ի գթութենէ, ոչ փոփոխիս 'ի բարութենէ, ոչ թիկանց շրջումն և ոչ երեսաց անդրդարձութիւն, այլ ամենեւին լուսաւորութիւն և նկատումն փըրկութեան:

Բ. Եթէ քահանայես, կարող ես. եթէ բժշկես, զօրաւոր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես, հնարաւոր ես. եթէ սրբագրես, ամենայն ես. եթէ դարձուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ

հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես. եթէ վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին գոյացուցանես, Աստուած ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կորզես 'ի մեղաց, այցելու ես. եթէ չարչարանեացս ընձեռես, օրհնեալ ես. եթէ յորդորէն զերծուցես, փրկիչ ես. եթէ զեղցես 'ի քոյոցդ 'ի մեզ, հարուստ ես. եթէ նախքան 'ի մէնջ խնդրելն դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լայնես ներողութեանս, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խնամակալ ես. եթէ զատանեալս հաստատես, վէմ ես. եթէ պարգևելոյս արքայութիւնս, աղբիւր ես. եթէ զծածկեալսն երևեցուցանես, լոյս ես. եթէ զօգտակարն իմ ծանուցանես, բարի ես. եթէ զբիծան անտես առնիցես, երկայնամիտ ես. եթէ ընդ փոքուս 'ի դատ ոչ մտանիցես, քաղցրեալ ես. եթէ ծառայից ձեռն մատուցես, առաջօղ ես. եթէ աջովք քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. եթէ վհատելոյս դարման մատու-

ցես, կերակրիչ ես. թէ զանդէտս պարապեցես, վարդապետ ես. թէ զգիտնոյն առ քեզ ընկալցիս, ապաւէն ես։

Գ. Իսկ արդ քո են այսոքիկ, ահա առողջութեան, ոչ միայն գրեալ. այլ կատարեալ և գլխաւորեալ. Նախնի նախաճառակք համբերութեան վիկայից, որ վասն խմոյ փրկութեան հանդիպեցար զօրապէս յառաջաբնի Ճանկառուն, զի կանխեսցես զկարծր բնութիւն մարմնոյս զառողութե վարժմամբ կրթութեան չարչարանացն վասնդի. և յանդարատակերդ մարմին չափեալ զբնութեանս մերում զառաջնորդականն առաջնորդ առժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

## ԲԱՆ ՀԷ.

Վերջին յաւելուած երկին հնծաւթեան նորին հանդէս առ նոյն աղերս ճաշակաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Ո՞Վ քանդղի որ է օրհնաբանեալ և լուսաւորող կշռութեան երկուց ընտրութեանց արարածոցս ստանութեանց՝ յեղանակելոյ յայլ ինն էութիւն երկնակենցաղ անփոփոխելի, ամբարձելոյն խոնարհութեան և կործանելոյս վերբերութեան, սարսափելի սրբութիւն մեծի սպասուքս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուազ ձայնի հեծութեան զուարճախօսն երկնիւղին, առհաս ըղձալի համարիմ առել աստանօր 'ի քոյոց սպասի՝ զոր ընդ իմ կրեցեր. Աստուած բազում.

Բ. Կայցեր յառանի քում առեղ֊

ծուածոյն խմոյս կերպիւ, ոչ խոստ-
ցար տուիչդ բանի, ոչ բարբառեցար
հաստիչդ լեզուի, ոչ ձայն արձակե-
ցեր ստանիչդ երկրի, ոչ մռնչեցեր
ամենազգեցիկ փողդ մեծութե, ոչ
երախաեւոյն քո յանդիմանեցեր եւ ոչ
չարեաց նոցին ընդդիմանեցեր, ոչ
մատնեցեր ամօթոյ զմատնիչսն զքեզ
տանջանաց մահու, ոչ 'ի կապելն
զքեզ զխնգարձեցեր եւ ոչ յապտա-
կելն դժուարեցար, ոչ 'ի թքնուլն
թշնամանեցեր եւ ոչ ընդ կոփելն
երբեք խռովեցար, ոչ ընդ կապա-
կելն սրտմտեցար եւ ոչ ընդ խաղ-
արկանելն երեսս փոխեցեր: Մեր-
կացուցին զզգեստ պատմուճանին
իւրն 'ի ակարէ, եւ դարձեալ ազու-
ցին իւր անփրկանաւոր ընթանեցե-
լոյ: Եթէ ոչ էր արբեալ կրկնակի
քացախ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ
էր հեղեալ մաղձն իմ մթերեալ
նախինի զաւանութեանն. Ճաշակեաց
մհատութեանն եւ արգել անդէն
տապականաւոր, առին մոլեգնա-
բար եւ դարձեալ մատուցին անպատ-
կառապէս: Գանիւ հարուածոց

յետոյն անարգութեան 'ի մէջ խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին, ծունր կրկնեցին նախատանաց և պսակ եդին արհամարհութեան։

Դ. Ոչ եստան հանգիստ կենդանարարիդ, եթէ ոչ զգործի մահուան կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ, առեր իբրև զհեզ, բարձեր որպէս համբերող, բատանձնեալ իբր զպարտական զփրկայան վշտաց. որպէս զծառայի չաչանաց հովանաց՝ ուսով բերեալ զգէնն կենաց, զի յարհաւրաց գիշերայնոց զխաւարակերպս դահճորակս մարմնեղէն գոյութեանս ապահանեսցէ 'ի դատապարտութեանն վայրի իբր 'ի խորախանան խնջոյից։ Հանին արտաքս իբր զոջջակեզ, կախեցին իբր զխոյն Սաբեկայ ձգեալ զեղջերացն, տարածեցին 'ի սեղան խաչին իբր զպատարագ, բևեռեցին որպէս չարագործ, պնդեցին իբր զապստամբ, զխաղաղութիւնդ երկնաւոր իբր զաւազակ, զանկապուտ մեծութիւնդ իբր զաւա-

պեսալ. զառ 'ի քրիստոնէից պաշտե-ցեալց իւր զքահանայեալ, զառաջնորդ կենաց իւր զարժանաւոր սատակ-ման մահու, զաւետարանիս նկա-րիչ իւր զհայհոյիչ օրինին, զանէր և զկատարումն մարգարէից իւր զհա-մաւօրիչ գրեցելոյն, զճառագայ-թըդ փառաց և զկնիք անձինն խոր-հրդոցդ Հօր իւր զՆերհակ ծնողիդ կամաց, զօրհնեալդ խնկապէս իւր զառաջադրեալ, զկապոյն օրինին լու-ծիչդ իւր զայր 'ի նզովս գրեալ, զհուրդ ծախիչ իւր զհերքեալ խմն կալանաւոր, զահաւորդ երկնի և երկրի իւր զհաւատոյ պատժաւոր, զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ իւր զհողածին ըմբռնեալ:

Դ. Ո՛վ քաղցրութիւնդ և եր-կայնամիտ բարերարութիւնդ ողոր-մածիդ գթութեան, որ վասն ա-պախտաւոր և անօրինեալ ծառայ-իս անէրդ բոլորից զայս ամենայն կամաւորապէս և հաւանողական համաձ.թեամբ՝ կատարեալ մարմնոյդ մխութեամբ 'ի քեզ ընկալար, և մինչև 'ի քնարան չիրմին առայանի

անապական 'ի լրութենէ ամբողջ նոյնութեան Աստուած անքնին՝ զնոյն կրեալ նախաստեղծին անձնա համբերութեան, յարեալ կենդանի ինքնիշխան բարձրութեամբ յուսոյ, աննուազ մարմնով և անթերի աստուածութեամբ։ Օրհնեալ փառօք. գովեալ գթութեամբ. բարեբանեալ մեծ ողորմութեամբ. յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ԲԱՆ ՀԸ.

Վերջափին յաւելուած կրկին հետևութեան նորին հայցողի առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Էր արդ անկեալ յերեսս հազանգիւթ կերպիւս, 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութեամբ զբարեգործից ողորմածութեան զկենդանարար սոս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծից ընծայեցուցեալ։

Ի. Աղաչեմ զքեզ, միայն խնամա-
կալ, մարդասէր, գթած, կեցու-
ցիչ, հզօր, այցելու, պաշտպան, մի
ունայնասցի վաստակք աշխատու-
թեան փրկականդ կրից մարդացե-
լոյդ վասն իմ Աստուծոյ, մի առակ
եղիցի քրտանցն կաթուած խառնե-
ցեալ արեամբ 'ի մանմնութեանն
ասուր գիշերին. մի լիցի ատուե-
րացեալ լուսոյդ երախտիս զոր ձրի
և առանց փրկանաց թշուառացե-
լումս ետուր պարգևեցեր. մի ջնջեսցին
շնորհացդ աւետիս, զոր կողից քոց
կայլակք նորոգեցին. մի անշահ եղի-
ցին կրիցդ պտուղք, զոր կարօտու-
թեանս խնամ մատուցեր. մի պար-
ծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո
ստացեալս խուրացուցանել. այլ
յաղթեսցես կամօք քո ըղձից չարին,
վերջային ապշեցուսցի մի անդամ զար-
հուրեալն, կրկին պարտեսցի 'ի
պատ զատեցեալն. մի անխայեր
պաշտպանորդ քո բան, որ զանեղ-
ծեալս քո քեզ ընծայեալ՝ վերբե-
րին առ քեզ դարձուցանէք։ Զան-
ձնան արարեր բարերարութիւն

յանակնկալ ժամանն յուսահատութեան, յորժամ բնաւ իսկ կարեալ և ստարացեալ էր կենդանութեանն շարժողութիւն. մնայր անմահհգ և զմահացեալս նորոգեցեր. եթէ զկանոն համաձևութեան օրինին փոխեցեր, արդ զցիւրինն և զհեշտականն և զևս հնարաւորն մի արգելցես, ակզբնաձիր ողորմածութեան բարեգութ սրհնեալ և երկայնամիտ թագաւոր: Ազդես բանիւդ ամենազօրաւ, որ զգոյութիւն լուսոյն ստեղծեր 'ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոփոխեալ դառնայց 'ի լուս անդր. և փոխանակ զի եա ոչ խնդրեցի հեռանել լուսոյդ, դուեյցես ինձ յայց՝ ձնաուագայթ ծագմանն հայրենին կերպիդ, և կոչեցայց առաջի քո ծառայս մնասպարար՝ ողորմեալ շնորհեալ առ 'ի քէն. ոչ է ժամանակ յերկարաձգուե առ 'ի զղջարութ հատուցանել, աչա շնորհեա ինձ տատապելոյս զերեսս քո՝ լոյսդ 'ի խաւարի սրտիս վհատելոյ: Արգել և կրպեա զընթացմանս եկից, որ մեկա զեղուն բարեկն հասեալ 'ի

յուշոյս իմ անսութենէ. պահեա ինձ զչորս ամենապայծառ դանձուցս մտացականաց, որով պատուական զարդեալ՝ քո անուանեցայց, պաշտպանեալ ՝ի քէն, անսահման բարի։

Գ. Ահա ողորմեա ինձ գթած, աղաչեմ զքեզ ողորմեա ինձ, հզօր, երկնին ողորմեա։ Մի փոխարկեր երկուսն ցաւոց ընդ չարեաց իմոց, բարեաց ամենեսին. մի բառնար ՝ի վտանգելոյս զառ ՝ի քէն պարգեւեալս շնորհ. մի կապտեր զփչումն ամենօրհնեալ հոգւոյ. մի լուծաներ զխնկեալ զկնիք աստուածական պատկերիդ։ Մի յայտնեսցին փուշք մեղանացս ՝ի սրբութիւնս մտացս. մի խզեր զկապ միութեան ընդ քեզ սիրոյն պնդութեան, մի մերժեսցես զարուեստ զօրութե՛ն լեզուոյս յարմարութեան, մի պակասեսցեներ զաջողուած աջոյս առ ՝ի զլուսոյդ մտաւոն բաշխել։ Մի գրեր ՝ի դպրութեան կենաց մատենից զմահուն պարտիս, մի պահեր, մի ինձ համարեր, մի յիշեցուցաներ, մի ա-

մուշկացուցանէր, մի՛ նախատէր, մի՛ ստմն հարկանէր, մի՛ արձանացուցա-նէր զմեղկութեանցն, մի՛ ամբարէր զկործանմանցն, մի՛ խըր գանալ խմն ամբաստանէր։ Մի՛ յարուցանէ ընդ խս զծառն անխիծից, մի՛ արձակէր 'ի յխս զատողութ մխոսուցն, մի՛ ընձի-չէր զծաղիկ մեղացս, մի՛ բերցես ընդ առաջ զնամակ սպարտուցս, մի՛ սպառաբերէր զէութիւն սրտղյն։ Մի՛ թուեսցես 'ի ձեռս երկրա-ւորացն մտաւնդդ զզխս գործոցս. մի՛ մատուսցես բան ընդ զէմ ածէղ զանդրդէնութիւնս իմ յիշատակէլ, մի՛ մատնեսցես խմոցս կամաց զուանգս հոգւոյս մարել 'ի գերութեն, մի՛ առ-նէն զխս փառաւորէր՝ զի անմանոր դատապարտեսցես, մի՛ նուաղու-թեամբ այարանցաւորի զյուխենա-կան բարին առածէր, մի՛ 'ի սակա-ւամ այամ ժամանակի զանվախճա-նէլի զխառն չափէր, մի՛ ընդ հով-ախս փչոց հեծութեան զանախ-տակամն զկեանց զրաւէր, մի՛ ընդ առուերի այար մթութեան զանձա-ւէլից ընյս փոխանակէր, մի՛ զերա-

ամենայն մտացս լսելեաց՝ բառ արտա-
դի հեռի հեռանալ, մի՛ զկամաւորս կեն-
ցաղոյս գրեսցես ինձ հանդստեան
բաւականութիւն. մի՛ զհոգիս հան-
ճարոյս տառապական արտաքս 'ի
հանդերձելոյն ինձ հրապարակել:
Եթէ ամբարես զառանց համարոյ
գործոյս իմ՛ չարիս, մեղայց կեն-
դանեայն, եթէ չանաւարտանես 'ի
սրտի, առաւօտին կիզեալ անդրոց
այրեցայց. եթէ քննեսցես զանօրէ-
նութիւնս, առանց յանդիման քեզ
լինելոյ 'ի ատեան հալեցայց. եթէ
անկանիցի ինձ թողցես զմեղսն, 'ի
նոցին փառնակայ մաշեցայց:

Դ. Ընդունեցեր, մեծա զօրեղ ամե-
նակարող, փոխանակ չարութեանցս
որ յիս, զի բարիք քո եկեալ փոխա-
նորդեսցէ. հրամայեա, գթած,
խնամակալ, գովեալ. լոյս անշիջա-
նելի, զօրութեամբ անսահմանե-
լեաւ. զի նոր հաստատեսցի գոյու-
թիւն բնութեանս մարմնեղէն յար-
կի անդամոյս. յորում հանդուցեալ
անլուանելի բնակեսցես բազմաս-
տիրապէս անձնանտես՝ միութեամբ հօ-

գուցս իմ՝ ընդ քեզ զապաշխարութիւն մեղաց մերձեալ 'ի սպառ՝ յանաբաւութիւն զիս պատրաստեցես անմնակեցոյց Թագաւոր անմահ տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

## ԲԱՆ ՀԹ.

Վերստին յաւելուած երկրի հեծեծանաց նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ՅԻՇԵԱ տէր, տէր գթութեց, ողորմ խրատանաց. Աստուած ճշմարիտ. նայեա վերաւորիս 'ի բնութեան կերպարան մեզս ախտականս. զննեա ինձ դարձեալ զամենընթաց տարածմանս եղեց արեանս շարժողութեան. բժշկապէս մատիր անսանել, զի մարդ եմ՝ հաստատեալ մասն խակութեան թերի խորհրդոց յայն ինչ, զոր դու ինձ վկայեցեր

տեսողդ ոչէից՝ միայն դու անմահն առուԹեան խաւարի։ Այսպ խրա_ ւանս է գրել ինձ ընդ մեղուցեալն մարդկորէն վրիպանաց սխալմանց պարտեալ կրկին իբր գերկրածին մանչացու մարմին, քան բանիւք քում ուա եւեւէլ. քանզի արդարեւ գի_ տակ՛ իսկ ես, Թէ չար է արարն եւ ընդարդոյս չարուԹիւնն մեր. եւ ոչ փոփոխին խորհուրդք մեր, յաւի_ տեան, ըստ հոգեհանճար իմաստ_ նոյն կանխագէկոյց առակի։

Բ. ԹեԹեւացո զատակուԹիւն անճխանոյն, որ պատրաստեալ է մեայ ինձ՝ արկանել զորգիս գեհե_ նին զարդ մանչուն յաւիտենականի. բարձ զամօԹոյս պարտիս, որ պա_ հեալ է յայտնելով Թշուառականիս յետին աւենին յանդիմանուԹեան։ Խոստ խաղաղուԹեան յաւաշա_ ալորդե ողորմուԹեամբ քո ընծայե_ ցու. զի մի անտանելիքն աշհաւորու_ Թեան ՚ի ցոյցս ինձ եկեալ կեր_ պարանեսցին, անյոյս ապչուԹիւն ընդ կենաց զգծման առաջի կար_ գեալ, դատաստանն աշհաւոր, ան_

կուսան և անխաբելի դատաւորն, ամենայն տեսակալի, կշռամտանքն առաքելի, յանդիմանութիւնն անփախչելի, առողջանայն անձողոպրելի, պակասութեան անխոտորելի, գովութեան անվճարելի, բարութեան անսասանելի, կրճտութեան ատամանցն անդադարելի, աղաղականութիւն անողջանալի, անէծքն աղաղակելի տառապանացն քո բանից. փակութեան գթոյն և արդելութեան որորմութեանն։ Որ ընդ դալարին երկնի և ընդ երկրի դպրելն ընդ կարծրութիւն յատակին, բաց կատակելոյ կոհակաց խառնութեան ծովու իբր փախստեան կերպ ցուցանելով, մի զմիոյ հետ խափանեն կանելով յերկիցունց. և տառանելով տառանելով բռնադատած դեանոյ թանձրութեան ՚ի հիմանց անտի, ընդ ուժգնակի բախման թնդելոյ ներքնոյին խորոց հարթէ զեզերն, և հալելով հրդեհին բռնութիւնք միմոց և անձնայն առաքելոց դոյիցույլայլին երկինք յանեղծ փոփոխութիւն, և յեղանակին արարածք առ-

բերոց խուռնք 'ի նորոգ նմանութիւ։ Ծածկութիւք գործոցս հրապարակին և աներևոյթք կրից մեր յայտնին. վարք կրանից ներգործեցելոց 'ի մարմինս մեր նկարին. թագաւոր երկնից յաւէտնի նման, վճիռ հատուցմանն 'ի ձեռին իւրում։ Ահա վայ ինձ եւթնեցա անդամ կրկին եղկութեամբ, քան չափոյ կշռութեն այսր համարոյ, որ զանիրաւութիւնս թըւոց պարտապէ։ Զինչ գործեցից ողորմելիս հոգի յայնժամ մեծի աւուր վտանգի. քանզի սաստիկ է յիշատակն իմ յառաջեալ քան զհանդիպումն. զոր ոճն մարգարէն զորինակին նմանութիւն 'ի գեհեն բերելով զձևոյ ապագնայի անդերձ փախուտեանն նշանակէ աւելորդ. զոր օրինակ եթէ փախնուցու որ 'ի ձեռաց առիւծու և պատահեսցէ նմա արջ, և փախուցու յերեսաց արջոյն և մտանիցէ 'ի տուն և յեցուցէ զձեռն իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա օձ. և զարհուրեալ կրկին տատակացուցանէ առ նոյն կերպարան երկի զանեսիլն քանակեղի. ոչ ապա-

քէն. սակ է, խաւար է որ անուանն, որ խաւարոյ և մթոյ, որ ամպոյ և մառախղոյ:

Գ. Յորժամ հրեշտակն պաշտպանողական կենակից հզօր տանիկան իրաւամբք ամբաստանեսցէ, և հատուցանողն ահաւոր արդարութե յանդիմանեսցէ, ապաստանութք թագաւորին առանց խնայելոյ խուճապեն, զոմանս 'ի կեանս հրաւիրեն և զոմանս յամօթն դատապարտեն. կիսոց դէմս լցեալս ծաղու ցուցանեն, և ինձ աշխարհս և քամինելի երեւեցուցանեն. ոմանց պատկս լուսապաճոյճս մատուցանեն, և այլոց կորուստ մահու բողոքեն. արդարոյն ձայն աւետեաց, և ինձ գոյժ անվախճան վշտաց: Յորժամ առբարին մահու յաղթութիւն 'ի պատու մեռանի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր գրանն բաժնել ոչ ինչ ազդիցէ, վճար եղեալ գթութեանն առ իս: Յորժամ զայլութիւնք հրաշիցն զարմանալեաց, որ են ծածկեալքն յայժմուց հատարածեաց վարուցն անսակէ

մարդկային բնութեան գործոց. յա-
ղագս որոյ եղեն գոյութիւնք ան-
նային էին. յիւրաքանչիւր մարմինս
անպակաս գրութեամբ խակոյն երե-
ւին. և խորութիւնք անձառելոյն կըն-
քեցելոց յիմաստից աստեացս առա-
ջի աչաց մերոց կերպարանին ։ Ուր
այժմ շահավաճառութիւնք ոգւոց
և արտասուաց զերկինս գրաւեն, և
անդ իբր պատարագամամբ ընդունայ-
նութիւնք արհամարհեալք լիա-
նին. հաստատմամբք հեծութեան ոչ
կանխաւ առամ տառապելոյ. չէ եր-
րեք գտանել անդէն. ողորմութիւնք
Ճշգով սերմանելոյ. ոչ պայծառա-
վառմամբ գնալն առաջի։ Ուր առ-
պանն նախայանցից և կատարմանն
տիրանորդիցն և նշանն ահաւոր
այժմուցս՝ յանդիմանն եղելոյ մեծա-
ձայն զաստախագեն. յորում առ
կայ վայրի ոմն զուխան կցորդու-
թեան հայրենի և ոմն զխորանն
վկայութեան անառնոյն, և ոմն զու-
րիշն մեծին Աստուծոյ ամբաստան
նմն իրաւացի առաջի իմ տարած-
նեն ։ Զանձնամատենն բարձրա-

պատժիս անձամբ անձին առաջին իսկ պատրաստեցի, զերծ մխիթարե-ցայց համառօտելով յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդա-րոցն, որ փառաւորեալքն են երա-նութեամբ, առաջին դաղալով. ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ ե-րեսաց մեծ դատաստանին, եւ եղ-կելիս՝ աւանդակերպս ստասկման որդիս մեր երեւեցայց. որ ոչ միայն չեմ պատկերոց, այլ եւ պատուհասն իմ անստանելի եւ կորուստն անապա-ռելի։

Դ. Այլ արդեւս, ամենապարգեւ զօրութիւն անձինս, ձեռն փրկու-թեան ՚ի կորուստ գերելոյս. զի օ-գնեալ ՚ի քէն՝ դարձայց միւանգամ ՚ի դրանց դժոխոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենեցին անվախճանելի սրբեալ ՚ի պատժոց. առաւօտ տեսանել մնացս խնամոց զարդա-դարիցն զխաղաղութեան, բաւականա-ցեալ ՚ի լոյս երկնիցին ՚ի ստացնութե տանջանաց՝ անշէն համբաւով. կամօք քո բարեաց զերծեալ տալեցայց. եւ մի մատնեցայց կորեանցն տուժոց.

որք խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ստամոքսին գազանութեան. զի զորովայն մահուն լցուցեալ՝ զստացուածս պարարեալս անդ ձգեալ_ հալեն, ուր անապառ պահի մնա_ ցուած մթերից 'ի ծախուածս յա_ ւիտենից: Զի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակման 'ի կեանս և յերանութիւն, ընտրեալ ա_ պաւէն թագաւոր լուսոյ տէր Յի_ սուս Քս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

## ԲԱՆ Զ.

Վերստին յաւելուած խրթին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն տէրն մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Եւ արդ 'ի վերայ այսքանեաց յուսահատութեանց և անհամբերու_ սրտաբեկութեանց, պակուցանողա_ կան սոսկութեանց ստացուածոյ_

ին բարեկութեանց, աստուածալեալ ոգւով թախծութեան 'ի սպառ, աղաչեմ զքեզ սուրբ Աստուածածին. Հրեշտակ 'ի մարդկանէ, մարմնաւորիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի, անխառն խորհ զօղ, մաքուր որպէս լոյս, անշաղախ բաս նմանութեան պատկերի արուեստին բարձրութեան, գերապանց քան զընտրութիւն անեղանելին սրբութեանց. երանաւոր խոստմանն անգի. Նշխեմ չնչական, ծառ կենացն անմահից բուղեզէն որոմն պարտուծակեալ, 'ի բարձրեալն Հօրէ զարդեալ և հովանացեալ. հանդստեանն Հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեանն Որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ. միածինն Հօր և քեզ անդրանիկ. որդի քո ծնընդեանն և ազգ արարչութեանն. ընդ անարատ մաքրութեանց և անդրիծ բարի, ընդ անպատում սրբութեանց և խոնարհեալ բարեխօս. Ընկալ զմաղթանս այսոր աղերսանաց քում զաւանողիս, և մասն ընծայեա ընդ ամին խառնեալ զբանն իմ նուիրի

Եւ շրջէր ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ և զամենայն ախտս 'ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց. և մատուցին առ նա զամենայն հիւանդս, որ նեղեալ էին 'ի պէսպէս ցաւս և 'ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք 'ի Գալիլեէ և 'ի Դեկապոլեայ և յԵրուսաղեմէ և 'ի Հրէաստանէ և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա։

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս

ԵՒ. իբրև էջ 'ի լեռնէ անտի, գնային զկնի նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա մատուցեալ բորոտ մի՝ երկիր պագանէր նմա և ասէր. տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Ձգեաց զձեռն իւր և հասոյց 'ի նա Յիսուս, և ասէ. կամիմ սրբեաց. և վաղվաղակի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն: Եւ ասէ ցնա Յիսուս. զգոյշ լեր, մի ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քահանային, և մատո զպատարագն՝ զոր հրամայեաց Մովսէս 'ի վկայութիւն նոցա:

## Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ մտեալ 'ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա և ասէր. տէր, մանուկ իմ անկեալ կայ 'ի տան անդամալոյծ չարաչար տանջեալ: Ասէ ցնա Յիսուս, ես եկից և բժշկեցից զնա

Պատասխանի ետ Հարիւրապետն և ասէ. Տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ։ Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինև զինուորս, ասեմ սմա երթ՛ և երթայ, և այլում թէ եկ՛ և գայ, և ծառայի իմում. թէ արա զայս, և առնէ։ Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացաւ և ասէ ցայնոսիկ որք զհետն երթային. ամէն ասեմ ձեզ և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք։ Բայց ասեմ ձեզ՝ զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ և ընդ Յակոբու յարքայութեան երկնից. և որդիքն արքայութեան ելցեն ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. երթ և որպէս հաւատացեր, եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ։

Եւ եկեալ Յիսուս ՚ի տուն Պե-

տրոսի, եւ տես զի զոքանչ նորա ան-
կեալ դնէր տառապեալ. կալաւ զձե-
ռանէ նորա. եւ եթող զնա ջերմն,
յոտն եկաց եւ պաշտէր զնա:

Իբրեւ եղեւ երեկոյ, մատուցին
առ նա զդիւահարս բազումս, եւ ե-
հան զայսսն բանիւ, եւ զամենայն հի-
ւանդսն բժշկեաց: Զի լցցի բանն որ
ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարգա-
րէի. Նա զհիւանդութիւնս մեր վե-
րացոյց եւ զցաւս մեր եբարձ:

Եւ իբրեւ անց յայնկոյս յերկիրն
Գերգեսացւոց, պատահեցին նմա
դիւահարք երկու ելեալք ՚ի գե-
րեզմանացն չարաչարք յոյժ, որ-
պէս զի չէր հնար անցանել ումեք
ընդ այն ճանապարհ: Եւ ահա
աղաղակեցին եւ ասեն. զի՞ կայ մեր
եւ քո, Յիսուս որդի Աստուծոյ, ե-
կիր աստանօր տանջել զմեզ: Եւ
էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ
մի խոզից արօտական. եւ դեւքն ա-
ղաչէին զնա եւ ասէին՝ եթէ հանես
զմեզ աստի, հրամայեա մեզ եր-
թալ յերամակ խոզիցն: Եւ ասէ
ցնոսա, երթայք. եւ նոքա ելեալ

գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակն ի դարէ անտի ի ծով, և մեռան ի ջուրսն. և խոզարածքն փախեան, և երթեալ ի քաղաքն պատմեցին զամենայն, և զիրս դիւահարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրև տեսին զնա՝ աղաչէին զի գնասցէ ի սահմանաց նոցա:

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս և եկն ի քաղաքն իւր. և ահա մատուցին առ նա անդամալոյծ մի՝ որ դնէր ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն, Թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս, հայհոյէ դա: Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ընդէր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր: Զինչ դիւրին է, ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո. թէ ասել՝ արի

և չքնաղ։ Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս։ Յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի առ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո. և յարուցեալ գնաց ՚ի տուն իւր։ Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այնպիսի իշխանութեան մարդկան։

## Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

ՄԻՆՉԴԵՌ զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. դուստր իմ արդ ևս վախճանեցաւ, այլ եկեալ դիցես զձեռն քո ՚ի վերայ նորա, և կեցցէ։ Յարուցեալ Յիսուս և գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի գրօշակ հանդերձի նորա։ Քանզի ասէր ՚ի միտս իւրում, թէ միայն մերձենամ ՚ի հանդերձս նորա փրկիմ։

Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ եւ ե-
տես զնա՝ ասէ . քաջալերեաց դուս-
տր , հաւատք քո կեցուցին զքեզ .
Եւ փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմա-
նէ : Իբրեւ եկն Յիսուս 'ի տուն իշ-
խանին , եւ ետես զփողահարսն եւ ամ-
բոխ յոյժ , ասէ ցնոսա . 'ի բաց գնա-
ցէք . զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝
այլ ննջէ . եւ ծաղր առնէին զնա :
Եւ իբրեւ ել ամբոխն 'ի բաց , եմուտ՝
կալաւ զձեռանէ նորա եւ յարեաւ
աղջիկն : Եւ ել համբաւս այս ընդ
ամենայն երկիրն ընդ այն :

### Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ մինչ գնա անցանէր ընդ այն՝
զհետ եղեն նորա կոյրք երկու . ա-
ղաղակէին եւ ասէին , ողորմեա՛ մեզ
որդի Դաւթի : Եւ իբրեւ եկն 'ի տուն,
մատեան առ նա կոյրքն , եւ ասէ ցնո-
սա Յիսուս . հաւատայք եթէ կարող
եմ առնել ձեզ զայդ . ասեն ցնա՝
այո տէր : Յայնժամ մերձեցաւ յաչս
նոցա եւ ասէ . ըստ հաւատոց ձերոց
եղիցի ձեզ . եւ բացան աչք նոցա : Եւ

սաստեաց նոցա Յիսուս եւ ասէ․ զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։ Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն․ և զարմացան ժողովուրդքն և ասէին, թէ և ոչ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի։ Իսկ փարիսեցիքն ասէին՝ թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս։

## ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ շրջէր ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս, ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նոսա․ զի էին աշխատեալք և ցրուեալք իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտս իւր․ հունձք բազում են՝

և մշակք սակաւ․ արդ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս ՚ի հունձս իւր։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց՝ հանել զնոսա և բժշկել զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ գնացեալ անտի եկն ՚ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր․ հարցին զնա և ասեն, եթէ պարտ իցէ ՚ի շաբաթու բժշկել․ զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնոսա, ո՛վ է ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ՚ի խորխորատ ՚ի շաբաթու, մի թէ ոչ ունիցի և յարուցանիցէ զնա։ Իսկ որչափ ևս առաւել է մարդ քան զոչխար․ ապա ուրեմն պարտ է ՚ի շաբաթու բարիս գործել։ Յայնժամ ասէ ցայրն, ձգեա՛ զձեռն քո․ և նա ձգեաց և եղև ողջ իբրև

զմիւսն ։ Իսկ փարիսեցիքն եկեալ արտաքս՝ խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա ։

## Ա— Տէրն մեր Յիսուս Քրիստոս

ՅԻՍՈՒՍ մասնաւոր դիւահար մի կոյր և համր՝ և բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ ։ Զարմացան ամենայն ժողովուրդքն և ասէին. մի՞ թէ սա՞ իցէ Քրիստոսն որդի Դաւթի ։ Բայց փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ իւիք հանէ դա զդևս՝ եթէ ոչ Բեեղզեբուղաւ իշխանաւն դիւաց ։

## Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Երբ եկեալ անտի գնայր 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի ։ Եւ ահա կին մի քանանացի 'ի սահմանաց անտի նոցա, եկեալ աղաղակէր և ասէր. ողորմեա ինձ, տէր, որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի ։ Եւ նա ոչ ետ նմա պա-

տասխանի. և մատուցեալ աշակերտքն նորա աղաչէին զնա և ասէին. արձակեա զնա, զի աղաղակէ զհետ մեր: Նա պատասխանի ետ և ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի: Իսկ նա մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. տէր, օգնեա ինձ: Պատասխանի ետ նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց: Իսկ նա ասէ. այո տէր. քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. ով կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս. և բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Իբր գնացեալ անտի՝ եկն 'ի ծովեզրն գալիլեացւոց. և ելեալ 'ի լեառն նստէր անդ: Մատեան առ նա ժողովուրդք բազումք՝ որ ու-

նէին ընդ խորհանս կաղս, կոյրս, համերս, միակողմանիս, և այլ բազումս, և ընկեցին զնոսա առ ոտս նորա, և բժշկեաց զնոսա։ Մինչև զարմանալ ժողովրդոյն, որ տեսանէին. զի համերքն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, և փառաւոր առնէին զԱստուածն Իսրայէլի։

## [illegible] Յիսուսի Քրիստոսի

Եւ իբրև եկին ի ժողովուրդն, մատեաւ այր մի, ի ծունր իջանէր և ասէր. Տէր, ողորմեա որդւոյ իմում, զի լուսնոտի է և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի ի հուր, և երբեմն ի ջուր։ Եւ մատուցի զնա աշակերտացն քոց, և ոչ կարացին բժշկել։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ով ազգ անհաւատ և թիւր, մինչև ցերբ իցեմ ընդ ձեզ, մինչև յերբ անսայցեմ ձեզ, ած զնա առ իս. և ածին զնա առ Յիսուս։ Եւ սաստեաց ի նա Յիսուս, և ել ի նմանէ դևն,

և բժշկեցաւ մանուկն 'ի ժամէն
յայնմանէ ։ Յայնժամ մատեան ա-
շակերտքն առանձինն և ասեն ցՅի-
սուս . մեք ընդէր ոչ կարացաք հա-
նել զնա ։ Եւ նա ասէ ցնոսա՝ վասն
թերահաւատութեան ձերոյ . ամէն
ասեմ ձեզ , եթէ ունիցիք հաւատս
քան զհատ մանանխոյ , ասասջիք
լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր ,
և փոխեսցի . և ոչ ինչ անհնարին
լինիցի ձեզ ։ Բայց այս ազգ ոչ ելանէ ,
եթէ ոչ աղօթիւք և պահովք ։

## Տէրամէ Վերաշ Յիսուսի Քրիստոսի

Երբ յելանել նոցա յԵրիքովէ ,
գնացին զհետ նորա ժողովուրդք
բազումք ։ Եւ ահա կոյրք երկու նըս-
տէին առ Ճանապարհաւն . իբրև
լուան թէ Յիսուս անցանէ՝ աղա-
ղակեցին և ասեն , ողորմեաց մեզ ,
Յիսուս որդի Դաւթի ։ Եւ ամբոխն
սաստեաց նոցա՝ զի լռեսցեն . և նո-
քա ևս առաւել աղաղակէին և ա-
սէին . տէր , ողորմեա՛ մեզ , որդի
Դաւթի ։ Զանգի առ Յիսուս . կո-

չեաց զնոսա և ասէ. զի՞նչ կամիք զի արարից ձեզ։ Ասեն ցնա. Տէր, զի բացցին աչք մեր։ Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին և գնացին զհետ նորա։

# Ի ՄԱՐԿՈՍԻ

## ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

Տէրամէ Կերաւ Յիսուսի Քրիստոսի

Եւ մտանէին 'ի Կափառնաում, և իսկ և իսկ 'ի շաբաթուն մտեալ 'ի ժողովուրդն ուսուցանէր զնոսա : Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ, և ոչ որպէս դպիրքն : Եւ էր 'ի ժողովրդեանն նոցա այր մի՝ յորում այս պիղծ գոյր 'ի նմա. որ աղաղակեաց և ասէ. Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ ով ես սուրբդ Աստուծոյ : Սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ. կարկեաց և ել 'ի դմանէ : Եւ զարկոյց զնա այսն պիղծ և աղաղակեաց 'ի ձայն մեծ, և ել 'ի նմանէ : Եւ զարմացան ամենեքին

մինչև հծծել ընդ միմեանս և ասել. զինչ է այս նոր վարդապետութիւնս, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ և հնազանդին նմա. Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն գալիլեացւոց.

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդենէն եկն 'ի տուն Սիմոնի և Անդրէայ՝ Յակոբաւ և Յովհաննու համդերձ. Եւ զոքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա. Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ. և եթող զնա տենդն, և պաշտէր զնոսա.

Ա— Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել արեգականն՝ բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն. Եւ բժշկեաց բազում

հիւանդս 'ի պէսպէս ախտից. և դեւս բազում եհան. և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։

### Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նորա Սիմոն և որք ընդ նմայն էին. և իբրև գտին զնա, ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա. եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր 'ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, և դեւս հանէր։ Գայ առ նա բորոտ մի, աղաչէր' 'ի ծունր իջանէր և ասէր. տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն' մերձեցաւ 'ի նա և ասէ ցնա. կամիմ սրբեաց։ Եւ իբրև ասացն ցնա, վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորո-

տութիւնն՝ և սրբեցաւ ։ Իսկ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի , և ասէ . զգոյշ լեր մի ումեք ինչ ասիցես , այլ երթ ցոյց զքեզ քահանային , և մատո վասն սրբութեանքոյ պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս ՚ի վկայութիւն նոցա ։ Իսկ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ և հռչակ հարկանել զբանն , մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս ՚ի քաղաք մտանել , այլ արտաքոյ յանապատ տեղիս էր . և գային առ նա յամենայն կողմանց ։

## Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ մտեալ դարձեալ ՚ի Կափառնաում յետ աւուրց , լուր եղեւ եթէ ՚ի տան է . և ժողովեցան բազումք մինչեւ տեղի եւս ոչ լինել և ոչ առ դրանն , և խօսէր նոցա զբանն ։ Իսկ գային առ նա , բերէին անդամալոյծ մի բարձեալ ՚ի չորից . և իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի , քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս . և բացեալ զառաստաղն՝

իջուցին զմահճիճան՝ յորում կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ զհաւատս նոցա ասէ ցանդամալոյծն. որդեակ, Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ էին ոմանք ՚ի դպրացն անդ, որ անդ նստէին՝ և խորհէին ՚ի սիրտս իւրեանց. զինչ է դա՝ որ խօսի սա հայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ եթէ ոչ մի Աստուած։ Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին ՚ի սիրտս իւրեանց. և ասէ. զի խորհիք զայդ ՚ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է, ասե՞լ ցանդամալոյծն թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել, արի առ զմահճիճս քո, և երթ ՚ի տուն քո։ Այլ զի գիտասջիք, եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ՚ի վերայ երկրի թողուլ ըզմեղս, ասէ ցանդամալոյծն. քեզ ասեմ, արի առ զմահճիճս քո և երթ ՚ի տուն քո։ Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահճիճսն, ել առաջի ամենեցուն. մինչեւ զարմանալ ամենեցուն և փառաւոր առնել զԱստուած և ասել, թէ այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք։

## Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ եմուտ միւսանգամ 'ի ժողովուրդն, և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա 'ի շաբաթուն, զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ ասէ ցայրն, որոյ ձեռն գօսացեալ էր. արի անդ 'ի մէջ. Եւ ասէ ցնոսա. զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել. ոգի մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել. և նոքա լռեցին։ Եւ հայեցեալ Յիսուս զնոքօք ի ցասմամբ, տրտմեալ վասն կուրութեանց սրտից նոցա, ասէ ցայրն. ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա։ Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսացն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա, թէ զիարդ կորուսցեն զնա։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

ԱՇԱԿԵՐՏՕՔՆ իւրովքն գնաց 'ի ծովեզրն. և բազում ժողովուրդ 'ի գալիլէացւոց երթային զհետ նորա, և 'ի Հրէաստանէ, և յԵրուսաղեմէ, և յայնկոյս Յորդանանու. և որք 'ի Տիւրոսէ և 'ի Սիդոնէ բազում ժողովուրդք իբրեւ լուեալ որչափ ինչ առնէր՝ գային առ նա: Եւ ասէ ցաշակերտսն իւր՝ զի նաւակ մի պատրաստական կացցէ նմա վասն ամբոխին, զի մի նեղեսցեն զնա: Քանզի զբազումս բժշկեաց, մինչ գալ խռնել զնովաւ, զի մերձեսցին առ նա՝ որք ունէին ախտս ինչ: Եւ այսք պիղծք՝ յորժամ տեսանէին զնա՝ անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին, թէ դու ես Որդին Աստուծոյ. և նա յոյժ սաստէր նոցա՝ զի մի յայտնի առնիցեն զնա:

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Նոր եկն յայնկոյս ծովուն յաշխարհն գերգեսացւոց։ Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի՝ պատահեաց նմա այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ։ Որոյ և բնակութիւն իւր իսկ 'ի գերեզմանս էր. և ոչ շղթայիւք ոք եւս կարէր կապել զնա, վասն բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք կապելոյ և խզելոյ 'ի նմանէ զշղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր պարտել զնա։ Քանզի հանապազ գիշեր և զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրև ետես զՅիսուս 'ի հեռաստանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա։ Աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. զի՞ կայ իմ և քո, Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ, երդմնեցուցանեմ՝ զքեզ յԱստուած, մի տանջեր զիս. քանզի ասէր ցնա. ել այդ պիղծ 'ի մարդոյ այ-

տի։ Եւ հարցանէր զնա՝ թէ զինչ անուն է քո. և ասէ ցնա, լեգէոն անուն է իմ. քանզի բազումք եմք։ Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց արածական մեծ. աղաչեցին զնա ամենայն դևքն, և ասեն. առաքեա զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի նոսա. և հրամայեաց նոցա։ Եւ ելեալ ելին այսքն պիղծք. մտին 'ի խոզսն. և դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովն. էին իբրև երկու հազարք, և հեղձնուին 'ի ծովուն։ Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագարակս. և ելին տեսանել զինչ իցէ՝ որ գործեցաւն։ Գան առ Յիսուս, և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ և զգաստացեալ՝ որ ունէր զլեգէոնն, և զահի հարան։ Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր թէ զինչ եղև դիւահարին, և զինչ վասն խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա գնալ 'ի սահմանաց նոցա։ Եւ իբրև եմուտ նա 'ի նաւն՝ աղաչէր զնա դի-

ւահարն զի ընդ նմա իցէ. և Յիսուս ոչ եառ նմա թոյլ, այլ ասէ ցնա. Երթ ՚ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նոցա որ ինչ միանգամ տէր արար քեզ, և ողորմեցաւ քեզ: Եւ չոգաւ և սկսաւ քարոզել ՚ի Դեկապոլիս, զոր ինչ արար նմա Յիսուս. և ամենեքին զարմանային:

## Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ իբրև անց միւսանգամ յայն կողմն, ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն: Եւ ահա մի ՚ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր Յայրոս. և իբրև եաես զնա՝ անկաւ առ ոտս նորա. աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նորա մերձ է ՚ի մահ, զի եկեսցես դնիցէս նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ: Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա: Եւ կին մի էր ՚ի տեռատեսութեան արեան երկոտասան ամ, և յոյժ վչտացեալ ՚ի բազում

բժշկաց, և ծախեալ զինչս իւր զա-
մենայն՝ և չէր ինչ օգտեալ, այլ ևս
առաւել զայրացեալ: Իբրև լուաւ
զՅիսուսէ՝ եկն ՚ի մէջ ամբոխին յե-
տոյ, և բուռն եհար զհանդերձէ նո-
րա. քանզի խորհէր ՚ի միտ, թէ
միայն մերձեցայց ՚ի հանդերձս նո-
րա, փրկեցայց: Եւ վաղվաղակի
ցամաքեցաւ աղբիւր արեան նորա,
և գիտաց ՚ի մարմնի իւր թէ բժշկե-
ցաւ ՚ի տանջանացն: Եւ անդէն
վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն
իւր զզօրութիւնն որ ել ՚ի նմանէ.
դարձաւ յամբոխն և ասէ. ո՞վ մեր-
ձեցաւ ՚ի հանդերձս իմ: Եւ ասեն
ցնա աշակերտքն. տեսանես, զի
ամբոխդ նեղէ զքեզ, և ասես թէ
ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ. և
շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞վ զայն
արար: Եւ կինն զարհուրեալ և դո-
ղացեալ վասն որոյ գաղտն արար,
քանզի գիտէր զինչ եղև նմա. եկն
անկաւ առաջի նորա, և ասաց զա-
մենայն իրան ստուգութեամբ: Եւ
Յիսուս ասէ ցնա. դուստր, հա-
ւատք քո կեցուցին զքեզ. երթ ՚ի

խաղաղութիւն, և եղիջիր ողջ 'ի տան-
ջանաց քոց։ Մինչ դեռ նա զայն
խօսէր՝ գան ոմանք 'ի տանէ ժողո-
վրդապետին և ասեն, թէ դուստր
քո մեռաւ՝ զի՞ ևս աշխատ առնես
զվարդապետդ։

Իսկ Յիսուս իբրև լուաւ զբանն
ասացեալ, ասէ ցժողովրդապետն.
մի երկնչիր՝ բայց միայն հաւատա։
Եւ ոչ ոք եթող ընդ իւր երթալ.
բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և
զՅովհաննէս զեղբայրն Յակոբայ։
Գայ 'ի տուն ժողովրդապետին, և
տեսանէ աղմուկ յոյժ և լալականս
և աղաղակս յոյժ։ Եւ մտեալ 'ի ներքս
ասէ ցնոսա. զի՞ խռովեալ էք և լայք.
մանուկն ոչ է մեռեալ՝ այլ ննջէ։
Եւ ծաղր առնէին զնա. և նորա հա-
նեալ արտաքս զամենեսեան, առնու
ընդ իւր զհայր մանկանն և զմայր,
և զնոսա որ ընդ նմայն էին, և
մտանէ ուր դնէր մանուկն։ Եւ կա-
լեալ զձեռանէ մանկանն ասէ ցնա.
տալիթա կումի, որ թարգմանի՝ աղ-
ջիկ դու, քեզ ասեմ՝ արի։ Եւ վաղ-
վաղակի յարեաւ աղջիկն և գնայր.

քանզի էր ամաց իւրոց երկոտասա-նից. և զարմացան մեծաւ զար-մանալեօք։ Եւ պատուէր տայր նո-ցա յոյժ՝ զի մի ոք գիտասցէ զայն, և ասաց տալ նմա ուտել։

## Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննէսարեթ։ Եւ իբրեւ ելին ի նաւէ անտի, իսկ և իսկ ծա-նեան զնա արք տեղւոյն այնորիկ։ Եւ ընթացեալ այնր անդր ընդ ա-մենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս՝ ուր լսէին թէ անդ իցէ։ Եւ ուր և մտանէր ի գեօղս կամ ի քաղաքս կամ յագա-րակս, ի հրապարակս դնէին զախ-տաժէտս. և աղաչէին զնա՝ զի գոնէ ի քղանցս հանդերձից նորա մերձե-նայցեն. և որ միանգամ մերձենային՝ փրկեցան։

Եւ անտի յարուցեալ եկն 'ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի. և մտեալ 'ի տուն ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել: Լուաւ կին մի զնմանէ՝ որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առաջի նորա: Եւ կինն էր հեթանոս փիւնիկ ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ 'ի դստերէ նորա: Եւ Յիսուս ասէ ցնա. Թո՛յլ տուր նախ յագենալ մանկանց. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց: Նա պատասխանի ետ և ասէ. տէր, և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին: Եւ ասէ ցնա. վասն այդր բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ: Գնաց 'ի տուն իւր և եգիտ ելեալ զդեւն, և զդուստրն, զի անկեալ դնէր 'ի մահիճսն:

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

*Եւ եղեւ միւսանգամ ՚ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնի, և եկն ՚ի ծովեզրն գալիլեացւոց ՚ի մէջ սահմանացն ՚ի Դեկապոլիս։ Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր, և աղաչէին՝ զի ձեռն դիցէ ՚ի վերայ նորա։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա, և եթուք անդր, և կալաւ զլեզուէ նորա, հայեցաւ յերկինս, յոգւոց եհան և ասէ. եփփաթա՝ որ է բացիր։ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա և խօսէր ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին, և ևս քան զեւս զարմանային և ասէին. զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ և համերց խօսել։*

## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Գան 'ի Բեթսայիդա, և ածեն
առաջի նորա կոյր մի, և աղաչէին
զնա զի մերձեսցի 'ի նա ։ Նա առեալ
զձեռանէ կուրին եհան արտաքոյ
շինին, եթուք յաչս նորա և ձեռն
եդ 'ի վերայ նորա, և հարցանէր
ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ ։ Հայեցաւ և
ասէր, տեսանեմ զմարդիկս զի շրջին
իբրև զծառս ։ Դարձեալ եդ ձեռս
'ի վերայ աչաց նորա, եբաց և տե-
սանէր, ողջացաւ և տեսանէր հա-
մարձակ զամենայն ։ Արձակեաց զնա
'ի տուն իւր և ասէ. 'ի շէնդ մի
մտանիցես, այլ երթ 'ի տուն քո.
և յորժամ 'ի շէնն մտանիցես, մի
ումեք ասիցես 'ի շինին ։

## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Եւ եկեալ առ աշակերտսն՝ տե-
սին ամբոխ շուրջ զնոքօք. և դպը-
իրսն՝ զի վիճէին ընդ նոսա ։ Եւ
վաղվաղակի ամենայն ժողովուրդն

իբրև տեսին զնա՝ զարմացան. և
ընդ առաջ ընթացեալ՝ ողջոյն տային
նմա: Եւ եհարց ցնոսա, թէ զինչ
վիճէիք ընդ նոսա: Պատասխանի ետ
մի ոմն 'ի ժողովրդենէն և ասէ.
վարդապետ, ածի զորդի իմ առ
քեզ, զոր ունի այս համր. և ուր
հասանէ՝ զարկուցանէ զնա, և փրփ-
րէ և կրճտէ զատամունս իւր և
ցամաքի. և ասացի աշակերտաց քո
զի հանցեն. և ոչ կարացին հանել
զնա: Պատասխանի ետ նոցա և ասէ.
ով ազգ անհաւատ, մինչև յերբ
իցեմ առ ձեզ. մինչև ցերբ անսայ-
ցեմ ձեզ, ածէք զնա առ իս: Եւ
ածին զնա առ նա. իբրև ետես
զնա այսն՝ վաղվաղակի շարժեաց
զնա. և անկեալ յերկիր թաւալէր
և փրփրէայր: Եհարց ցհայր նորա
և ասէ. քանի՞ ժամանակք են յոր-
մէ հետէ այդ եղև դմա. և նա ասէ՝
'ի մանկութենէ: Բազում անգամ 'ի
հուր արկանէ զդա և 'ի ջուր, զի
կորուսցէ. այլ եթէ կարող ինչ
ես, օգնեա մեզ տէր, գթացեալ 'ի
վերայ մեր: Եւ Յիսուս ասէ ցնա.

ասացեր թէ կարող ես. ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն: Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն և ասէ. հաւատամ տէր, օգնեա անհաւատութեանս իմում: Իբրև ետես Յիսուս, եթէ կուտի ժողովուրդն ՚ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ և ասէ. համրդ և խուլ այս, ես տամ քեզ հրաման, ել ՚ի դմանէ և այլ մի ևս մտանիցես ՚ի դա: Եւ աղաղակեաց և յոյժ ըլկեաց զնա և ել. և եղև պատանեակն իբրև զմեռեալ, մինչև բազմաց իսկ ասել՝ թէ մեռաւ: Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա և կանգնեցաւ: Եւ իբրև եմուտ նա ՚ի տուն, աշակերտքն առանձինն հարցին զնա. մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա: Եւ ասէ ցնոսա. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք:

## Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ գան յԵրիքով. և ընդ ելանել նորա յԵրիքովէ աշակերտացն և

բազում ժողովրդովք, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր՝ նստէր մուրացիկ յանցս ճանապարհին։ Եւ իբրեւ լուաւ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել եւ ասել. որդի Դաւթի Յիսուս, ողորմեա՛ ինձ։ Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. եւ նա առաւել եւս աղաղակէր, որդի Դաւթի, ողորմեա՛յ ինձ։ Զտեղի առ Յիսուս, եւ հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն եւ ասեն ցնա, քաջալերեա՛ց արի կոչէ զքեզ։ Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր՝ յարեաւ եւ եկն առ Յիսուս։ Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. զի՞նչ կամիս թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն, Ռաբբունի, զի բացայց։ Եւ Յիսուս ասէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. եւ վաղվաղակի բացաւ, եւ երթայր զհետ նորա ՚ի ճանապարհին։

# Ի ՂՈՒԿԱՍՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ էջ 'ի Կափառնաում' 'ի քաղաքն Գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա 'ի շաբաթսն։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա' զի իշխանութեամբ էր բան նորա։ Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւի պղծոյ. և աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ. Թո՛ղ զայդ, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմ զքեզ ո՛վ ես, սուրբդ Աստուծոյ։ Սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ. պապանձեաց և ե՛լ 'ի դմանէ։ Զգետնեաց զնա դեւն 'ի միջի անդ, և ել 'ի նմանէ. և ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն զարմանալիք 'ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս, և

ասէին . զի՞նչ է բանս այս՝ զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ այսոց պղծոց, և ելանեն : Եւ ելթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ գաւառաւն :

Տէառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ անտի, եմուտ 'ի տուն Սիմոնի . և զօքանչ Սիմոնի տագնապէր ջերմամբ մեծաւ, և աղաչեցին զնա վասն նորա : Եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա . և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա : Եւ ընդ արեւուն մտանել, որոց էին հիւանդք 'ի պէսպէս ցաւս, բերէին զնոսա առ նա : Եւ նա իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս և բժշկէր զնոսա : Ելանէին դեւքն 'ի բազմաց՝ աղաղակէին և ասէին, եթէ դու ես Որդի Աստուծոյ . և նա սաստէր՝ և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա, թէ Քրիստոսն է :

### Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղեւ 'ի հասանելն նորա 'ի մի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ իբրեւ ետես զՅիսուս, անկեալ 'ի վերայ երեսաց, աղաչեաց զնա եւ ասէ. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Ձգեաց զձեռն իւր, հասոյց 'ի նա եւ ասէ. կամիմ, սրբեաց. եւ վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւնն: Եւ նա պատուիրեաց նմա մի ումեք ասել, այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային եւ մատո պատարագ վասն սրբութեան քո, որպէս եւ հրամայեաց Մովսէս 'ի վկայութիւն նոցա: Եւ յորդէր առաւել բանն նմանէ. եւ ժողովէին ժողովուրդք բազումք լսել եւ բժշկել 'ի հիւանդութեանց իւրեանց: Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, եւ կայր յաղօթս:

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղև 'ի միում աւուրց և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետքն նստէին. որք ժողովեալ էին յամենայն քաղաքաց գալիլեացւոց և Հրէաստանի և Երուսաղեմի, և զօրութիւն տեառն էր 'ի բժշկել զնոսա: Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ. և խնդրէին զնա մուծանել 'ի ներքս և դնել առաջի նորա: Եւ իբրև ոչ գտանէին՝ թէ ընդ որ մուծանիցեն զնա 'ի ներքս վասն ամբոխին, ելին 'ի տանիս, և 'ի ցեւոյն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հանդերձ 'ի մէջ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. այր դու, թողեալ լիցին քեզ մեղք քո: Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիքն և ասեն. ո՞ է դա, որ խօսի զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Աստուած: Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, պատասխանի ետ

և ասէ ցնոսա. զի՞ խորհիք 'ի սիրտս
ձեր. զի՞նչ դիւրագոյն է, ասե՞լ՝
թողեալ լինին քեզ մեղք քո, եթէ
ասել՝ արի և գնա: Այլ զի գիտա-
ջիք, եթէ իշխանութիւն ունի որդի
մարդոյ յերկրի թողուլ զմեղս. ասէ
ցանդամալոյծն. քեզ ասեմ՝ արի
առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո:
Եւ առժամայն յարուցեալ առաջի
ամենեցուն, առ զիւրն յորոյ վե-
րայ անկեալ դնէր. գնաց 'ի տուն
իւր՝ և փառաւոր առնէր զԱստուա-
ծ: Զարմանք կալան զամենեսեան,
և փառաւոր առնէին զԱստուած.
լի եղեն ահիւ և ասեն, եթէ տեսաք
այսօր նոր նշան:

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև 'ի միւսում շաբաթուն
մտանել նմա 'ի ժողովուրդն և ու-
սուցանել. և էր անդ այր մի՝ և ձեռն
իւր աջ գօսացեալ էր: Եւ սպասէին
նմա դպիրքն և փարիսեցիքն՝ թէ 'ի
շաբաթուն բժշկեսցէ, զի գտանի-
ցեն չարախօսութիւն զնմանէ: Եւ

նա գիտէր զխորհուրդս նոցա. ասէ ցայլն որոյ ձեռն գօսացեալ էր. արի անց 'ի մէջ. և նա յարուցեալ եկաց: Ասէ ցնոսա Յիսուս, հարցից ինչ ընդ ձեզ. զինչ արժան է 'ի շաբաթու, բարի ինչ առնել, եթէ չար գործել. ոգի մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել: Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին, ասէ ցնա. ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց. և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն: Եւ նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն Յիսուսի:

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի տեղի մի առափնեակ. և ժողով աշակերտացն նորա, և բազմութիւն յոյժ ժողովրդեանն յամենայն Հրէաստանէ և յԵրուսաղեմէ և յայնմ կողմանէ, և 'ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդոնի: Որ եկին լսել 'ի նմանէ և բժշկել 'ի հիւանդութեանէ իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին:

մտանիցես. վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկս իմ: Քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինև զինուորս. և ասեմ սմա երթ, և երթայ. և այլում թէ եկ. և գայ. և ծառայի իմում՝ թէ արա զայս, և առնէ: Եւ իբրև լուաւ զայս Յիսուս զարմացաւ. դարձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի: Եւ դարձան անդրէն պատգամաւորքն 'ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ:

## Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ եղև 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, որում անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք նորա և ժողովուրդ բազում: Իբրև մերձ եղև 'ի դուռն քաղաքին, և ահա հանէր մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի, և ժո-

զովուրդ բաղում քաղաքին էր ընդ նմա։ Իբրև ետես զնա տէր՝ գթացաւ 'ի նա և ասէ. մի՛ լար։ Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն. և որք բարձեալն տանէին՝ զանգիտաքին. և ասէ, պատանի դու, քեզ ասեմ, արի։ Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր։ Եւ առ կալաւ զամենեսեան, և փառաւոր առնէին զԱստուած և ասէին՝ թէ մարգարէ մեծ յարուցեալ է 'ի միջի մերում. և թէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։ Եւ ել զրոյցս այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա՝ և ընդ ամենայն կողմանս աշխարհին։

[illegible]

Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յովհաննէս. առաքեաց առ տէր և ասէ. դու ես որ գալոցն ես, եթէ այլում

ակն կայցուք։ Եւ եկեալ այրն առ նա ասեն. Յովհաննէս Մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ և ասէ. դո՛ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կայցուք։ Եւ 'ի նմին ժամու բժշկեաց զբազումս 'ի հիւանդութեանց և 'ի հարուածոց և յայսոց չարաց. և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։ Պատասխանի ետ նոցա և ասէ. Երթայք պատմեցէք Յովհաննու զոր տեսէք և լուայք, զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին։ Եւ երանի՛ որ ոչ գայթակղեսցի յիս։

## Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց՝ որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նորա 'ի ցամաք՝ պատահեաց այր մի 'ի քաղաքէն, յորում էին դևք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ, և ոչ 'ի տան բնակեալ, այլ 'ի գերեզմանս։ Եւ տեսեալ զՅի-

տուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո, Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի տանջեր զիս: Քանզի հրաման տայր այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի. զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր 'ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր 'ի դիւէն յանապատ: Եհարց զնա Յիսուս և ասէ. զի՞նչ անուն է քեզ. և նա ասէ. Լէգէոն. զի դևք բազումք մտեալ էին 'ի նա. և աղաչէին զնա, զի մի հրաման տայցէ նոցա երթալ յանդունդս: Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց արօտական 'ի լերինն. և աղաչեցին զնա՝ զի հրաման տացէ նոցա մտանել 'ի նոսա. և հրամայեաց նոցա: Եւ ելեալ դևքն յանէն, մտին 'ի խոզսն. և դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովակն և հեղձաւ: Իբրև տեսին խոզարածքն զեղեալն՝ փախեան. և պատմեցին 'ի քաղաքին և յագարակսն: Եւ իբրև ելին տեսանել

զգործսն, և եկին առ Յիսուս. և գտին զայրն ուստի դևքն ելեալ էին՝ զգեցեալ և զգաստացեալ նստեալ առ ոտսն Յիսուսի, և երկեան։ Պատմեցին նոցա՝ որոց տեսեալ էր, թէ զիարդ փրկեցաւ դիւահարն։ Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն գերգեսացւոց, գնալ ՚ի սահմանաց նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապէին. և նա մտեալ ՚ի նաւ, դարձաւ անդրէն։ Աղաչէր զնա այրն՝ ուստի դևքն ելեալ էին, շրջել ընդ նմա։ Արձակեաց զնա և ասէ. դարձ ՚ի տուն քո, և պատմեա զոր միանգամ՝ արար քեզ Աստուած։ Գնաց ՚ի քաղաքն և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս։

## Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա։ Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս. և նա էր իշխան ժողո-

վերջեանն. անկեալ առ ոտսն Յիսուսի աղաչէր զնա մտանել 'ի տուն նորա: Զի դուստր միամօր էր նորա ամաց իբրև երկոտասանից, և էր մերձ 'ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա: Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան ամաց երկոտասանից. որ 'ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր, որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել: Մատուցեալ յետոյ, մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի նորա, և նոյն ժամայն եկաց բղխումն արեան նորա: Եւ ասէ Յիսուս, ո՞վ է որ մերձեցաւն յիս. իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս և որք ընդ նմա էին. Վարդապետ, ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ: Եւ ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս. քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն: Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ 'ի նմանէ, եկն դողալով և անկեաւ առաջի նորա. եթէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա, և պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն. և եթէ որպէս բժշկեցաւ առժամայն:

Եւ ասէ. քաջալերեաց, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ 'ի խաղաղութիւն:

### Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Եւ մինչ դեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա: Իսկ Յիսուս իբրև լուաւ, պատասխանի ետ նմա և ասէ. մի՛ երկնչիր, միայն հաւատա և կեցցէ: Եւ մտեալ 'ի տունն, ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա: Լային ամենեքեան և կոծէին զնա. և նա ասէ՝ մի՛ լայք. զի չէ մեռեալ, այլ ննջէ: Եւ նոքա ծաղր առնէին զնա. զի գիտէին թէ մեռաւ: Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա, բարբառեցաւ և ասէ. աղջիկ կաց, մանուկ դու: Եւ դարձաւ ոգի նորա և կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմա ուտել: Եւ զարմացան ծնողքն

•••

նորա . և նա պատուիրէր մի ումեք ասել որ ինչ եղեւն :

## Տէրամք Վերաձ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղև 'ի վաղիւն մինչ իջանէին նոքա 'ի լեռնէ անտի, ընդ առաջ եկեւ նմա ժողովուրդ բազում : Եւ ահա այր մի 'ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ . վարդապետ, աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ : Եւ ահա այս հարկանէ 'ի նմա, և յանկարծ գոչէ, և զարկուցանէ և թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ . և հազիւ մեկնի 'ի նմանէ խորտակեալ զնա . և աղաչեցի զաշակերտան քո՝ զի հանցեն զնա, և ոչ կարացին : Պատասխանի ետ Յիսուս և ասէ . ով ազգ անհաւատ և թիւր, մինչև յերբ եղէց ընդ ձեզ . և անսայցեմ ձեզ . մատո այսր զորդին քո : Եւ մինչ դեռ մատչէր, զարկոյց զնա դևն և շարժլեաց : Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն և ետ զնա ցհայրն իւր : Եւ զարմանային

ամենեքեան 'ի վերայ մեծամեծացն Աստուծոյ. և 'ի զարմանալ ամենեցուն 'ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր. դիք դուք 'ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի որդի մարդոյ մատնելոց է 'ի ձեռս մարդկան։

Տէրն Գէր Յիսուս Քրիստոս

Էր հանէր դև մի համր. և եղև յելանել դիւին՝ խօսեցաւ համրըն. և զարմացան ամենայն ժողովուրդքն։ Եւ ոմանք 'ի նոցանէ ասեն. Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։ Եւ այլք փորձէին, և նշան յերկնից խնդրէին 'ի նմանէ։ Իսկ նորա գիտացեալ ըզխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի. և տուն բաժանեալ յանձն՝ կործանի։ Արդ եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիարդ կացցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն՝ թէ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց

հանէ դա զդեւս։ Եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր իւ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեզ դատաւորք։ Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է ՚ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։ Յորժամ հզօր վառեալ պահիցէ զտուն իւր, ՚ի խաղաղութեան են ինչք նորա. բայց եթէ հզօրագոյն քան զնա ՚ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն հանէ, յոր յուսացեալն էր, և զաւար նորա բաշխեսցէ։ Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ։ Յորժամ այսն ելանիցէ ՚ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրև ոչ գտանէ՝ ասէ, դարձայց անդրէն ՚ի տուն իմ ուստի ելի։ Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ։ Յայնժամ երթայ և առնու եօթն այլ այսս՝ չար ևս քան զինքն, և մտանէ բնակէ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։ Եւ եղև մինչդեռ խօսէր զայս, ձայն

Եբարձ կին մի 'ի ժողովրդենէ անտի և ասէ. Երանի՜ է որովայնին որ կրեաց զքեզ, և ստեանցն որ դիեցուցին զքեզ։ Եւ նա ասէ. Նա երանի՜ այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ և պահեն։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս

Էր ուսուցանէր 'ի միում ժողովրդարանացն 'ի շաբաթու։ Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս ութուտասն, և էր կարկամեալ և ոչ կարէր ամենեւին 'ի վեր հայել։ Եւ տեսեալ զնա Յիսուս կոչեաց առ ինքն և ասէ ցնա. կին դու, արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ։ Եւ եդ 'ի վերայ նորա ձեռն. և առժամայն ուղղեցաւ և փառաւոր առնէր զԱստուած։ Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր 'ի շաբաթու բժշկեաց Յիսուս. և ասէ ցժողովուրդն. վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք, և մի յաւուր շաբաթու։ Պա-

տառապանօք եւ նմա տէր եւ առէ . կեղ-
ծաւորք , խրատանչեւր որ 'ի ձեռն
'ի շաբաթու ոչ արձակէ զեզն իւր
կամ զէշ 'ի մսրոյ եւ տանի տայ ջուր.
Իսկ այս դուստր Աբրահամու էր,
զոր կապեաց սատանայ ահաւա-
սիկ ութուտասն ամ, ոչ էր արժան
արձակել 'ի կապանաց անտի 'ի շա-
բաթու ։ Եւ զայս խօսէ ասէր , յա-
մօթ լինէին ամենեքին որ հակառակն
կային նմա ։ Եւ ամենայն ժողովուր-
դըն ուրախ լինէր 'ի վերայ ամենայն
փառաւորութեանցն՝ որ գործէին
'ի նմանէ ։

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ եղեւ 'ի մտանելն նորա 'ի տուն
ուրումն իշխանացն փարիսեցւոց 'ի
շաբաթու ուտել հաց, եւ նոքա սպա-
սէին նմա ։ Եւ ահա այր մի էր առաջ
ջրգողեալ առաջի նորա ։ Պատաս-
խանի ետ Յիսուս եւ ասէ ցօրինաւորս
եւ ցփարիսեցիս՝ եթէ արժան իցէ 'ի
շաբաթու բժշկել . եւ նոքա լուռ ե-
ղեն ։ Եւ բուռն հարեալ զնմանէ՝

բժշկեաց զնա և արձակեաց։ Եւ ասէ ցնոսա. ո՞ր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի 'ի ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու։ Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն։

## ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Էր եղև մինչ երթայր նա յԵրուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ և գալիլեացւոց։ Եւ մինչդեռ մտանէր 'ի գեւղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ, որք կային 'ի հեռաստանէ, բարձին զձայնս և ասեն. Յիսուս վարդապետ, ողորմեաց մեզ։ Եւ իբրև ետես զնոսա՛ ասէ ցնոսա. երթայք ցուցէք զանձինս քահանայից. և եղև իբրև գնացին՛ առժամայն սրբեցան։ Մի ոմն 'ի նոցանէ իբրև ետես եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն, 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած։ Անկաւ առ ոտս նորա 'ի վերայ երեսաց իւրոց, և գոհանայր զնմանէ. և ինքն էր սա-

*մարդոյն ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ . ո՛չ տասն տղայս սրբեցան, իսկ արդ ինունքն ո՞ւր են . զի ոչ գտան դառնալ տալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս ։ Եւ ասէ ցնա . արի՛ գնա, զի հաւատք քո կեցուցին զքեզ ։*

## Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

*Եւ եղև 'ի մտանել նորա յԵրիքով՝ կոյր մի նստէր առ ճանապարհաւն մուրացիկ ։ Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն , հարցանէր թէ զի՞նչ իցէ այն ։ Եւ պատմեցին նմա՝ թէ Յիսուս Նազովրեցի անցանէ ։ Աղաղակեաց և ասէ . Յիսուս որդի Դաւթի , ողորմեա՛ ինձ ։ Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ . և նա ևս առաւել աղաղակէր . որդի Դաւթի , ողորմեա՛ ինձ ։ Զտեղի էառ Յիսուս , և հրամայեաց ածել զնա առ ինքն . և իբրև մերձ եղև առ նա՝ եհարց զնա և ասէ . զի՞նչ կամիս զի արարից քեզ . և նա ասէ . Տէր , զի բացցին*

աչք իմ և տեսից։ Եւ Յիսուս ասէ ցնա․ հայեաց․ հաւատք քո կեցուցին զքեզ։ Եւ առժամայն ետես․ երթայր զհետ նորա և փառաւոր առնէր զԱստուած․ և ամենայն ժողովրդեանն տեսեալ՝ տայր օրհնութիւն Աստուծոյ։

# Ի ՅՈՎՀԱՆՆՈՒ

## ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

Տէր. Պր Յի---- Քրի----

Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց 'ի Գալիլեա ։ Զի ինքն Յիսուս վկայեաց՝ եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի ։ Արդ յորժամ եկն նա 'ի Գալիլեա, ընկալան զնա գալիլեացիքն. զի տեսեալ ևս էր զամենայն նշանսն, զոր արար յԵրուսաղէմ 'ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին 'ի տօնն ։ Եկն դարձեալ 'ի Կանա գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի ։ Եւ անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր 'ի Կափառնաում ։ Նա իբրև լուաւ, եթէ Յիսուս եկեալ է 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա, եկն առ նա, և աղաչէր զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ

էր ՚ի մեռանել։ Ասէ ցնա. եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։ Ասէ ցնա թագաւորազն. տէր, էջ մինչ չեւ մեռեալ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա Յիսուս. երթ որդին քո կենդանի է. և հաւատաց այրն բանին զոր ասաց նմա Յիսուս և գնաց։ Եւ մինչ դեռ ՚ի ջանէր՝ ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա. աւետիս ետուն և ասէին՝ թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում առողջացաւ. և ասեն ցնա. երէկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն։ Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յիսուս, թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր։ Զայս դարձեալ երկրորդ նշանս արար Յիսուս՝ եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլիա։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

ՅԵՏ այսորիկ տօն էր Հրէից. և ել յԵրուսաղէմ։ Եւ էր յԵրուսա-

դէմ 'ի Պրոբատիկէ աւազանին՝ որ
կոչէր եբրայեցերէն Բեթհեզդայ՝
հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր
բազմութիւն յոյժ հիւանդաց, կու-
րաց՝ կաղաց՝ գօսացելոց՝ որ ակն ու-
նէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ
տեառն իջանէր ըստ ժամանակի յա-
ւազանն, և յուզէր զջուրսն. և որ նախ
'ի շարժմանէ ջուրցն իջանէր յաւա-
զանն՝ բժշկէր, որ ունէրն նշան հի-
ւանդութեան։ Եւ անդ էր այր մի, ո-
րոյ երեսուն և ութ ամ էր 'ի հի-
ւանդութեան իւրում. զնա իբրև
ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր, և
գիտաց եթէ բազում ժամանակս են
այնուհետև, ասէ ցնա. կամիս ողջ
լինել։ Պատասխանի ետ նմա հի-
ւանդն. տէր, ոչ զոք ունիմ, թէ
յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ
զիս յաւազանն. և մինչ ես գան-
գաղիմ, այլ ոք քան զիս յառաջա-
գոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս.
արի առ զմահիճս քո և գնա։ Եւ
ողջացաւ այրն. և յարեաւ առ զմա-
հիճս իւր և շրջէր. և էր շաբաթ յա-
ւուրն յայնմիկ։ Ասէին Հրեայքն ցբժ-

ժշկեալն․ շաբաթ է, և ոչ է արժան
քեզ առնուլ զմահճիճս քո։ Պատաս-
խանի ետ նոցա և ասէ․ որ բժըշ-
կեացն զիս, նա ասաց ցիս, առ ըզ-
մահճիճս քո և գնա։ Հարցին զնա և ա-
սեն, ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ, առ
զմահճիճս քո և շրջեաց։ Եւ բժըշ-
կեալն ոչ գիտէր թէ ո՛վ իցէ․ քանզի
Յիսուս խոյս ետ վասն ամբոխին 'ի
տեղւոջէ անտի։ Յետ այսորիկ գը-
տանէ զնա Յիսուս 'ի տաճարին, և
ասէ ցնա․ ահաւասիկ ողջացար․
մի՛ ևս մեղանչեր, զի մի՛ չար ևս ինչ
լինիցի քեզ։ Գնաց այրն և պատ-
մեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր որ
բժշկեացն զիս։ Եւ վասն այնորիկ
հալածէին զՅիսուս Հրեայքն, զի
զայն առնէր 'ի շաբաթու։ Եւ Յի-
սուս պատասխանի ետ նոցա․ Հայր
իմ մինչև ցայժմ գործէ՝ և ես գոր-
ծեմ։ Վասն այնորիկ առաւել խըն-
դրէին Հրեայքն սպանանել զնա, զի
ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ
և հայր իւր կոչէր զԱստուած, և
հաւասար առնէր զանձն Աստուծոյ։

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ մինչ դեռ անցանէր՝ ետես այր մի կոյր 'ի ծնէ . և հարցին ցնա աշակերտքն նորա և ասեն . Ռաբբի, ո՞յր մեղաւ է . սորա՞, թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի : Պատասխանի ետ Յիսուս, ոչ դորա մեղաւ է, և ոչ հօր և մօր իւրոյ, այլ զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ 'ի դմա : Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ գիշեր . յորժամ ոչ ոք կարէ գործել : Մինչ դեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի : Զայս իբրև ասաց, եթուք 'ի գետին . և արար կաւ 'ի թքոյն, և ծեփեաց զկաւն 'ի վերայ աչաց կուրին : Եւ ասէ ցնա . երթ լուա յաւազանին Սիլովամայ որ թարգմանի Առաքեալ . չոգաւ լուացաւ . եկն և տեսանէր : Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն՝ եթէ մուրացիկ էր . ասէին . ո՞չ սա էր որ նստէրն և մուրանայր . կէսքն ասէին նա է . այլքն

տանէին . ոչ՝ այլ նման է նմա . և ինքն տանէր՝ թէ ես եմ։ Ասէին ցնա . իսկ զիարդ բացան աչք քո։ Նա ետ պատասխանի . այր մի՝ որում Յիսուսն անուն, կաւ արար և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս . Երթ 'ի Սիլովամ և լուա . չոգայ լուացայ և տեսանեմ։ Ասեն ցնա . ուր է նա . ասէ ցնոսա . ոչ գիտեմ։

Ածին առ փարիսեցիսն զնա՝ որ երբեմն կոյրն էր . և էր շաբաթ յորժամ զկաւն արար Յիսուս և եբաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն՝ թէ զիարդ տեսանես։ Եւ նա ասէ ցնոսա . կաւ եդ 'ի վերայ աչաց իմոց , և լուացայ և տեսանեմ։ Ասէին ոմանք 'ի փարիսեցւոցն . ոչ է այրն այն յԱստուածոյ՝ զի զշաբաթս ոչ պահէ . կէսքն ասէին . իսկ զիարդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել . և էին հերձուածք 'ի մէջ նոցա։ Ասեն դարձեալ ցկոյրն . դու զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո . և նա ասէ՝ թէ մարգարէ է։ Եւ ոչ հաւատացին Հրեայքն զնմանէ՝ եթէ կոյր էր

և բացաւ, մինչև կոչեցին զծնօղս բացելոյն: Հարցին զնոսա և ասեն. սա է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք՝ թէ կոյր ծնաւ. արդ զիա՞րդ տեսանէ: Պատասխանի ետուն նոցա ծնօղքն նորա և ասեն. գիտեմք՝ զի սա է որդին մեր և զի կոյր ծնաւ. բայց զիա՞րդ այժմ տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ թէ ո՛ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. զդա իսկ հարցէք. ինքնին 'ի չափ հասեալ է՝ ինքն իսկ խօսեսցի վասն իւր: Զայս ասացին ծնօղքն նորա, զի երկնչէին 'ի Հրէիցն. քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ ոք խոստովանեսցի զնա Քրիստոս՝ 'ի բաց կացցէ 'ի ժողովրդենէն: Վասն այնորիկ ասացին ծնօղքն նորա, թէ ինքնին 'ի չափ հասեալ է՝ զնա իսկ հարցէք:

Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր, և ասեն ցնա. տուր փառս Աստուծոյ, մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է: Նա ասէ. թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ՝ զի կոյր էի, և արդ տեսանեմ: Դարձեալ

տանն ցնա. զինչ արար քեզ, զիարդ եբաց զաչս քո։ Պատասխանի ետ նոցա, այժմ ասացի ձեզ և ոչ լուարուք. զի՞ կամիք միւսանգամ լսել. մի թէ և դո՞ւք կամիք աշակերտել նմա։ Նոքա հայհոյեցին զնա և ասեն. դու լիջիր նորա աշակերտ. մեք Մովսէսի աշակերտք եմք. մեք գիտեմք՝ զի ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած. զսա ոչ գիտեմք ուստի իցէ։ Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա. այդ իսկ են սքանչելիք, զի դուք ոչ գիտէք ուստի իցէ, և զիմ՛ զաչս եբաց։ Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ. բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ և զկամս նորա առնիցէ, նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ՚ի ծնէ կոյր ծնելոյ։ Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն, ոչ կարէր առնել ինչ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա. ՚ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին, և դու վարդապետ լինիս մեր. և հանին զնա արտաքս։ Լուաւ Յիսուս՝ եթէ հանին զնա արտաքս. և իբրև եգիտ զնա, ասէ ցնա. դու հաւա-

տա՞ս յՈրդի Աստուծոյ: Նա պա-
տասխանի ետ և ասէ. տէր, ո՞վ է
զի հաւատացից 'ի նա: Ասէ ցնա
Յիսուս. և տեսեր զնա, և որ խօ-
սիդ ընդ քեզ՝ նա է: Եւ նա ասէ.
հաւատամ տէր, և երկիր եպագ նմա: